



9





Մ. ՍԵՐՈՒԲԵԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ

«Առիթի լաւ է գիտեցալ դառն
նճարտութիւնը, քան օրօրաւի
քաղցր ստեղծը»

Ս. Վ. ԲԱՅՆԱՆ



Գ Ա Հ Ի Ր Է
1950

329.14/47.925/ 636

Ս-43

Սերոբյան, Մ.

Հայաստանի անկախութեան
առիթով:

Մ. ՍԵՐՈԲԵԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՃԱՅ-
ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ

«Աւելի լաւ է գիտեցալ դառն
նահարաւորիւնը, քան օտօրակի
բաղը ստեղծը»

Ս. ՎՐԱՑԵԱՆ



Գ Ա Հ Ի Բ Է

1950



Ն Ա Խ Ա Բ Ա Ն

Դիտել եւ դասել իրարու շղթայուած երկու ծայրերն են գործողութեան մը:

Դիտելով կը սկսի մարդ դասելու գործողութեան կարեւնալ հասնելու համար:

Դիտելու գործողութիւնը կրնայ տեղի ունենալ իր մը, առարկայ մը, գործելակերպ մը, ուղղութիւն մը դիտելով մօտէն կամ հեռուէն: Այսպէս միայն կարելի կ'ըլլայ տեսնել դիտուած առարկային ցուցադրած բնականութիւն եւ հեռապատկերին (perspectif) բոլոր նրբութիւնները կամ յոռութիւնները:

Անոնք, որ նպատակ ունին զնահասումի կամ դասողութեան մը հասնելու — պայմանով որ դասելու ձեռնհասութիւն ունենան — պարտաւորուած են խնդրոյ առարկայ նիւրբ դիտել քե՛ մօտէն, եւ քե հեռուէն միանգամայն: Եւ մենք այս ուղղութեան հետեւած ենք այս ամփոփ ուսումնասիրութեան նիւր կազմող խընդիրներուն վերաբերմամբ:

Ամեն դիտող չկրնար դասող մը ըլլալ:

Շատեր կան, որոնք կը դիտեն, միայն տեսած ըլլալու համար: Անոնց համար կարեւորութիւն չունի մօտ ու հեռուէն: Անոնք իրենու խորք քափանցելու կարողութիւնը չունին: Անոնց դիտել ըսածը *աչք մը նետել է միայն՝* ուրիշ ոչինչ: Անոնց այդ դիտելու կերպէն միայն սխալ տպաւորութիւններ, քիւր զնահասումներ կրնան յառաջ գալ: Այ՛ք մը նետելով կիս-կատար ծանօթութիւններ ունենալ, կը նշանակէ քիւրիմացութիւններու զոհը ըլլալ, կը նշանակէ սխալ զտրափարներու,

սխալ դասասաններու, եւ ըսենք, նոյն իսկ սուսերու
սարածիչն ըլլալ :

Դժբաղդաբար մեզ Երջապաստը անհասներու մէջ
այս դասակարգին պատկանող դիտողներ Ե՛ս ունինք :

Պատմական եւ ընկերական խնդիրներու ուսումնա-
սիրութեան մը ձեւաւարկին մէջ իրաւասու եւ ձեւաճա-
միտներու տրուած է դիտելու կարողութեան օգտագոր-
ծումը : Ռոմիսեան դիտուած ո՛րեւէ նիւթ, ըլլալ նկար
թէ գործելակերպ, լծորդուած են կարգ մը հիմնական
պատճառներու — ներհնչումի աղբիւր, ծրագրուած նը-
պատակ — որոնք չեն ներկայացուած, դիտուած առար-
կային կամ գործելակերպին մէջ : Եւ եթէ ներկայաց-
ուած են հարեալեցիօրէն, ներկայացուած են խարդախ-
ուած չափանիւթով : Եւ այդ ներհնչումի աղբիւրի եւ
ծրագրուած նպատակի բացակայութիւնը դիտուած ա-
ռարկային մէջ, հարկադրաբար կը մոլորեցնէ հարե-
ւանցի դիտողը, որ մօտէն դիտելու կարողութենէն զրկը-
ւած է :

Ռամպրան, տասնեւեօթերորդ դարու Հոլանտա-
ցի հռչակաւոր նկարիչը, սովորութիւն ունէր ըսելու,
իր նկարները Ե՛ս մօտէն դիտել ուզողներուն. «նկար
մը շինուած չէ հոտուրսալու համար, իւղին հոսը
առողջաբար չէ՛» :

Ռամպրան իրաւունք ունէր այդպէս արտայայտ-
ուելու, երբ խնդիրը կը դառնար նկար մը դիտելու եւ
դատելու շուրջ, որովհետեւ ինք կը յայտարարէր թէ
«Ես նկարիչ մըն եմ, եւ ոչ ներկարար» :


Բայց երբ խնդիրը կը դառնայ ընկերական կեան-
քի մէջ ապրուած կենդանի նկարները դիտելու եւ դա-
տելու շուրջ քննադատը պարտաւոր է մօտենալ ապրող
նկարին, *հոտուրտալ* զայն, հոգ չէ թէ այդ ներկուած
նկարէն բուրոյ իւղին հոսը վատառողջ եղած ըլլայ :
Եւ մենք այդպէս դիտեցինք մեր շուրջ ապրող եւ մեր
այս վերլուծումներուն նիւթ հայրաքոյող անձերն ու
իրենց գործերը, քանի որ անոնք, ըլլան անհաս թէ կազ-
մակերպութիւն, *հասարակ ներկարարներ էին...* :

Հէսելաբար համարձակութիւնը կ'ունենանք ըսելու
քէ մեր այս քանի մը տողերը մօտէն եւ հեռուէն ուշա-
դրութեամբ դիտուած առարկայի մը մասին կատարուած
վերլուծումներ են:

Եւ այ չենք մտահոգուիր, երբ մեզ հետ մեր ըն-
քերցողներն ալ պիտի առնեն ուսուելու եւ մարտուելու
անյարմար գարեահոտ իւղի մը հոտը, որ զգալի եւ տե-
սանելի կ'ըլլայ խնդրոյ առարկայ կուսակցական գոր-
ծունեութեան մը ամբողջութենէն:

Մ. ՍԵՐՈՒՅԵԱՆ





ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՏԱՐԵՂԱՐՁ

Ա.

Մայիս 28ի անկախութեան յայտարարութեան տօնակատարութիւնը գաղթաշխարհի մէջ ամէն տարի առիթ կուտայ կուսակցական պայքարներու, եւ հատուածական թերթերու օրերով վիճաբանութիւններու, արդուկելու համար, կարծես. իրենց ընթերցողներու միտքը, աչքերը եւ սկանջները միանգամայն:

Այս աարի բարեկամներ, ազդուած այդ տգեղ պայքարէն, սրտցաւ հայու հանգամանքով, խնդրեցին ինչ այս անտեղի ու ազգայնապէս ամօթալի վիճաբանութիւններու մասին յայտնել իմ ազատ եւ անկախ հայու կարծիքս, նկատի ունենալով որ երկար տարիներէ ի վեր խզած եմ իմ կուսակցական կապերս եւ աշխատակցած եմ իմ յօդուածներս հիւրընկալող թերթերու անխտիր, ըլլան անոնք հնչակեան, դաշնակցական, ռամկավար թէ՛ յառաջդիմական: Ես աշխատակցած եմ միմիայն իմ անկախ մարդու կարծիքներս ու համոզումներս հրամցելով ընթերցողներուս: Եւ սակայն գտնուեցան Վ. Մալէգեանի տիպէն չարախօսներ, որոնք զիս իբր դաշնակցական ներկայացուցին, միմիայն երկարատեն «Ազդակ»ի ծրի աշխատակցութեանս համար:

Բարեկամներու այս խնդրանքին գոհացում տալու համար ձեռնարկեցի պատրաստել սոյն ամփոփ ուսումնասիրութիւնս, ձեռքիս տակ գտնուած պատմական աղբիւրներէ օգտուելով:

Կանխաւ ըսեմ, թէ՛ որեւէ խնդրոյ առթիւ կարենալ կարծիք մը յայտնելու, դատաստան մը ընելու համար

պէտք է խնդրոյ առարկայ նիւթին ծագումներուն, դրդապատճառներուն, զայն ծնցնող պարագաներուն մօտենալ, քննել ու վերլուծել զանոնք առանց կանխամտածումի, առանց կուսակցական նկատումներու, եւ յետոյ կարծիք յայտնել ու վճիռ արձակել. առաջնորդուած անոնցմէ հանուած եզրակացութիւններէ: Այս խնդրոյ մասին մենք պիտի հետեւեինք այս ուղղութեան, եւ անոր պիտի մօտենանք այս մեթոտով:

1917ի վերջերը եւ 1918ին սկիզբները երբ Հայաստանի Կառավարութեան կազմութիւնը յայտարարուեցաւ, արտասահմանի մէջ չգտնուեցաւ հայ մը, որուն հոգին մեծ գոհունակութեամբ մը խանդավառուած չըլլար այդ յայտարարութենէն: Եռագոյնը օրուան նորոյթը եղաւ: Ամերիկայէն երբ կը մեկնէի դէպի Պաղտատ, անապատէն որբերը հաւաքելու պաշտօնով, Ամերիկահայուն կողմէ այդ առթիւ ինծի եղած առաջին նուէրը եղաւ մետաքսի վրայ բանուած եռագոյն դրօշ մը: 1917 Դեկտ. 22ին Փարիզի Հայ Տիկնանց Միութիւնը պազար մը սարքած էր ի նպաստ հայ տարագիրներու: Այս առթիւ կը ցուցադրեմ Ամերիկայէն ինծի նուիրուած եռագոյն դրօշը, եւ զայն աճուրդի դնելով՝ անկէ գոյացած 1000 ֆրանքը կը տրամադրեմ Տիկնանց Միութեան բարեսիրական նւպատակին: Երկրորդ անգամ ըլլալով եռագոյն դրօշ մը նուէր կը ստանամ Մուսուլի մէջ հիմնած որբանոցիս սանուհիներէն 1919 Մարտ 3ին. Մուսուլէն դէպի Տէր Զօր մեկնած օրս, եւ զոր մեր կառապանը կը պարզէ իր կառքին վրայ: Բայց երբ Տէր Զօրէն կը մեկնէի Հալէպ. անգլիական իշխանութիւնը թելադրեց ինծի որ դրօշը վար առնեմ կառքին վրայէն, պատճառելով թէ անցնելիք ճամբուս վրայ աշիրէթներու միջեւ կռիւ կայ, եւ այս դրօշը կրնայ թիւրիմացութիւններու տեղի տալ եւ պատճառ ըլլալ անախորժութիւններու, քանի որ աշիրէթի մարդիկ կրակ կը բանան նոյն իսկ անգլիական թանքերու վրայ:

Այնքան խանդավառուած էինք ամէնքս Հայաստանի կառավարութեան կազմութենէն, անկախութեան յայտա-

րարութենէն եւ զայն խորհրդանշող եռագոյնէն: Մենք խանդավառուած էինք ոչ միայն անոր համար որ անկախութեան յայտարարութիւնը կը նկատէինք յաղթանակի փառապսակը տարիներէ ի վեր մեր մղած հակաթուրք յեղափոխական պայքարին, այլ ե՛ւ անոր համար որ կը խորհէինք թէ անկախութիւնը յայտարարուած էր ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԻ ԿԱՄՔՈՎ եւ ռուս կառավարութեան բարեյօժարութեամբ, քանի որ այդ անկախութիւնը կը յայտարարուէր եւ կը սահմանափակուէր Ռուսահայաստանէն մեզի մնացած ամբողջ հողին վրայ:

Մեր ապրած այդ խանդավառութիւնները, սակայն, երկար չտեւեցին: Ժամանակի ընթացքին հետզհետէ իրարու յաջորդող ճշգրիտ տեղեկութիւններ, եւ Հայաստանի մէջն ու շուրջը տիրող կացութեան ու ապրուած հոգեբանութեան մասին հասած բացատրութիւններ, տակաւ ջնջեցին մեր մէջ յոյզի, հպարտանքի եւ խանդավառութեան ամէն զգացում: Եւ մենք առաջին օրէն իսկ զգացումի ու դատողութեան շրջափոխութիւններու ենթարկուած պիտի չըլլայինք, եթէ դիւրութիւնն ունեցած ըլլայինք ճիշդ ժամանակին տեղեկութիւններ քաղելու կովկասի մէկ անկիւնը տեղի ունեցող հայավլաս քաղաքականութեան եւ անոր արդիւնքը եղող ապրուած ողբերգութեան դրուագներուն:

Մեր կրած յուսախափութիւններուն դրդապատճառները կարենալ բացատրելու համար, ստիպուած ենք երթալ դէպի ետ, մինչեւ 1918 Մայիս 25-30, տեսնելու համար, թէ ինչպէս ստեղծուեցաւ, կամ աւելի ճիշդ, թուրքերուն կողմէ սպառնալիքով հայերուս պարտադրուեցաւ Մայիս 28ի անկախութեան յայտարարութեան ԱՎՏԸ:

Երբ Վեհիպ փաշա զինադադարի առաջարկ կը ներկայացնէ Անդրկովկասի Սէյմին, առաջարկը կ'ընդունուի Հայաստանի, Վրաստանի եւ Ատրպէյճանի կողմէ, եւ 1917 Դեկտեմբեր 2-5ին Երզնկայի մէջ կը ստորագրուին, Թուրքիոյ եւ Սէյմին կողմէն զինադադարի պայմանները: Այնուհետեւ թուրքերը 1918 Մարտ 24ին, Տրապիզոնի

մէջ Սէյմի ներկայացուցիչներէն կը պահանջեն, երեք օրուան պայմանաժամով, Պրէսթ-Լիթովսքի դաշնագրին հանաչումը, եւ Կարսի հետ ուրիշ կարգ մը տեղերու յանձնումը իրենց: Թուրքերուն այս պնդումը ցոյց կու տայ, թէ անոնք կ'ընդունին Անդրկովկասեան երկիրներուն ուսս առժամեայ կառավարութեան բաղկացուցիչ մաս կազմած ըլլալը: Իրենց այս առաջին պահանջին գործադրութիւնը պարտադրելէ եւ ընդունել տալէ յետոյ, Թուրքերը 1918 Մայիսին նոր առաջարկ կը ներկայացնեն Սէյմիէ, իրր նախապայման հաշտութեան բանակցութիւններու վերսկսումին: Այդ նոր առաջարկն է, անկախութեան յայտարարութիւն Հայաստանի, Վրաստանի եւ Ասրայիցանի ժողովուրդներու կողմէ:

Թուրքերուն կողմէ այս առաջարկը բերուած պահուն Անդրկովկասի երեք երկիրները շատ լաւ գիտէին, թէ իրենք իրաւունք չունէին անկախութիւն յայտարարելու, համաձայն Բէրլինի առժամեայ կառավարութեան 1917 Յուլիս 3ի յայտարարութեան 5րդ յօդուածին որ կ'ըսէր. «Համազումարը հակառակ է այն բոլոր փորձերուն, որ նպատակ պիտի ունենան ազգային հարցերը լուծել, մինչեւ սահմանադիր ժողով յայտարարական եղանակով. Ռուսաստանից անջատելով անոր առանձինն մասերը»: Այս որոշմնագրին համաձայն, յայտարարական եղանակով ըլլալիք որեւէ անկախութիւն ապօրէն պիտի նկատուէր: Եւ Բէրլինի առժամեայ կառավարութեան յաջորդող Պոլշեւիկ Կառավարութիւնը նոյն սկզբունքը որդեգրեց ազգերու ինքնորոշման հարցին շուրջ, ինչպէս ցոյց կու տայ Սթալինի կողմէ Շահումեանի գրուած նամակը:

Այս ամփոփումը կ'ընենք, միմիայն ցոյց տալու համար երկու պարագաներ. 1. — Թէ Հայաստանի անկախութեան յայտարարութեան ԱՔՏԸ իր ծագումով, հայկական-ազգային յղացում մը չէր, այլ Թուրքերու կողմէ պարտադրանք մը սպառնական, ծրագրուած դաւադրական ծուղակ մը, կ'արենալ Կովկասեան Հայաստանը անջատելու Ռուսիայէն եւ անոր օգնութեանէն, եւ հոն ապաստանած մնացորդ հայութիւնն ալ բնաջնջել. 2. — Թէ

ըլլալիք անկախութեան յայտարարութիւն մը ապօրէն պիտի նկատուէր Ռուսիոյ կողմէ, եւ ուշ կամ կանուխ պէտք պիտի ըլլար անոր քաղաքական-աշխարհագրական սրբագրութեան:

Բ.

Արդէն Թուրքերու կողմէ Հայաստանի անկախութեան պարտադիր պահանջին մէջ կը տեսնէին Երեւանի եւ Թիֆլիսի հայ գարծիչները (որոնց շարքին նաեւ դաշնակցական գործիչները, ըստ վկայութեան Ս. Վրացեանի) դժոխային ծրագրի մը գոյութիւնը: Թուրքերը յարգած չէին իրենց ստորագրած զինադադարի պայմանները, եւ պատերազմը կը շարունակէին հայկական հողի վրայ, ջարդերը վերսկսած եւ Ալեքսանդրաբոլը թուրքերէն գրաւուած էր: Մայիս 23ին (1918) կը տարածայնուի թէ Թուրք բանակը Թիֆլիսի վրայ պիտի քայլէ: Ամէն կողմ խուճապ ու փախուստ: Եւ ահա, այդ արհաւիրքի օրերուն, Թուրքերը վերջին անգամ ըլլալով կը պահանջեն Հայաստանի անկախութեան յայտարարութիւնը երեք օրուան պայմանաժամով: Մայիս 27ին, Հայաստանի բոլոր քաղաքներու նահանգային գիւղացիական համագումարը իր վերջին խօսքը կ'ըսէ.

ԱՆԴՐԿՈՎԿԱՍՐ (ՀԵՏԵՒԱԲԱՐ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԸ) ՊԵՏԲ Է ԿԱՊՈՒԱՆ ԼԻՆՒ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԵՏ ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ ԿԱՊԵՐՈՎ»:

Հայ ժողովուրդի այս որոշումը ինքնին մերժում մըն է թրքական պահանջին՝ Հայաստանի անկախութեան: Եւ արդէն Ս. Վրացեան իր «Անկախ եւ Միացեալ Հայաստան» գրքոյկին մէջ կը գրէ.

«Մինչ Վրացիներն ու Թուրքերը յայտարարել էին իրենց անկախութիւնը, Հայոց Ազգային Խորհուրդը տատանում էր. այսպիսի զարհուրելի պայմաններում անկախութիւնը համարում էր ԴՍՈՆ ՀԵՊՆԱՆՔ: Հայ ժողովուրդի փրկութեան համար ամէնքի աչքը շարունակում էր յառած մնալ հիւսիսին»: Վրացեան իր այդ հրատարակու-

Թեամբ կը յայտարարէ թէ «Մայիս 30ին դեռ Ազգային Խորհուրդը չէ՛րնդունել անկախութիւնը (էջ 45)։ Ընդհակառակը Խորհուրդի այն նիստում, ուր ընդունեց այս «յայտարարութիւն»ը, ծայների ճնշող մեծամասնութեամբ մերժուեց անկախութիւն յայտարարելու առաջարկը» (էջ 45)։

Անկախութեան յայտարարութեան հակառակ Ազգ. Խորհուրդի այս մերժողական կեցուածքը, Ս. Վրացեան կը բացատրէ երկու պատճառներով.

«Նախ, հայ ժողովրդի համար ստեղծւել էր այնպիսի անտանելի կացութիւն, որ անկախ պետութիւն կազմելը դառն հեզնանք միայն կարող էր թուալ։ Երկրի մեծագոյն մասը Տաճիկների ոտքի կոխան էր եղել, ժողովուրդը տնտեսապէս եւ ֆիզիքապէս քայքայուած՝ կա՛մ Վրաստան եւ հիւսիսային Կովկաս էր ապաստանել, եւ կամ թափւել էր այն լղարիկ հողամասը, որ ապագայ Հայաստանի հիմքը պիտի դառնար։ Ամէն տեղ լաց էր, թըշուառութիւն եւ խուճապ։ Ո՞վ սիրտ ունէր այս պայմաններում անկախութեան մասին մտածելու։ Ո՞վ պիտի իրականացնէր եւ պաշտպանէր այդ անկախութիւնը...»

«Հայ մտաւորականի համար, ստեղծուած պայմաններում, ԱՆԿԱԽՈՒԹՒՆԸ ՀԱՒԱՍԱՐ ԷՐ ՏԱՃԻԿ ԲՈՆԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԳԱՐՁԻՆ, ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՆԱՀԱՏԱԿՈՒԹԵԱՆ ՄԻ ՆՈՐ ՇՐՋԱՆԻ (ընդգծումները մեր կողմէ եղած են)։ Եւ դրանով է բացատրուում, որ հայոց Ազգ. Խորհուրդի այն նիստը, ուր քննութեան առնուեց «անկախութիւն»ը. աւելի նման էր ՍԳՍԻՈՐ տան, ուր ննջեցեալ կայ տարածւած» (էջ 45-46)։

Ահա թէ ո՛րպիսի պայմաններու տակ եւ քաղաքական ու հոգեբանական դրութեան մէջ կը գտնուէր Կովկասահայը, երբ թուրքերը 3 օրուան պայմանաժամով Հայաստանի անկախութեան յայտարարութիւնը լսել ու տեսնել պահանջեցին, իրենց սուրբ դրած՝ Հայաստանի ժողովուրդի վիզին։ Եւ Դաշնակցութեան «լիտրոները, հակառակ Մայիս 27ի Հայաստանի քաղաքներու նահանգային գիւղացիական համագումարի որոշումին, թէ Հա-

յաստանը պէտք չէ Ռուսաստանէն բաժնուի, հակառակ Ազգ. Խորհուրդի քաղաքական եւ հոգեբանական ըմբռնումին, թէ հայ ժողովուրդի փրկութիւնը կրնայ ապահովուիլ հիւսիսէն, այսինքն Ռուսաստանէն, թէ անկախութիւն յայտարարել կը նշանակէ տաճիկ բռնապետութեան վերադարձը եւ կը բանայ հայ ժողովուրդի նահատակութեան մի նոր շրջան, Թիֆլիսի մէջ անկախութեան ամբար յայտարարեցին, հակառակ հայ ժողովուրդի եւ հայ Ազգ. Խորհուրդի կամքին, միմիայն զոհացում տալու համար թուրքերու բռնապետական եւ զղուելի պահանջին:

Թէ անկախութեան յայտարարութիւնը եղած է թուրք ճնշումի տակ, եւ հակառակ հայ ժողովուրդի կամքին, յստակօրէն բացատրուած կը գտնենք Անկախ Հայաստանի անդրանիկ Խորհրդարանի անդրանիկ նախագահ Ա. Սահակեանի ճառին հետեւեալ տողերուն մէջ:

«Բաղմակողմանի քննելով, մի կողմից, երկրի ոյժերը եւ այն հանգամանքները, որոնց մէջ գտնուում է հայ ժողովուրդը, եւ միւս կողմից, քաղաքական եւ տնտեսական ստեղծուած դրութիւնը, Հայոց Ազգային Խորհուրդը սեղմեց իր սիրքը. եւ աճողո՞ գիտակցութեամբ որոշեց վերջնականապէս ընդունիլ վերջնագիրը. եւ նանաչել Հայաստանի անկախութիւնը, իրեն յանձնելով պատմութեան անաչառ դատաստանին»:

Արդէն Ա. Խատիսեան իր Հայ Հանրապետութեան պատմութեան մէջ Հայաստանի ստեղծումը կը վերագրէ թուրքերուն: Եւ երբ կը պատմէ էնվէրի եւ իր մէկ տեսակցութիւնը, էնվէր կ'ըսէ իրեն. «նս լուծեցի դժուարին խնդիր մը. ստեղծեցի Հայաստանը, զոհացում տալու համար հայերու ազգային պահանջներուն: Բայց այդ ըրի այնպիսի ծեւով մը, որ չզոհեցի թրքական հողերէ ոչ մէկ թիզ իսկ» (էջ 72): Եթէ էնվէր պաշտօնի գլուխ գտնուած ըլլար Հայաստանի անկախութեան յայտարարութեան եւ անոր յաջորդող օրերուն, իր տեսակցութիւնը պիտի շարունակէր եւ փակէր սա բառերով. «Հայաստանի անկախութիւնը յայտարարեցի 300-350 հազար հայերու կիսակենդան դիակներուն վրայ»:

Վերոյիշեալ դէպքերն ու թուականները անհերքելի-
օրէն ցոյց կուտան թէ Մայիս 28ի Ա.ՔՏԸ թուրքերու դժո-
խային դիւանագիտութեան եւ ջարդարարի հոգեբանու-
թեան մէկ դիւային յաղթանակն էր, առանձնացուած Հա-
յաստանի վրայ եղեռնագործուած:

Հայ ժողովուրդի կամքին եւ հայ Ազգ. Խորհուրդի
նկատողութիւններուն հակառակ, թուրք ճնշումին տակ
կատարուած անկախութեան յայտարարութենէն վերջ,
շատ ժամանակ սպասելու պէտք չմնաց հասարակ հայ
գիւղացիին եւ հայ մտաւորականին կողմէ զգացուած չա-
րագուշակ յռետեսութիւններու իրականացումը տեսնե-
լու համար: Անկախութեան Ա.ՔՏԻ յայտարարութեամբ
Հայաստան մնաց առանձինն, կղզիացուած թուրք բանա-
կի կրունկին տակ, զուրկ արտաքին օգնութեան ամէն
յոյսէ. թուրքերը այդ մեկուսացումին կը սպասէին գոր-
ծադրելու համար հայկական բնաջնջումի իրենց դժոխա-
յին ծրագիրը: Ս. Վրացեան թրքական այս նենգաւոր մը-
տայնութեան գիտակցութիւնը ունի արդէն, քանի որ սա
տողերն ալ կը գրէ. «Թուրք գործիչները կուզենային
հայկական հարցը դարձնել Հայ-Թրքական անմիջական
յարաբերութիւնների առարկայ, վստահ, որ եթէ իրենք
մնան հայերի հետ երես առ երեսի, միշտ էլ միջոցը կը
գտնեն իրենց ուզածը ընդունիլ տալու»:

Թուրքերը եթէ ըստ Խատիսեանի, Հայաստան ստեղ-
ծեցին եւ անկախութեան յայտարարութիւն ընել տուին
հայ գործիչներուն, այս ամէնը ըրին, ո՛չ որպէսզի հայերը
հոն կարենան դարմանել իրենց վէրքերը, լալ իրենց նա-
հատակներուն վրայ, եւ կեանքի պայմաններ ստեղծել
իրենց համար, այլ որպէսզի կարենան ամբողջացնել
1915ի տարագրութիւններով սկսուած հայկական բնաջն-
ջումի եղեռնը, եւ թուրքերուն համար այլեւս հեշտ էր
իրենց նպատակին գործադրութիւնը, որովհետեւ անկա-
խութեան յայտարարութեան թուրք եւ հայ գործիչները
կանխաւ համոզուած էին, թէ բռնի պարտադրուած ան-
կախութեան մը պաշտպանութեան համար Հայաստանի
կը պակսէր բանակ եւ նիւթական ու տնտեսական միջոց-

ներ: Պատահեցաւ անխուսափելին, թուրքերը սկսան շարունակել պատերազմը, ջարդարարի եւ թալանճիի հոգեբանութեամբ, եւ թուրքերուն կողմէ տրուած մահավճիռը գործադրուեցաւ Հայաստանի վրայ. եւ Աղեքսանդրաբոլի ամօթապարտ դաշնագիրը եկաւ փակելու դիակնացած Հայաստանի գերեզմանը:

Որպէսզի չըսուի, թէ Ս. Վրացեան չէր ճանչնար թուրքը, երբ Աղեքսանդրաբոլի դաշնագիրը ստորագրել կը հրամայէր, հոս կը դնենք հատուած մը իր «Հայկական Հանրապետութիւն»էն:

«Դժուար է տալ իրական պատկերը թիւրքերի գործածած աւերի եւ քայքայման: Գիւղացիութեան 38 առ հարիւրը թալանուած էր մինչեւ շապկի կոճակը: Ղարաքիլիսայի եւ Ղշլախի միջեւ նետուած էին 400 դիակներ: Մեծ կիրճում 500 դիակ, հազարաւոր ուրիշներ, զանկեր ու մարդկային ոսկորներ թափուած էին Ալթուն Թախթում: ... Բռնաբարութիւնները կրել են բառի ամենալայն իմաստով զանգուածային բնոյթ. իրրեւ օրինակ՝ ամբողջ Նալբանտ գիւղու, մասնակցել է նաեւ հրամանատարութիւնը, նոյն իսկ դիւրիգիայի բժիշկ Քիամիլ բէյը... իրօք որ այս տեղից թիւրքն եր տեցել» (էջ 167-180):

Ահա ասոնք են Ս. Վրացեանի եւ իր խմբակին նախասիրած բարեկամները, որոնք Հայաստան կը հրաւիրուին ազատութիւն տալու Հայաստանի...:

Այսպէս, 1918 Մայիս 28էն մինչեւ 1920 Դեկտ. 2, Հայաստան ապրած է ողբերգական դրութեան մէջ: Ոչ մէկ չարիք խնայուած է անոր արիւնաքամ ժողովուրդին, եւ թուրքերու պակաս թողածը լրացուցած են Հայ Հանրապետութեան ԱՆԿՍԽ պաշտօնեաներն ու աւազակաբարոյ սրիկաներ:

Վրացեան 1919ի Երեւանի «Յառաջ»ի թիւերուն մէկուն մէջ կը գրէր.

«Տաճիկների գործած բարբարոսութեան պակասը լրացնում են մեր (դաշնակցական) բարբարոսները, գիւղական տգրուկները եւ զանազան աւազակային հակուճիւնների տէր անձինք, շատ տեղեր կառավարութեան պաշտօնեա-

ների աջակցութեամբ, նոյնիսկ յայտնի գործակցութեամբ:
«Գիւղերում ոչ օրէնք կայ, ոչ իշխանութիւն: Գիւղը
բառին բուն նշանակութեամբ հեծում է բախտախնդիր
սրիկաների ձեռքին»:

Նոյնիսկ Հայաստանի մայրաքաղաք Երեւանի տան
պատերուն վրայ փակցուած աւազակային յայտարարու-
թիւններ, ստորագրուած Տէլի Ղազարի եւ նմաններու
կողմէ ամէն օր սարսափի տակ կը պահէին մայրաքա-
ղաքի ժողովուրդը:

Թէ որքան այլասերած եւ անբանացած է անկախ(°)
Հայաստանի բանակին ԱՆԿԿԿ զօրքը, մեզի գաղափար
մը կու տայ այդ մասին բանակին հրամանատար Զօրա-
վար Հախովէրտեանի թիւ 13 հրամանագիրը:

«Դժբախտ ազգաբնակչութիւնը իր զօրքի անկար-
գութիւնից փրկուելու համար պատրաստ է փախչիլ Տաճ-
կաստան, եւ ընդունիլ մահամետականութիւն, միայն թէ
փրկուի զօրքերի ասպատակութիւնից»:

Հայաստան անկախութեան արտին ակամայ եւ բրու-
նադատեալ յայտարարութեան օրէն սկսեալ, եղաւ գե-
րեզման մը, պատերազմի դաշտ մը, եւ զողերու եւ ա-
ւազակներու շահաստան մը: Այդ ցնորական անկախու-
թիւնը հայ ազգին արժեց 300-350 հազար մարդու կո-
րուստ պատերազմի մէջ. ջարդերով եւ հիւանդութիւննե-
րու ու անօթութեան հետեւանքով: Դիակներ անթաղ կը
մնային օրերով նոյնիսկ Երեւանի մէջ. համաձայն ակա-
նատեսներու վկայութեան: Եւ հիւթասպառ հիւանդներէն
շատեր քաշկռտուելով գերեզման կ'երթային իրենց վեր-
ջին շունչը հոն փչելու, որովհետեւ գիտէին թէ, եթէ քա-
ղաքի փողոցներուն մէջ մեռնէին, քանի մը օր վերջ
իրենց ոսկորներուն մէկ մասը միայն պիտի արժանա-
նար թաղումի, մնացորդ մասը կեր եղած ըլլալով շունե-
րու:

Եւ այդ բռնադատուած անկախութեան տեւակա-
նութեան ոչ ոք կը հաւատար հէնց առաջին օրէն: Այս
պարագան ալ մեզի հաղորդողը նորէն Վրացեանն է երբ
կ'ըսէ:

«Բացի դաշնակցականներից — այն էլ ոչ բոլորը — շատ քիչերն էին հաւատում որ հանրապետութիւնը կ'ապրի եւ կ'ամրանայ» (Հայկ. Հանրապետութիւն էջ 173)։

Եւ այդ թերահաւատութիւնը շատ բնական էր ժողովուրդին համար. Ինչ որ ծնունդը չէ հայ ձգտումներու, եւ հայկական իտէալին, դատապարտուած է մեռնելու, գոնէ հայ սրտերու մէջ եւ Հայաստանի հողին վրայ։

Գ.


Երբ Մայիս 28ի արտին հետ կապ ունեցող այս բոլոր քստմնեցուցիչ իրողութիւնները աչքի առջեւ առնենք չենք կրնար չ'ընդվզիլ Մայիս 28ի այսօրուան բանախօսութիւններուն եւ բանախօսներուն դէմ. որոնք կ'ուզեն տարբեր եւ խարդախուած գոյներով ներկայացնել մեզ դէպքերն ու իրողութիւնները շարափոխելով։

Դաշնակցական թերթեր, ինչպէս ամէն տարի, այս տարի ալ յայտարարեցին, թէ Մայիս 28ը ամէնէն շքեղ թուականն է ժամանակակից հայ պատմութեան։ Եւ այս տարի, անկախութեան Ա.Բ.Տ.էն 32 տարի յետոյ, Պէյրութի մէջ օրուան տօնակատարութեան առիթով Պր. Կ. Սասունի յայտարարեց .

«Մայիս 28ը հպարտանքի, ազատութեան եւ վճռականութեան Կոթողն է հայ ազատագրական յեղափոխութեան, որ կը կանգնի խաւար անցեալի մը մէջէն. եւ որ կը պատկանի ձեր բանակին, ազատատենջ հայ ժողովուրդին...: Մայիս 28ը, հրաշքի թուական, որ ժողովուրդի գրկին մէջ, Արարատի փէշերուն կատարուեցաւ։ Հայկական Բազուկներով, մէկ միլիոն բզկտուած եւ զոհուած անշիրիմ հայ հերոսներու սուրբ արեան վրէժը լուծելու վճռականութիւնը ունեցող հայ ազգի կողմէն»։

Սասունիի այս արտայայտութիւնները երկրորդ տըպտգրութիւնն են 1926ին հրատարակուած Դրօսակին «Բացառիկ» թիւին մեզի հրամցուեցած դիտումնաւոր խեղաթիւրումներուն։

Ահա Դրօսակի այդ հատուածը.



«Բայց եւ այնպէս ասպագայ հայ պատմագիրը հիացած է մնալու Դաշնակցութեան անձնուիրութեան, վառ հայրենասիրութեան հայ ժողովուրդի իտէալը մարմնացրնող այն դիւցազններու վրայ, որոնք կամք են ունեցել հայութեան զոհասեզանին դնելու իրենց ողջ կեանքը, եւ որոնք պարզելով «մահ կամ ազատութիւն» հարիւր հազարաւոր զոհերու արեան գնով 1918ի Մայիս 28ին իրականացրին մասամբ հայ աշխատաւոր ժողովուրդի փայփայած գաղափարը, Հայաստանի անկախութիւնը»:

«Հայ ժողովուրդի դարաւոր ստրկութեան մէջ կազմուած նկարագիրն ազնուացնող Դաշնակցութիւնը 1918 թւի ակտով եկաւ ցուցադրելու հայ կեանքի մէջ գերմարդկային զոհողութիւններով առաջացած ժողովրդական ըմբոստացումներու եւ գիտակցութեան յաղթանակը» (էջ 248):

Եւ իբրեւ հայ մարդ, յեղափոխական ոգիով շարուած, առանց կանխակալ կարծիքի պիտի փափաքէի 1918 Մայիս 28ին կատարուած ԱՖՏը տեսնել Պր. Սասունիի կողմէ յարդարուած լուսարծակի լոյսին տակ: Այդպէս միայն պիտի կարենայի հայու եւ յեղափոխականի հետապնդած նպատակիս իրականացումը տեսած ըլլալու բախտին արժանացած ըլլալ: Բայց, աւա՛ղ, մեր վերը նշանակած պատմական տխուր իրողութիւնները եւ թուականները հիմնովին կը հակասեն Պր. Սասունիի եւ Դրօշակի ըմբռնումներուն, որոնք չեն համապատասխաներ տխուր իրականութեան: Եւ այս հակասութեան պատճառը սա է որ կուսակցական միտքը տարուէ տարի գարդարանքի նոր խաւ մը, հրապուրիչ զգեստ մը կը հագցնէ այդ յայտարարութեան արտին, զանի ներկայացնելով, իբր ազատութեան կոթսոյ մը, հայ բանակին ձեռքով շինուած, իբրեւ միլիոնաւոր հայ նահատակներու վրէժի յաղթանակին մէկ արտայայտութիւնը, իբր «հրաշքի թուական մը»: Պատմական իրողութիւններու վրայ փորձուած յոռեփոխութիւններ կամ խեղաթիւրումներ չեն գարմացներ զիս: Մարդիկ, մանաւանդ կուսակցականներ, որքան հեռանան ամօթապարտ հարկադրանքի մը թուա-

կանէն, չբմեղանքի ու արդարացումի իբրեւ միզոց մէկ ճամբայ միայն ունին իրենց առջեւ: Այդ ճամբան է կարելի եղածին չափ շատ բարու ընել գեղեցկացնելու համար պարտադրուած պատկերին տգեղութիւնը, եւ անոր հագցնել շողշողուն բառերով հիւսուած հանդերձանք մը, գաղափարի սկեզոծուած ժանեակներով: Եւ ասի անհրաժեշտ կը դառնայ, երբ ամօթապարտ իրողութիւն մը պիտի ցուցադրուի ամէն տարի իրարու ետեւէ հասնող նոր սերունդներու, որոնք բացարձակապէս անտեղեակ կը մնան երէկի պատմութեան եւ անոր ողբերգական իրադարձութիւններուն:

Վերոյիշեալ ստապատիր եւ հռետորական ճոռումբանութեան բառերով կերտուած շէնքին անհիմնաւորութիւնը ինքնին պարզուած կ'ըլլայ, եթէ անգամ մըն ալ կարդանք Հայաստանի անդրանիկ Սորհրդարանի նախագահ Ա. Սահակեանի ճառին անկախութեան ԱՄՏին վերաբերեալ վերոյիշեալ հատուածը:

Այս անհերքելի իրողութիւններու վրայ հիմնուած, ուրեմն պիտի կրնանք ըսել իրաւամբ, թէ՛

Մայիս 28ին «ազատութեան կոթող» չէ կանգնուած, որովհետեւ հայ ժողովուրդը միահամուռ եւ Ազգ. Սորհուրդը բացարձակապէս հակառակ էին այդ ցնորական կոթողին — անկախութեան արտին, յայտարարութեան:

Մայիս 28ը չէր կրնար «ազատութեան կոթող» եղած ըլլալ, քանի որ ըստ Վրտցեանի վկայութեան, այդ ազատութիւնը «իրականացնելու եւ «պաշտպանելու» կարող ժողովուրդ եւ ոյժ կը պակսէր:

Մայիս 28ը չէր կրնար եղած ըլլալ «բանակին» ձեռքով հոյակերտուած «ազատութեան եւ վճռականութեան կոթող» մը, քանի որ ինչպէս տեսանք, այդպիսի կոթող կերտող զինուորական ոյժը կը պակսէր մեզի, եւ Հախվերտեանի թիւ 13 հրամանագրէն դատելով այդ բանակը անկարգ էր, եւ հրոսակային նպատակներու հետամուտ, որ ժողովուրդը, դժգոհ անոր շահատակութիւններէն, կը նախընտրէր «փախչիլ Տաճկաստան եւ ընդունիլ մահմետականութիւն» հայ զօրքի զուլումէն ազատելու համար:

Մայիս 28ը չէր կրնար «հրաշքի թուական» մը եղած

ըլլալ, քանի որ ինչպէս տեսանք, հայ ժողովուրդը անոր մէջ նախազգաց տեսնել, իրաւամբ եւ առարկայօրէն, թուրք բռնապետական տիրապետութեան վերադարձը Հայաստան եւ «հայ ժողովուրդի նահատակութեան նոր շրջան մը»:

Մայիս 28ը չէր կրնար եղած ըլլալ հայ նահատկներու վրէժի յաղթանակը, քանի որ անոր ապօրէն հայրութիւնը կը պատկանէր թուրքերուն: Ընդհակառակը Մայիս 28ը բացաւ նոր թուական մը, մեզի համար հողային կորուստներու, ջարդի ու թալանի: Այս թուականը արժեց Հայաստանի 300-350 հազար հայերու կորուստը, կարմիր եւ ճերմակ ջարդերու հետեւանքով:

Հետեւաբար Մայիս 28ը հայ նահատակներու վրէժի յաղթանակը չըլլալէ զատ, հարիւր հազարաւոր նոր նահատակներու կեանքն արժեց:

Չմոռնանք որ Մայիս 28ը իր յայտարութեամբ հակահայկական է՝, քանի որ Հայաստանի ամբողջ ժողովուրդը հակառակ էր անոր, քանի որ անիկա թուրք բռնադատութեան մը հետեւանքը եղած էր, եւ ոչ թէ հայկական բաղձանքի ու մտածումի արդիւնք:

Մայիս 28ը 1918ին «սգատուն» մը եղած էր, համաձայն Ս. Վրացեանի վկայութեան, եւ կը մնայ հայուն համար պարզ «սգատուն» մը, երէկ, այսօր եւ վաղը:

Դ.

Տաճկահայ ժամանակակից պատմութեան մէջ ամէնէն դժոխային դերը կատարողը եղաւ Իթթիհատական թուրք կառավարութիւնը: 1909-1920ի պատմութիւնը գրուեցաւ արիւնով ու լեղի արցունքով: Ատանայի ջարդէն մինչեւ Մայիս 28, Իթթիհատական գործիչներ, արիւնի ծարաւի, կառչած կը մնան իրենց հայազինք քաղաքականութեան: Անապատներու երկայնքին հայ տարագիրներու ապրած եղերական կեանքը եւ մահը նկարագրելու ուժը պիտի պակսէր նոյնիսկ դժոխապատում Տանթէի միտքին ու գրիչին: Այդ եզերաբաւտ օրերուն, հալածա-

կան հայր, մահէն խուսափելու բնագղէն տարուած, բրնադատուեցաւ համակերպիլ կատարելու գործեր, զորս պիտի չյօժարէր կատարել եթէ մահը դամոկլեան սուրի կերպարանքով կախուած չըլլար իր գլխուն վրայ: Ա՛լ անցած էին այն բարի օրերը երբ անունի մը տօնախմբութեան առթիւ մարդիկ «անունովդ ապրիս»ի պէս մաղթանքներ կ'ընէին իրենց բարեկամներուն: Այդ զուտ հայկական մաղթանքին նշանակութիւնը պէտք չունի մեկնութեան: Անոր ծագումը կը վերանայ մինչեւ այն օրերը երբ բունի իսլամացումներու հետեւանքով մարդիկ կը հարկադրուէին ուրանալ իրենց քրիստոնէութեան հետ նաեւ իրենց հայկական անունը եւ կոչուիլ Օսման, Ահմէտ կամ Մէհմէտ: «Անունովդ ապրիս» մաղթանքը կը նշանակէ՝ «չբռնադատուիս անունդ փոխել իսլամանալով»:

1915-16ի հայ տարագրութեան օրերուն, գտնուեցան շատ մը հայեր, որոնք իրենց կաշին փրկելու համար կամ ակամայ ու բռնադատուած իսլամացան, եւ կամ իսլամութիւն ձեւացուցին թրքական կեղծ անուն մը առնելով: Եւ այս նորանուն հայերը, ամէն դժուարութեան կուրծք տուած, պայքարեցան դժուարին պարագաներու դէմ, ամէնէն ստորին ու անպատուաբեր պաշտօններու յանձնառու եղան, փրկելու համար խլեակի մը վերածուած իրենց գոյութիւնը:

Բայց երբ պատերազմը վերջացաւ թուրքիոյ պարտութեամբ, անոնք ժամանակը հասած նկատեցին երեւան գալու իրենց հայկական ինքնութեամբ, եւ երէկի դաւանափոխութեան կամ անուանափոխութեան հարկադրուած հայր դէն շարժեց իր թրքական անունը եւ ինքզինք ցուցադրեց իր աւագանի անունով:

Այսպիսի տասնեակ հազարաւորներու շարքերէն հազիւ մատի վրայ համարուող բացառութիւններ պահեցին իրենց ակամայ որդեգրած անունը եւ մնացին թուրք հարէմներու մէջ կամ այլուր:

Մենք չենք մեղադրեր զանոնք, որոնք կենքի պահ պանութեան բնագղէն առաջնորդուած, հարկադրուեցան իրենց անունները փոխել եւ համակերպիլ ստեղծուած

պայմաններուն, բայց կը ծափահարենք անոնք երբ իբր պարկեշտ հայեր ճիշդ ժամանակին հանեցին իրենց վրայէն երէկի աղտոտ շապիկը, ու հանրութեան մէջ մտան իրենց աւազանի անուկովը զրահուած:

Այդ օրերու հարկադրանքներու շարքին կ'արժէ պահ մը կանգ առնել պարագայի մը վրայ որ շատ նմանութիւն ունի Մայիս 28ի Ա.Ք.Տին: Քանի որ այս երկուքին մէջ ալ թուրք կառավարութիւնը իր ծրագիրը պատրաստած էր Արեւելքի եւ Արեւմուտքի հայերը անջատել Ռուսիոյ ուղղակի թէ անուղղակի ազդեցութենէն, կարենալ աւելի համարձակ իր ոճրագործի դերը կատարելու համար:

Այս ակնարկուած պարագան Պոլսոյ Պատրիարքութեան ջնջումին հարցն է:

Անշուշտ ծանօթ է մեր ընթերցողներուն թէ Պոլսոյ հայ Պատրիարքութիւնը օժտուած էր երկու հանգամանքով:

Անիկա իբր ստեղծում Թուրք Սուլթաններու, նախ եղաւ Պոլսոյ հայ ժողովուրդին եւ ժամանակի ընթացքին ընդհանուր թրքահայութեան ներկայացուցիչը Թուրք կառավարութեան առջեւ: Էջմիածին երկար ատեն թրքահայութեան հետ իր յարաբերութիւնները կը պահէր իր կողմէ զրկուած նուիրակներու միջոցով: 1828ի Ռուսօթրքական պատերազմին հետեւանքով Էջմիածնի նուիրակներուն մուտքը Թուրքիա, արգիլուեցաւ կառավարութեան կողմէն, եւ Էջմիածնի Կաթողիկոսին անուան յիշատակութիւնն ալ արգիլուեցաւ Թուրքիոյ հայ եկեղեցիներու մէջ մինչեւ 1846: Մատթէոս Պատրիարք Չուխաճեանի օրով յիշատակութիւնը վերսկսաւ եւ Պատրիարքը նշանակուեցաւ ներկայացուցիչը Էջմիածնի Կաթողիկոսին Թուրքիոյ մէջ:

Այս պատճառով Ռուս դեսպաններ, միշտ յարաբերութիւն ունէին Պոլսոյ Պատրիարքին հետ, իբրեւ Էջմիածնի ներկայացուցիչը: Եղաւ ժամանակ մը, որ Ռուս կառավարութիւնը ուզեց Պատրիարքի անձէն անջատ, Էջմիածնի Կաթողիկոսին համար անկախ փոխանորդ մը

ստեղծել Պոլսոյ մէջ: Բայց Պատրիարքարանը հակառակեցաւ շարունակ ռուսական այդ ծրագրին գործադրութեան:

Իթթիհատական կառավարութիւնը 1916ին, վերջ տուաւ Պոլսոյ Պատրիարքութեան մի միայն թրքահայ ժողովուրդը ղրկելու համար Պատրիարքի անձին մէջ գոյութիւն ունեցող Էջմիածնի Կաթողիկոսի ներկայացուցչի հանգամանքէն, եւ այսպէս վերջ տալու Ռուս դեսպաններու միջամտութեան, թրքահայ գործերուն մէջ, կրօնական պատրուակին տակ: Եւ Պոլսոյ Պատրիարքութեան պաշտօնն ալ յանձնեց Կիլիկիոյ Սահակ Կաթողիկոսին: Սահակ Կաթողիկոս պետական հարկադրանքի տակ ստիպուած էր ընդունիլ այդ նոր պաշտօնը: Եւ երուսաղէմի իր արքայավայրէն շրջաբերականներ կը յղէր մէն կողմ, Կաթողիկոս-Պատրիարքի հանգամանքով: Երբ 1920ին զինքը Դամասկոսէն Սիս առաջնորդեցի, տեսայ իր մօտ Կաթողիկոս-Պատրիարք ստորագրութեամբ շրջաբերականի բազմաթիւ օրինակները: Երբ 1919ին արքայութեան Պատրիարքը վերադարձաւ իր աթոռը, Սահակ Կաթողիկոս երբեք յաւակնութիւնը չունեցաւ պնդելու իր Պատրիարքութեան հանգամանքին վրայ: Ան գիծ մը քաշեց կառավարութեան որոշումին վրայ, եւ քաշուեցաւ իր Կաթողիկոսական վերարկուին մէջ: Բնականաբար, եթէ ազգային մարմիններու որոշումով եւ կամքով, եւ բնականոն ժամանակի մէջ այդպիսի պատրիարքական պաշտօն մը յանձնուած ըլլար իրեն, անիկա տեղի տուող մը չէր եւ չէր ալ վախնար պայքարէ: Պոլսոյ Պատրիարքութիւնը իրեն յանձնուած էր հակառակ ազգին կամքին կամ առանց ազգին կամքին: Եւ ինք այդ պաշտօնը ստանձնած էր, կամ ստանձնած ձեւացուցած էր, հակառակ իր եւ ժողովուրդի կամքին: Ես վստահ եմ, թէ այդ իրեն հարկադրուած պաշտօնը կը տանջէր զինքը: Այնպէս որ երբ բաղձացուած վայրկեանը հասաւ, ոչ միայն ինքնաբերաբար ինքզինքը հրաժարեալ նկատեց իրեն յանձնուած Պոլսոյ Պատրիարքութեան պաշտօնէն, այլ եւ չեղաւ օր մը, որ ուղղակի թէ անուղղակի կերպով ակնարկութիւն

մը ընէր այդ անբաղձալի եւ հարկադրական պարագայի մասին:

Այսպէս կ'ընեն պարկեշտ մարդիկ, ըլլան անհատ թէ ազգային ներկայացուցիչ կամ վարիչ: Բռնադատուած համակերպութենէ վերջ, հրաժարիլ, առանց ամօթ ըզգալու, առանց կառչած մնալու հարկադրուած պաշտօններու կամ տիրոջաններու:

Նմանօրինակ հարկադրանքի մը արդիւնքն եղաւ Մայիս 28ի յայտարարութիւնը, ինչպէս տեսանք ասկէ առաջ մեր ներկայացուցած պատմական փաստերով եւ թուականներով: Վրացեանի վկայութեամբ, թուրք բանակի սպառնալիքին տակ, եւ անոր կողմէ կատարուած բռնի հարկադրանքի տակ, Մայիս 28ի ԱՖՏը ստորագրողները, ստորագրեցին զայն ակամայ, հակառակ հայ ժողովուրդի կամքին, սգաւորներու պէս, մահուան դատապարտուած յուսահատներու պէս: Ես կը հաւատամ. թէ եթէ այս յայտարարութեան ստորագրողները մտիկ ըրած ըլլային հայ ժողովուրդի, հայ շինականին ու մտաւորա, կանին խօսքին ու պնդումին եւ դիմէին դէպի «Ծիւսիս», ոչ միայն ազատուած պիտի ըլլային իրենք բռնի հարկադրանքի մը ամօթէն, այլ եւ շատ մը արիւն, չարիք, ջարդ եւ հողային կորուստներ խնայուած պիտի ըլլային Հայաստանի եւ հայ ժողովուրդին: Այդպէս չըրին սակայն անոնք: Արհամարհեցին ժողովուրդին կամքն ու բուէն, որ «ջախջախիչ մեծամասնութեամբ» կը մերժէր Մայիս 28ի աքտը, եւ այդ մերժումով յանձնառու եղան ամօթապարտ եւ ջախջախիչ պարտութեան մը:

Ընդունինք, թէ սխալիլը մարդկային է ու պիտի մնայ: Գործուած սխալին կապուած մնայն է աններելի: Եւ Իաշնակցական գործիչներու պատասխանատուութիւնը ինծի համար Մայիս 28ի աքտը չէ: Կրնան անոնք սխալած եւ հարկադրուած ըլլալ, քաղաքական նկատումներով: Բայց երբ դէպքերը ցոյց տուին, թէ ժողովուրդի կանխատեսութիւնը իրականացած է դժբախտաբար, եւ երկիրը հիւթասպառած է ջարդերու, պատերազմներու, հիւանդութիւններու, անօթութեան եւ աւարառութիւն-

ներու երեսն, տակաւին այսօր, այդ տղիտաւոր յայտա-
րարութենէն 32 տարի վերջ, աշոր փառաբանանքն ընել,
եւ կեղծ ոսկեզօծումով մը գայն ներկայացնել իբրեւ յաղ-
թանակի կոթող, կամ ազատութեան արշալոյս, — այս
ընելու համար մարդ պէտք եղածէն աւելի բուփե պէտք
է ունեցած ըլլայ:

Ըստ իս, Դաշնակցութեան յեղափոխական անցեալը
պէտք էր հարկադրած ըլլար իր այսօրուան գործիչները.
եւ հասկցնէր իրենց, թէ երբ Հայաստան Խորհրդայնացաւ,
եւ «հիւսիս»ի օգնութեամբ գտաւ իր խաղաղութիւնն ու
ապահովութիւնը, իր վերելքին ճամբան, թուղթի վրայ
բռնի անկախ հռչակուած բայց իրականին մէջ կախակայ-
ուած Հայաստանի Հանրապետութեան վարիչները պէտք
էր մոռացութեան մատնէին իրենց բռնի պարտադրուած
Մայիս 28ը եւ անոր ԱՊՏը, եւ քաշուէին մէկ կողմ, սր-
բելու համար իրենց ճակտէն պարտութեան ամօթը, եւ
թողուլ որ ազգին եւ հայրենիքին կողմէ րնտրուած վար-
չածեւ մը գար սրբագրելու երէկի ոճրաբոյր սխալները,
եւ Մայիս 28ի մեր պարտութեան դատավճիռը: Ես վըս-
տահ եմ, թէ այսպէս պիտի ընէին Չաւարեանի պէս յե-
ղափոխական եւ ազգին ապագայով մտահոգուող յեղա-
փոխական գործիչներ: Որովհետեւ այլեւս գոյութեան
իրաւունք չունի Մայիս 28ը, որ արդիւնքը չէր ազգային-
կամքին ու բաղձանքին, եւ զոր ակամայ ստորագրեցին
անոր պատասխանատու հեղինակները, թուրքին եարա-
ղանք իրենց վիզին վրայ զգալով:

Ընդունիք, թէ իր ծագման մէջ Մայիս 28ը պար-
ծանքի աղբււր մը ըլլալէ աւելի, ցուցարարն է պարտու-
թեան մը անսրբագրելի նախատիւնքին, ընդվզում մը հայ-
ժողովուրդի կամքին դէմ, եւ թուրքին կողմէ սարքուած
դժոխային ծրագրի մը սրկական գործադրութիւնը: Այս
պայմաններու տակ անիկա սգատօնի մը յուշարարն է,
եւ չի կրնար փառատօն մը նկատուիլ հայ ազգին կող-
մէն:

Մայիս 28ը, իբրեւ պատմական ակտ, գոյութեան
իրաւունք չունի ժամանակակից հայ պատմութեան մէջ:

Ասիկա մէկ տարբերակն է անունի այն բռնի եւ ակամայ փոփոխութեան, որուն ենթարկուեցան Վահան մը, Գաբրիէլ մը, եւ եղան առժամաբար Հասան կամ Ահմէտ, եւ որոնք, սակայն, երբ բռնութիւնը դադրեցաւ, վերադարձան իրենց հարազատ ինքնութեան, եւ եղան նորէն Վահան կամ Գաբրիէլ: Ասիկա մէկ տարբերակն է Սահակ Կաթողիկոսին պարտադրուած Պոլսոյ Պատրիարքութեան, ուրկէ հրաժարեցաւ երբ դադրեցաւ այդ պաշտօնը բռնատիրաբար իրեն յանձնող արիւնոտ կամայականութիւնը: Պարագան միեւնոյնն է Մայիս 28ի արտին համար: Անոր հեղինակները Ալեքսանդրաբոլի ամօթապարտ դաշնագրին ստորագրութեան յաջորդօրն իսկ, մանաւանդ անկէ շատ առաջ, պէտք էր որ հրաժարէին անկէ, իրենց ուսերէն թօթուած ըլլալու համար պարտութեան մը կորանքին ճնշիչ ծանրութիւնը, ծախողած հանրապետութեան մը ստեղծած մահերուն, կործանումներուն, իբր ապացոյց խղճահարութեան:

Այս կը պահանջները ծիւնափառ Արարատը, իր գեթութեան բարձունքէն, որ զոհն եղաւ Մայիս 28ի թուրքերէն պարտադրուած այդ անկախութեան արտին:

Ե.

Բռնադատուած անկախութեան այս արտին մէջ զարմանալի պարագան սա է, թէ Դաշնակցական պարագլուխները ինչպէ՞ս, յետոյ, սիրայօժար իւրացուցին այդ ամեթապարտ կորանքը, եւ իբր իրենց կողմէ յաղթականօրէն ձեռք բերուած յաջողութիւն շարունակեցին տօնախմբել:

Երբ կ'ուսումնասիրենք 1875—1890 իրարու յաջորդող եւ կամ միաժամանակ գործող հայ յեղափոխական կազմակերպութիւններու նպատակը բնորոշող հիմնական ծրագիրները, կը տեսնենք թէ անկախութեան գաղափարը երբէք մուտ գտած չէ ո՛չ յեղափոխականներու մտքին, եւ ոչ ալ անոնց կազմած ծրագիրներուն մէջ: Միայն Հնչակեան կուսակցութեան կողմէ յիշուած կայ, Թուրքիա-

Հայաստանի մասին, «Բաղաբանական անկախութիւն» ասու-
թիւնը, շատ անորոշ եւ տարտամ կերպով (ՀՆՁԱԿ. 1887
թիւ 1):

Իսկ գալով Հ. Յ. Դաշնակցութեան հիմնական ծրա-
գրին, ան կ'ըսէ «Թօթափել (Փուրքիոյ) բռնապետական
խայտառակ լուծը, ձեռք բերել ազգերի համերաշխու-
թիւն, աշխատանքի ապահովութիւն, խղճի, խօսքի եւ
համոզումի ազատութիւն...»:

Միանգամ ընդ միշտ ըսենք, թէ հայ յեղափոխական
բոլոր կազմակերպութիւններու միակ ու միակ նպատակն
է եղած Տաճկահայաստանի բարենորոգումներու հարցը,
Այս հարցի հետապնդումի միջոցին, հայ ժողովուրդ, հայ
ազգ. մարմիններ եւ հայ յեղափոխական կազմակերպու-
թիւններ, ամէն անգամ որ առիթը ներկայացած է, յայ-
տարարած են, թէ անջատողական գաղափարներ չեն հե-
տապնդեր:

Հ. Յ. Դաշնակցութեան Թիֆլիսի մէջ գումարած ա-
ռաջին ընդհանուր ժողովը իր որոշումը տուած է, եւ այդ
որոշումն է Տաճկահայաստանի մէջ ձեռք բերել «քաղա-
քական եւ տնտեսական ազատութիւն»: Իր կազմութեան
առաջին տարիներուն եւ մինչեւ 1918 թուական դաշնակ-
ցական գործիչներ, իրենց հրապարակախօսութիւններու
միջոցին ո՛չ միայն չէին արտասաներ «անկախութիւն»
բառը եւ անոր վարդապետութեան գովասանքը. այլ եւ
չէին ընդունիր անկախութիւնը, ՈՐՊԷՍ ՊԱՀԱՆՁ. Դրօշակ,
1893 թիւ 5: Այս թէգը պաշտպանած է նաեւ Վարանդեան,
Դաշնակցութեան վերաբերեալ իր տեսական եւ պատմա-
կան հրատարակութիւններուն մէջ:

1902 Փետրուարին երբ իշխան Սապահէտտինի-
նախածեռնութեամբ Փարիզի մէջ գումարուեցաւ Օսման-
ցի ազատականներու խորհրդակցական ժողովը, Հայ Յե-
ղափոխական կազմակերպութիւնները, Դաշնակցականներն-
ալ միասին, թուրքերու հետ համագործակցութեան իբր-
նախապայման Պերլինի Վեհաժողովի ՅԵՐԴ ԵՅՈՒԼԵԹԸ
դրին մէջտեղ եւ անոր գործադրութիւնը պահան-
ջեցին: Ժողովը վիժեցաւ, եւ Դաշնակցական թերթեր ԱՆ-

ԿԱՐԵՂԻ յայտարարեցին «ՀՈՅ-ԹՐՔԱԿԱՆ ՀԱՄԵՐՍՇՆՈՒ-
ԹԻՒՆ ՄԸ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳԵՏՆԻ ՎՐԱՅ»:

Դաշնակցութիւնը այդ ԱՆԿԱՐԵՂԻՆԵՐԻ թիւնը կը յայ-
տարարէր այն ատեն, երբ իր շարքերուն մէջ ծայն ունէր
տանկահայ տարր, որ իր իսկ մորթին վրայ զգացած էր
թրքական խժոժութիւններն ու զուլումները: Պարագաները
փոխուեցան սակայն 1905ին, երբ Դաշնակցութիւնը յարե-
ցաւ Միջազգային Ընկերվարութեան: Արեւելեան եւ ա-
րեւմտեան հոսանքները իրարու բաղխեցան: Ու վերջա-
պէս 1907 Մայիսին գումարուած Դ. ընդհանուր պատ-
գամաւորական ժողովին մէջ Ռուսահայ տարրը յաղթա-
նակը տարաւ տանկահայ հատուածին վրայ: Եւ այնու-
հետեւ Տանկահայ դատ եւ հայկական հարց նպատակ մը
ըլլալէ աւելի եղաւ հասութաբեր խանութ մը Դաշնակցու-
թեան արուեստականացած ապագային յեղափոխութեան
ծեռք:

Այս ամփոփ վերլուծումէն վերջ թողունք, որ դէպ-
քերն ու իրողութիւնները խօսին:

1. — 1907ին Դաշնակցութիւնը կը համերաշխի Իթ-
թիհատի հետ, եւ 1902ի անկարելիին ԿԱՐԵՂԻ Կ'ընէ
«1907ին» հրատարելով Պերլինի 61րդ յօդուածէն, որուն
գործադրութիւնը յեղափոխական ուղիով ձեռք բերելու
նպատակով կազմուած էր: Եւ իր պաշտօնաթերթով այն
ատեն յայտարարեց, թէ «Պերլինի 61րդ եւ 23րդ յօդ-
ուածները այլեւս կորսնցնում են իրենց գոյութեան իրա-
ւունքը... դառնում են Օսմանեան պետութեան ներքին
խնդիրներ» (Դրօշակ, 1909 թիւ 4):

Եւ այս ազգային պահանջին ուրացումը տեղի կ'ու-
նենար ի գին քանի մը երեսփոխանական աթոռներու
նանութպանի զգուելի հաշիւ...:

Աւելորդ կը նկատենք հոս մանրամասնել այն բոլոր
տխուր եւ կործանարար դէպքերն ու շարժումները որոնց
դերակատարները, հերոսային ինկածութեամբ ուզեցին
նախ Պատրիարքական հեղինակութիւնը խորտակել, տկա-
րացնել Ազգ. երեսփ. ժողովին կազմը, աջ ու ձախ լախտ
եւ ատրճանակ ցոյց տալով, յենած գահին թալաթի մը

եղբայրական ոյժին, եւ երբ Դուրեան Պատրիարք թուրքերէն կը պահանջէր Ատանայի ջարդերուն ծնունդ եղող որբերը, զորս կ'ուզէր կառավարութիւնը դաստիարակել իր հսկողութեան տակ, զանոնք թրքացնելու համար, Դաշնակցութիւնը Իթթիհատի հետ 1909ի վերջերը Սելանիկի մէջ իր կնքած նոր եւ ամօթապարտ համաձայնագրով, կը պաշտպանէր Իթթիհատի անիրաւ եւ ազգամլասս պահանջը, որպէս զի իր շարքայիններէն մին, ընկեր Վահագն, պաշտօն մը ապահովէր Ճէմալ փաշայի հովանաւորութեամբ բացուած Ատանայի Թուրք որբանոցին մէջ: Եւ Դուրեան Պատրիարք կը հրաժարէր:

Կ'արժէ հոս յառաջ բերել 1910ի ԹԱՅՄԸԶի Յունվարի թիւերէն մէկուն մէջ հրատարակուած յօդուածի մը սա տողերը.

«Պատրիարք Դուրեան Սրբազան հրաժարեցաւ ըողորելով: Այս հրաժարականէն հազիւ քանի մը օր անցած էր եւ անհա լրագիրները ծանուցին Դաշնակցութեան եւ ժէժօն Թուրք Դօմիթէին միջեւ համաձայնութեան մը կազմուելիք: Դաշնակցութեան ըրածը բարեպատեհ չէր. ժամանակը անջուշտ գէշ ընտրուած էր: Դաշնակցութիւնը նշաւակուեցաւ բարձի եւ պաշտօնի հետամուտ ըլլալուն համար, փոխանակ ջարդուածներուն համար արդարութիւն պահանջելու»:

ԹԱՅՄԸԶի այս դատաստանէն վերջ, ալ չենք զարմանար, երբ Թուրք Երեսփ. Ժողովին մէջ Իթթիլափական երեսփոխան մը, նկատի ունենալով Դաշնակցութեան ապրած խանութպանութիւնը, եւ հայ ազգային իրաւունքները իրենց անհատական եւ կուսակցական շահերուն համար ծախելու պատրաստակամութիւնը, կրցաւ Դաշնակցական երեսփոխաններու երեսին «Տալխալ ուխներ» պոռալ:

Եւ Դաշնակցութեան այս շահապաշտ քաղաքականութիւնը, դիմակաւորուած ազգային շահերու պաշտպանութեան կեղծիքով, կը շարունակէ իր զիկզակ գնացքմերթ ծախս, մերթ աջ խոստումներով ու սայթաքումներով. ամէն քայլափոխի իր հետ պտտցնելով իր հանգանակիչի տպագիր, պատրաստ առիթը շահագործելու, առանց

խտիր դնելու միջոցներու մէջ: Եւ ան, Դաշնակցութիւնը, իր շահապաշտի այս հոգեբանութեամբ անգամ մըն ալ հաստատեց Ս. Պարթեւեանի խօսքը, թէ «խղմմսանքի նամբան usահոսն է» իրեն համար: Այս պարագան շատ լաւ ըմբռնած էին Ռուսահայերէն շատեր, այնպէս որ երբ 1913ին Ռուսաստան գացած էի շատերու, ինչպէս նաեւ Ա. Ահարոնեանի (Ժընէյ) եւ Ս. Զաւարեանի (Պոլիս) խնդրանօր, հայ կուսակցութիւններու միջեւ համագործակցութիւն մը ստեղծելու համար, եւ հանդիպեցայ Դաշնակցութեան մերժումին, պատուական հայ եւ քանաստեղծ Յովհաննէս Թումանեան, այդ մերժումին պատճառ ցոյց տուաւ ինծի Դաշնակցական պետերէ ոմանց ապրելու անհրաժեշտ պէտքը. «Համաձայնութեան մը պարագային, ըսաւ Թումանեան, կուսակցութիւններ պէտք է հաշիւ սան իրարու, ըլլայ նիւրական-դրամական թէ բարոյական: Եւ Դաշնակցութեան գործին չգար հաշիւ սալ»: Եւ այդ օրէն իրարու յաջորդող արիւննոտ պատահարներու հետեւանքով կատարուած հանգանակութիւններուն Դաշնակցութիւնը չուզեց տալ իր հաշիւները. . . : Սանութպանի մտայնութիւն հոս ալ ազգանուէր յեղափոխականի դիմակին տակ. . . :

1909ին Սելանիկի մէջ Իթթիհատի հետ ստորագրած ազգադաւ համաձայնութեամբ, դաշնակցութիւնը դաւաճանեց ազգային իշխանութեան եւ ազգային նուիրական շահերուն դէմ, ազգէն գաղտնի, ազգին կամփին հակառակ, բայց ազգին անուցով այդ տեսակ ծանր պատասխանատուութիւն հրաւիրող համաձայնութիւն մը կնքելով Իթթիհատի հետ*, 1907ին հայկական դատին նուիրուած հայկական յեղափոխականութիւնը Դաշնակցութեան ձեռքով դուրս կը հանուէր իր ազգայնական կազմակերպութեան բժոժէն, եւ մասնաւորապէս այդ հատուածին ձեռքին մէջ կը ԿՈՒՍՍԱԿՅՍԱԿԱՆԱՆՍՐ, հայկական հարցը իբր

* Այս մասին տես մեր «Հայկական Մղձաւանջը» ուր երկար խօսած ենք այս խնդիրներու շուրջ:

սանդուխ գործածելով փառքի ու շահու հասնելու համար: Այսպէս էր որ Դաշնակցութիւնը, հրաժարած իր կազմութեան հիմ ծառայող եւ ազգային դատին նուիրուած Յեղափոխական նպատակէն, որ էր թօթափել թրքական «բռնապետական խայսառակ լուծը», եւ ազգին արիւնոտ կռնակին վրայ բացաւ իր փերեզակի խանութը; անով իր կուսակցական շահերը ապահովելու համար միայն: Եւ այդ ազգամլաս գործունէութիւնը անընդհատօրէն կը շարունակէ ցարդ:

Կուսակցական-հատուածական այս շահապաշտ հոգեբանութենէն մէկ անգամ միայն շեղում մը ունեցաւ Դաշնակցութիւնը: Երբ Իթթիհատի հայաջինջ քաղաքաքականութիւնը սկսաւ ամառաւաք երեւան գալ, երբ Ազգ. Պատրիարքարանը 1912ին հայկական բարենորոգումներու հարցը մէջտեղ դրաւ, եւ զայն հետապնդելու գործը յանձնեց Վեհ. Կաթողիկոսին, որ այս խնդրոյ առթիւ արդէն դիմում մը կատարած էր Ջարին, երբ վերջապէս Դաշնակցութիւնը Վարանդեանի բերնով հանեցաւ յայտարարել, թէ «մեմք մեղանչել ենք» Իթթահատի վստահելով եւ գործակցելով, ստիպուեցաւ վերադառնալ իր հայկական եւ յեղափոխական նպատակին, եւ Պերլինի Յըրդյօդուածի գործադրութիւնը հետապնդող Ազգ. Պատրիարքարանի եւ անոր օժանդակող ազատական եւ յեղափոխական միւս հատուածներուն հետ համագործակցեցաւ, զուտ Հայկական-Ազգային գետնի վրայ: Ազգային համագործակցութեան ճամբուն վրայ Դաշնակցութեան կողմէ առնուած եւ հայ յեղափոխական կազմակերպութեան մը վայել այս ընթացքը վերջինը եղաւ:

9.

Ինչպէս ըսինք 1912ին, Պոլսոյ մէջ տեղի ունեցող Հայկ. Բարենորոգումներու առթիւ կատարուած պաշտօնական աշխատութիւններուն մասնակցեցաւ Դաշնակցութիւնը: Այս մասնակցութիւնը Իթթիհատի կողմէ բրէտական յանցանք մը նկատուեցաւ: Որովհետեւ 1909ին Դաշ-

նակցութիւնը, ուրացած ազգ ու հայրենիք, Սելանիկի մէջ Իթթիհատի հետ կը ստորագրէր նոր համաձայնական պայմանագրութիւն մը, որուն առաջին յօդուածը կ'ըսէր. «ոչ մեկ ջանք, ոչ մեկ զոհողութիւն պիտի խնայուի ամուր հիմերու վրայ հաստատելու համար ամբողջական սահմանադրութիւնը, ընդհանուր ձուլումը եւ միաբան գործակցութիւնը»:

Իթթիհատի համար Թուրքիոյ ներքին խնդիրներու պատրուակով Եւրոպական միջամտութիւնը դադարեցնելու երկու ճամբայ միայն կար: 1.— Այլատարր ցեղերն ու ազգութիւնները ձուլել թուրքերու մէջ, 2.— Հակառակ պարագային, բնաջնջել զանոնք զանգուածային ջարդերով: Դաշնակցութիւնը Սելանիկի այդ խորհրդակցական ժողոտին մէջ իւրացուցած է Իթթիհատական այդ երկու սկզբունքներն ալ, խոստանալով, առաջին յօդուածով ամէն ջանք թափել եւ ամէն զոհողութիւնը յանձն առնել իրականացնելու համար այլատարր ցեղերու, ընդ որս եւ հայերու ձուլումը, այսինքն թրքացումը: Իսկ հինգերորդ յօդուածով դաշնակցութիւնը Ատանայի ջարդերը կ'արդարացնէր, զանոնք «արեան տուր» նկատելով եւ ընդունելով: Սելանիկի մէջ Իթթիհատի հետ դաշինք կնքող եւ ստորագրող Դաշնակցութիւնը մեր ճանչցած Հ. Յ. Դաշնակցութիւնը չէ այլեւս: Չէ՛ այն յեղափոխական կազմակերպութիւնը, որուն հիմնական նպատակն էր եղած «քորափել քրեական խայտառակ լուծը»: Սելանիկի մէջ դաշինք ստորագրողը չէ՛ այն Հ. Յ. Դաշնակցութիւնը, որ Սերոբներու եւ Անդրանիկներու ղեկավարութեամբ հերոսային պայքարներ մղեց Սասնոյ լեռներուն գիրկը եւ Մշոյ դաշտին մէջ: Սելանիկի մէջ Իթթիհատի հետ դաշինք կնքող կուսակցութիւնն է «ՕՍՄ. ԲՈՄԻԹԷԻ ԴԱՇՆԱԿՅՈՒԹԻՒՆ»-ը: Որովհետեւ այդ ժողովի նիստերու միջոցին Հ. Յ. Դաշնակցութիւնը ներած է ինքզինքին շատ թեթեւութեամբ վերաբերուիլ իր անցեալին հետ, եւ ձուլումի առաջին օրինակը ինք անձամբ տուած է, հրաժարելով իր նպատակէն ու անցեալէն, եւ թողլով որ ընկեր Թալէաթ թլփատէ Հ. Յ. Դաշնակցութիւնը, եւ զանի

ներկայացնէ, իր նոր անունով «Դաշնակցութիւն Օսմ. Բոսիթի» (*):

Սելանիկի մէջ թլփատուած Դաշնակցութենէն «ամէն ջանք, ամէն զոհողութիւն» պահանջելու իրաւունք ունէր ուրեմն, Իթթիհատը: Եւ այդ իրաւունքին յենելով էր, որ Իթթիհատ 1914 Յուլիսին Կարին ղրկեց թալաթատիպ ոճրագործ եւ Իթթիհատի կարկառուն դէմքերէն Պէհա-էտտին Շաքիրն ու Նահին առաջարկելու համար Կար-նոյ մէջ գումարուող Դաշնակցութեան Լ. ընդհանուր պատ-գամաւորական ժողովի ներկայացուցիչներուն «աշխատիլ Կովկասահայերը ապստամբեցնել Ռուսիոյ դէմ»:

Այս անգամ ալ սակայն, Դաշնակցութիւնը իրերու եւ պարագաներու բերմամբ, հարկադրուած էր դրժել իր խոստումը, եւ Սելանիկի մէջ կնքած համաձայնութեան իր ոտորագրութիւնը: Եւ այդ դրժումը անոր համար, որ ո՛չ թէ բարեկամ էր Ռուսիոյ, այլ անոր համար, որ Կովկասի փոխարքայ Վորոնձով Տաչքով Դաշնակցութեան քթին անցուցած էր ոսկիէ կարթը, եւ հոն պիւրօական խմորումները սկսած էին արդէն: Այնպէս, որ եթէ նոյն իսկ Դաշնակցութեան Կարնոյ Պատգամաւորական ժողովը ուզէր ընդառաջ երթալ Պէհաէտտին Շաքիրի պահանջին, անկարող էր այդ բանը ընելու, քանի որ Թիֆլիսի մէջ Պիւրօի անդամացու դաշնակցականներ տարբեր յանձնա-ռութիւններու լծուած էին, այդ յանձնառութիւններուն մէջ տեսնելով շահու եւ դիրքի անսպառ աղբիւրներ: Եւ քիչ ժամանակ վերջ, Կովկասեան ճակատի վրայ հայ կա-մաւորական շարժումը Դաշնակցութեան առջեւ բացաւ, վսկայէս Ամերիկեան հայ գաղութին ձեռքով, Գոլորատօի սսկի դուռերը: Եւ իր անցեալը ուրացող Դաշնակցու-

(*) Հոս աւելորդ չեմք համարեւ մասնանցելու, քե Գ. Լագեան, Սելանիկի մեջ Իրքիհասի եւ Դաւեակցութեան ստո-րագրած այդ դաւեակգիրը զանց բրած է դեմ իր «Հայաստան եւ Հայ Դասը» գրքին մեջ, Ընթերցողը կրնայ գուշակել քե ինչո՞ւ:

Թիւնը իր որդեգրած նոր ուղղութեամբ շահագործեց ամէն առիթ կուսակցական սնտուկը պարարտացնելու համար, եւ երբ առիթը պակսեցաւ ինք ստեղծեց առիթներ ազգ եւ հայրենիք շահագործելու նպատակէն առաջնորդուած: Ամերիկահայ Պատմութեան, 1914-1918 շրջանը, մանաւանդ անսպառ նիւթեր ունի իբր փաստ Դաշնակցութեան կողմէ կատարուած շահագործումներու, յանուն ազգային դատին եւ հայկական տառապագին ողբերգութեան: Մենք անոնցմէ օրինակ մը միայն պիտի տանք:

1916 Մարտ 26ին Լա Կազէր sp Լօզանի մէջ Պոլսէն դրկուած յօդուած մը հրատարակուեցաւ: Յօդուածագիրը կ'ըսէ, թէ 1914 Մարտ 17ին Չարը յայտարարութիւն մը ուղղած է Թուրքիոյ հայերուն դանոնք յորդորելով ապստամբիլ Թուրքիոյ դէմ, ի վարձ այդ ապստամբութեան ազատութիւն խոստանալով հայերուն:

Լօզանի թերթին տուած թուականը — 1914 Մարտ 17 — առասպելական րլլալու առտիճան անճիշդ էր: Դանի որ Եւրոպական պատերազմը սկսաւ 1914 Յուլիս 28ին, իսկ Թուրքիա պատերազմի մտաւ 1914 Նոյ. 3ին: Թուրքիոյ Արտաքին Գործոց Նախարարը Սալիլ Պէյի բերնով խօսելով այդ թուականը դրաւ 1914 Սեպտ. 14ին, յայտարարելու համար, թէ Չարական այդ կոչն էր. որ հարկադրեց Օսմ. Կառավարութիւնը դիմելու հայերու դէմ 1915ի զսպողական ցախզգուճութիւններուն, արսորի, տեղահանութեան եւ զանգուածային կոտորածներու: Աւելորդ է ըսել, թէ 1914 հոկտ. 9ին Պոլսոյ Պատրիարքարանի Իզգ. Վարչական Ժողովը պաշտօնապէս հերքեց այդ լուրին ստուգութիւնը: Միեւնոյնը ըրաւ նաեւ Պոլսոյ Ռուսական Դեսպանատունը:

Տումերկ, ընդունելով հանդերձ, թէ այդ սուտը շինուած է ժընէվի մէջ, անոր հայրութիւնը կը վերագրէր Թուրքերուն կամ անոնց բարեկամներուն: Ժամանակին մենք արդէն գրած ենք, թէ Տումերկ սխալած էր իր այդ ենթադրութեան մէջ. թէ այդ սուտին հեղինակները եղած են Դաշնակցականները:

1914ի վերջերը իմ նախածեռնութեամբս հազիւ թէ

Ամերիկայի մէջ կազմուած էր Միջկուսակցական Մարմինը, եւ սկսած էր բանակցիլ Ազգ. Առաջնորդարանի հետ ստեղծելու համար «Ազգ. Պաշտպանութեան Դոմիթէ»-ն, Դաշնակցական ներկայացուցիչներ մեր մէկ ժողովին մէջ լրջօրէն յայտարարեցին, թէ Կովկասէն եկած կարեւոր Դաշնակցական մը, վաւերագրեր բերած է իրեն հետ, հաստատող, թէ Դաշնա ցութիւնը շնորհիւ իր կատարած դիւանագիտական յարաբերութիւններուն, յաջողած է Ռուս կառավարութեան պաշտօնական խոստումը ձեռք բերել հայկական ազատութեան մասին: Ժողովը, սակայն, երբեք պատեհութիւնը չունեցաւ տեսնելու այդ վաւերագրերը, որոնք ապահովաբար կեղծ էին կամ գոյութիւն չունէին:

Եւ այդ սուտը, իբր ճշմարտութիւն կը տարածուէր Ամերիկայի մէկ ծայրէն միւսը, շարքայիններու միջոցով: Որովհետեւ սուտը շինուած էր տարածելու եւ շահագործելու համար: Հայերուն ազատութեան պաշտօնական խոստումը(?) ձեռք բերող ամենակարող Դաշնակցութիւնը, այս ուղիով եւ իր կազմած Պիւրօով, կ'ուզէր ինքզինքը ներկայացնել իբր ազգային փրկութեան միակ ազդակը, միակ խարիսխը: Պէտք էր դրամները զրկուէին Պիւրօին, ի՞նչ պէտք հաշիւի կամ համարատուութեան: Պէտք էր ամէն գնով Դաշնակցութիւնը դառնար ազգային փրկութեան խորհրդանշանը, պէտք էր որ Դաշնակցութիւնը դրամ հաւաքէր, եւ այդ նպատակին հասնելու համար ներելի էր անոր սուտ խօսիլ Վորոնցով Տաշքովի անունով, Ջարին անունով, սուտ խօսիլ ազգին եւ կաթողիկոսին անունով:

Բայց խնդիրը ասով չի վերջանար:

Թիֆլիսի մէջ Պիւրօն կը կազմուի. եւ ահա երեք ստորագրութեամբ Պիւրոյական շրջաբերական մը կը զրկուի Կովկասի հայաշատ կեդրոնները: Սոյն շրջաբերականով երեք պիւրոյականներ իրենց ստորագրութեան տակ հայկական ինքնավարութեան Ռուսական խոստումը կը յայտարարեն, եւ այդ յայտարարութեան կը միացնեն կամաւորներու, եւ մանաւանդ ԴՐԱՄՄ պահանջը: «Մի

քիչ փող»։ Սոյն շրջաբերականը ուշադրութիւնը կը գրաւէ Էջմիածնի, եւ Դէորգ Կաթողիկոս հրահանգ կու տայ Մեսրոպ Եպիսկոպոսի պաշտօնական նամակով մը Պիւրօէն պահանջել այդ շրջաբերականով յիշատակուած կառավարական պաշտօնաթուղթը։ Պիւրօն կը շփոթի, մէկ կողմէն Կաթողիկոսին կը պատասխանէր թէ որպէս զի վաւերագիրը չկորսուի, ստիպուած են իրենց կողմէ ընտրուած վստահելի մէկու մը ձեռքով դրկել, եւ միւս կողմէն կը սկսին կրցածնուն չափ հաւաքել հոս ու հոն դրկուած իրենց շրջաբերականին օրինակները։ Եւ ահա օրին մէկը Պիւրօի վստահելին, Դաշնակցական վարժապետը, Էջմիածին կը ներկայանայ հետեւեալ յայտարարութիւնը ընելու. «Դժբախտաբար եղեկառւին մեզ քիչ մը հարբած րլլալով, քնացած պահուս գրպանէս գողցան Պիւրօն ինձի յանձնուած եւ Վեհ. Կարողիկոսին տուելիք կառավարական պատճառաբանողքը։ Դաշնակցական վարժապետի մը կողմէ կարկտուած այս շնական սուտը չկրնար խնդիրը փակել։ Էջմիածնի կողմէ քննութիւնները յառաջ կը տարուին, դուռ կը բացուի պաշտօնական թղթակցութիւններու, եւ Էջմիածին դրապէս եւ բացարձակապէս կը համոզուի, թէ այդ կոտորաւոր սուտը ստեղծուած է Դաշնակցութեան կողմէ. ազգային դիմակի տակ, միմիայն շահագործումի նպատակով։ Եւ Դաշնակցութիւնը հասաւ իր նպատակին. այդ սուտը չափազանց սուղ ծախսուեցաւ Ամերիկահայ շուկային վրայ, եւ պարկեշտ Թրքահայ շարքայիններ նոյն իսկ իրենց տարիներէ ի վեր խնայած սէնթը նուիրեցին իրենց կազմակերպութեան Ամերիկայի վարիչներուն, որոնք այդ միջոցին Թիֆլիզի մէջ կազմուած Պիւրօի եւ Զինուորական Մարմինին կողմէ քանսիւսարութեան պաշտօնը ստանձնած էին։

Թէ ազգային դատ եւ հայկական հարց Դաշնակցութեան համար դադրած էին նպատակ ըլլալէ, եւ եղած շահագործումի աղբիւր, հոս կը դնենք Ամերիկայէն 1915ին Կովկասի ճակատ, կամաւոր զացող երուանդ Փալանճեանի Ֆիլատէլֆիոյ Դաշնակցական Մասնաճիւղի Ատենապետ Տ. Տապաղեանի գրած նամակին սա տողերը.

«Ազգ. Պիւրօն գոյութիւն ունի, բայց ան արդէն խաղալիք է դարձեր Զինուորական Մարմինի ձեռք, որ գրեթէ առ հասարակ դաշնակցականներէ բաղկացած է: Գործի գլուխ մարդիկ բոլորն ալ Ռուսահայեր են, եւ այն ալ ամբողջութեամբ կեղծ, բոլորը փողոցի անօթի թափառող մարդիկ, լաւ ռոճիկներով գործու գլուխ անցած, Տանկահայ դատը կը շահագործեն»:

Անցողաբար ըսենք, թէ Պիւրօի զեղծումներու շուրջ շրջան ընող տարածայնութենէն առթուած 1916 Յունւի. 14ին Ազգ. Պաշտպանութեան Միութեան անունով դիմում կատարեցի Ազգ. Պատուիրակութեան Նախագահ Պօղոս Նուպարի, Պիւրօի գործելակերպի մասին: Նուպար իր 23 թուական հեռագրով կը հաստատէր Կովկաս ապաստանած թրքահայերու օգնութեան գործին մէջ Պիւրօի գործած դրամական-մատակարարական զեղծումները: Միեւնոյն խնդրոյ շուրջ Վեհ. Կաթողիկոսին ըրած մեր դիմումին ի պատասխան, Տիրայր Վարդապետ կը բաւականանար միայն գրելով թէ, «Պիւրօն չվայելեր Կաթողիկոսին հովանաւորութիւնը»: Եւ երբ Վահրամ Գրիգորեան, Ռամկավար, Կովկասէն վերադարձին այդ զեղծումներու ջուրջ իր քաղած տեղեկութիւնները հաղորդեց մեր ժողովին, Ազգ. Պաշտ. Միութիւնը իր 1916 Մայիս 4ի ժողովին մէջ միածայնութեամբ զիս իր կողմէն Պատուիակ նշանակեց Փեթրոկրատի մէջ գումարուելիք «Հայ Ազգ. Ներկայացուցչական ժողովին»: Բայց ես կարգ մը պատճառներով չկրցի ճամբորդել. ներկայ գտնուելու համար այդ ժողովին:

Այս պարագան ալ կուգայ հաստատել մեր այն համոզումը, թէ Սելանիկի մէջ թլփատուած եւ Օսմ. Գոմիթէի մէջ ձուլուած Դաշնակցութիւնը, 1907էն ի վեր, այսինքն Իթթիհատի հետ իր համագործակցութենէն ի վեր, մէկ նպատակ ունեցած է, շահագործել հայկական դատը, հայու արիւնն ու տառապանքը, ի նպաստ Դաշնակցութեան, եւ այդ նպատակին հասնելու միջոց ընտրած է պայքարը հայ Պտտրիարքութեան եւ Կաթողիկոսութեան դէմ, տիրանալ ինչ միջոցներով ալ որ ըլլայ, հայ եկեղե-

նօրէն միութիւններ կազմեն Թուրքիոյ պաշտպանութեան
սակ (*):

Աղէքսանդրաբոլի այն դաշնագիրը, որ մեր ժամա-
նակակից պատմութեան ամէնէն ամօթապարտ եւ ամէ-
նէն սեւ էջը կը կազմէ, տեղի պիտի չունենար եթէ Հա-
յաստանի հանրապետութեան Դաշնակցական ղեկավար-
ները մտահոգուած ըլլային: արիւնաքամ հայ ժողովուրդի
ընդհանուր շահերով: Անոնց համար, սակայն, ազգային
շահերը չափազանց երկրորդական, երրորդական աստի-
ճանի վրայ կը գտնուէին, եւ անոնք աթոռակալութեան
նիւանդութեան վարակուած էին զարշէլիօրէն:

Ս. Վրացեան Հայրենիք ամսագրի 1923 Նոյեմբերի
թիւին մէջ երբ կը խօսի 1920 Հոկտեմբերին Պոլշէվիկ
Ռուսիոյ ներկայացուցիչ Լըզրանի հետ կատարուած բա-
նակցութիւններու մասին, կը գրէ.

«Նա առաջարկում էր անմիջապէս յետ կանչել մեր
պատուիրակութիւնը Ալեքսանդրապոլից. խզել ամէն յա-
րաբերութիւն տանիկների հետ, ռուսական զօրք մտցնել
Հայաստան:

«Նա մեղադրում էր Հ. Օհանջանեանի եւ Ռ. Տէր
Մինասեանին, որոնք ժամանակին չէին ընդունել իր
պայմանները, եւ դրանով պատճառ են դարձել որ տա-
նիկները գրաւեն Կարսն ու Ալեքսանդրապոլը:

«Լըզրանը հաւաստիացնում էր, թէ տանիկները
դուրս չեն գայ ռուս զօրքի դէմ:

«Տանիկներին պէտք է դնել կատարուած փաստի

(*) Հայաստանի Խորհրդայնացումէն յետոյ, Պոլշէվիկ
կառավարութիւնը, իր դիւանագիտական բանակցութիւններու
ընթացքին հազիւ յաջողեցաւ այդ երջանները փրկել սանկա-
կան հովանաւորութեան կամ սիրապետութեան. եւ երբ չյա-
ջողեցաւ գոնէ Նախիջեւանի կցել Հայաստանի, պատճառը
սա եր որ բուրժուար զիջան հրաժարիլ այդ հողամասերէն,
պայմանով, որ անոնք դուրս չեն Լեւոնտիյանի հանրապետութեան
հովանաւորութեան սակ:

առջեւ, եւ մինչեւ Ալեքսանդրապօլ գրաւել ընդէվիկեան զօրքով: Երբ կարմիր բանակը լինի Ալեքսանդրապօլի տիպայն ժամանակ կարելի կը լինի խօսիլ Կարսի մասին»:

Միւս կողմէ Կ. Սասունի 1926ի Հայրենիք ամսագրի Յուլիսի թիւով կ'ըսէր.

«Հայաստանի կառավարութիւնը եւ Հ. Յ. Դաշնակցութիւնը բոլոր հնարաւորութիւնները ունէին խուսափելու սոյն դաշնագիրը ստորագրելու պարտաւորութենէն, քանի որ Դեկտ. 1ին ստորագրած էին Լրգրանի հետ եղած համաձայնութիւնը: Դեկտ. 9ին իշխանութիւնը յանձնուած էր Դրօյին, մինչեւ որ Խորհրդայնացած Հայաստանի Յեղկոմը ժամանէր Երեւան»:

Սոյն հատուածին մէջ Կ. Սասունիի կողմէ հրամացուած «բոլոր հնարաւորութիւնները ունէին» խօսքը, անիմաստ է ըստրոյովին: Վրացեան իր Հայաստանի Հանրապետութեան պատմութեան մէջ կ'ընդունի, թէ Հայաստան լքուած էր արեւմտեան Դաշնակիցներէն, միս մինակ մնացած էր: Եւ 1920 Օգոստ. 8ին Դաշնակից Պետութիւններու Կովկասի ներկայացուցիչներու եղած պետական շրջաբերական-կոչքը «ոչ մէկ շօշափելի օգնութիւն» բերաւ Հայաստանի: Փուրքիոյ հետ պատերազմը սկսելէն վերջ եղած կոչերն ալ ապարդիւն մնացին: Սիայն պատերազմն սկսելէն առաջ Խորհրդային Ռուսիա պատասխանելով իրեն եղած դիմումին, Չիլէրիի նամակներով Հայաստանի Հանրապետութեան հաղորդեց հետեւեալը.

«Պարսկաստանի, Հայաստանի եւ Թուրքիոյ սահմանների հարցը Ռուս Խորհրդային կառավարութեան միջամտութեամբ դիւանագիտական միջոցներով կարգադրել կարելի լինելով, Ռուս կարավարութիւնը չէր ուզի յարձակողականներով խնդիրը լուծել» (Վրացեան, Հայաստանի Հանրապետութեան իրեր. էջ 414):

Իսկ պատերազմը սկսելէ յետոյ, մենք տեսանք վերեւ, Լրգրանի բերնով եղած ռուսական թելադրանքը:

Հայկական Հանրապետութիւնը պատերազմի սկզբնաւորութենէն առաջ մտիկ չըրաւ ռուսական առաջարկը, եւ պատերազմի մտաւ, ի վնաս հայ հայրենիքին եւ հայ

ժողովուրդին: Իսկ պատերազմէն յետոյ նորէն չուզեց լսել Լըզրանի թելադրութիւնները, ետ չկանչեց Ալեքսանդրապօլի պատուիրակութիւնը, եւ ստորագրեց ամօթապարա դաշնագիրը: Ուրեմն Դաշնակցութիւնը մէկ միջոց միայն ունէր եւ ոչ «բոլոր հնարաւորութիւններ» Ալեքսանդրապօլի դաշնագիրը չստորագրելու, եւ այդ միջոցն էր հետեւիլ Չիչէրիւնի եւ Լըզրանի թելադրութիւններուն պատերազմէն առաջ եւ յետոյ:

Այդ պայմանագրութիւնը պարտադրող Գարապէքիւր գիտէր, թէ իր մօտ գտնուող եւ հաշտութեան պայմանները ստորագրելու կոչուած պատուիրակութիւնը ipso facto պայմանագրութիւն ստորագրելու իրաւասութենէն զրկուած էր, քանի որ զինքը ընտրող կառավարութիւնը Հայաստանի քաղաքական վարչութեան գործը յանձնած էր Պոլշէվիկ կառավարութեան, Դեկտ. 15-ն սկսեալ: Բայց հակառակ այս պատմական իրողութեանց Ս. Վրացեան, երէկի հրաժարեալ եւ Դեկտ. 2-ին իրաւագուրկ նախարարակետը, իր կողմէն անձնապէս կը հեռագրէ Գարապէքիւրին, թէ Ալեքսանդրապօլ գտնուող հաշտութեան պատուիրակութիւնը անփոփոխ կը մնայ, եւ միւս կողմէն նոյն անձնական հանգամանիսով Ա. Սատիսեանի կը թելադրէ. «Թուրքերի պայմանները ստիպուած ենք ընդունիլ. դուք լիազօրուած եք ստորագրել»:

Ա. Սատիսեան, աւելի խելացի քան Վրացեանը, գիտնալով, թէ Վրացեանի կողմէ տրուած ստորագրելու հրահանգը ապօրինի է ինքնին, դիմում կը կատարէ Դրօի առժամեայ կառավարութեան, եւ հրահանգ կ'ուզէ անկէ: Դրօ կը պատասխանէ իրեն.

«Յեղափոխական կառավարութեան կողմից յայտնում եմ ձեզ, քե դուք ազատ եք ստորագրել դաճնազիրը կամ ոչ»:

Եւ երբ Ա. Սատիսեանի կողմէ կը կրկնուի հարցումը եւ որոշ պատասխան կ'ուղուի, Դրօ կ'աւելցնէ.

«Ես ձեզ ասացի՝ արդէն, Դործեցէք համաձայն ձեր հասկացողութեան»:

Այսպէս, ստորագրուեցաւ Ալեքսանդրապօլի դաշնագիրը. Դաշնակցական հրաժարեալ կառավարութեան մը

հրաժարեալ նախարարապետի մը ապօրէն հրահանգով, եւ յեղափոխական առժամեայ կառավարութեան պետ, Դրօի դիտումնաւոր եւ անորո՞ք քելադուրեամբ:

Այս խնդրոյն մէջ հարցում մը կը պղտորէ մեր միտքը: Յաղթական Գարապէքիք, որ իր բանակով անցած էր Ալեքսանդրապօլ ինչպէս գոհացաւ հաշտութեան պայմանագրին տակ ստորագրութեամբ մը, որ միջազգային օրէնքով արժէք մը չէր կրնար ներկայացնել, քանի որ հաշտութեան պատուիրակութիւնը ընտրուած էր օր մը առաջ գոյութենէ դադրած հանրապետութեան կողմէ, եւ քանի որ այդ նոյն պատուիրակութեան հրաման կը տրուի ստորագրել պայմանագրութիւնը, նոյն ատեն գոյութենէն դադրած հանրապետութեան հրաժարեալ եւ անիրաւասու նախարարապետէն: Ընդունինք, թէ Գարապէքիք ապօրէջ մը չէր, կարենալ վտանգելու համար շահ ուած յաղթանակ մը, եւ ձեռք բերուած անսպասելի առաւելութիւնները:

Ալեքսանդրապօլի դաշնագրին տակ հայ պատուիրակութեան կողմէ դրուած ստորագրութիւնը, եւ այդ ապօրէն ստորագրութեան Գարապէքիքի կողմէն առժամեայ նախաձեռնութիւնը, կը թուի ըլլալ երէկի Հայկական Հանրապետութիւնը իրենց ձեռքին մէջ առած կարգ մը Դաշնակցական Լիտորներու եւ Գարապէքիքի միջեւ գաղտնի համաձայնութեան մը եւ ազգին ու հայրենիքին հանդէպ սարքուած դաւադրութեան մը արդիւնք: Բոլոր անոնք, որ պիտի կարդան 1934-1935ին Շահանի կողմէ պատրաստուած եւ Մարտէյի մէջ հրատարակուած կարեւոր երկու հատորները — «Ալեքսանդրապօլի Դաւեազգեան 1930ի Կովկասեան ապստամբութիւնները» — հարկադրուած պիտի ըլլան, նոյն իսկ ակամայ, այդ կուսակցական մութ դաւադրութիւններուն եւ ազգադաւ հասկացողութիւններուն վրայ ամստասլու: Այդ երկու հատորները կարեւորութիւն ունին երկու պատճառով. 1. — նախ որ անոր հեղինակը իր կեանքը մաշեցուցած է Դաշնակցութեան գիրկը, եւ իբր վարչական ժողովներու եւ Պիւրօի անդամ ծանօթ է ներքին բոլոր անցուդարձերուն. 2 — երկորդ, որ իր պատմական փաստերը, քաղուած Դաշնակցական աղբիւրներէ անհերքելի են, ըլլալով իրողութիւններ: Ու մենք պիտի հետեւինք այդ վաւերագրերու ժամանակա-

գրութեան, եւ պիտի պարզենք մեր տեսութիւնները, մօտաւորապէս որոնք պիտի յանգին եթէ ոչ նոյն, գոնէ նման եզրակացութիւններու:

Ը.

Քանի որ համաձայն Կ. Սասունիի վկայութեան, Հ. Յ. Դաշնակցութիւնը հնարաւորութիւն ունէր խուսափելու Լիւքսանդրապօլի դաջնագիրը ստորագրելու ամօթապարտ յանձնառութենէն, ինչո՞ւ չխուսափեցաւ, գոնէ փրկելու համար Հ. Յ. Դաշնակցութեան անունն ու կախարդանքը: Այս ինչու՞ն մեզ կը բացատրէ Ալեքսանդրապօլի դաշնագրին ստորագրութենէն առաջ եւ յետոյ պատահած դէպքերը, յայտնուած համոզումները եւ պաշտպանուած գաղափարները: Կը բացատրեն նաեւ Լիւքսանդրապօլի դաշնագրին ճիշդ եւ 11րդ յօդուածները:

Հոս անգամ մըն ալ մատնանշենք սա պարագան, թէ դաշնակցութեան շրջանակին մէջ տաճկահայ եւ ռուսահայ տարրերէ ոմանց միջեւ միշտ շեշտուած տարակարծութիւն մը գոյութիւն ունեցած է թրքական օրիանքասիոնի եւ ռուսական օրիանքասիոնի ընտրութեան մէջ: Տաճկահայը առանց բացառութեան եւ միշտ պաշտպանած է ռուս օրիանքասիոնի թէզը, իր մորթին վրայ զգացած ըլլալով, դարերէ ի վեր թրքական վայրագութեան եւ խժդժութեան արիւնոտ հարուածները:

Ռուսահայերէն Վրացեան-Դարբինեան խմբակը գոնէ, 1918էն ի վեր պաշտպանները հանդիսացած են թրքական օրիանքասոնի: ՅԱՌԱՋի այդ թուականներուն հրատարակուած թիւերը վկաներն են այս ճշմարտութեան(*):

(*) Այն բուականներուն երբ Վրացեան-Դարբինեան քրֆական օրիանթացիաի խժալուր քմբուկը կը գարեհիմ Երեւանի մեջ, անդիմ Ասանայի մեջ երկու կուսակալներ, Նազրմ պէյ եւ ձեկալ պէյ, առաջիմը 1919ի Ապրիլիմ, եւ միւսը՝ 1920 Յունվարիմ, կ'առաջարկէիմ ինծի կսգմել հայ

եկաւ ժամանակ մը, սակայն, որ անոր հեղինակները, շարքայիններուն աչքին փոշի ցանելու համար պահ մը ուրացան իրենց համոզումներուն հիմնաւորութիւնը, ըսելով, թէ իրենք դեպքերու բերմամբ հարկադրուած էին այդ միտքը արձայայտել ակամայ, թէ իրենք համոզումով հակառակ են այդ գաղափարին: Բայց իրարու յաջորդող ձեռնարկներ եկան հաստատելու այդ յայտարարութեան ալ կեղծիքը:

1921 Մարտ 15ի «Ազատ Հայաստան»ի մէջ Ռ. Դարբինեան կը գրէր «Իրերի պատմական բերումով Անդրկովկասի ժողովուրդների քաղաքական ազատութեան իրական

եւ բուրք միացեալ նակաս մը, պահանջել Ֆրանսացիներուն հեռացումը, եւ պնդել «Կիլիկիան կիլիկեցիներուն» սկզբունքին վրայ: Ճեւալ պէյ նոյն իսկ կը ներկայացնէր ինծի այդ համերաժի գործակցութեան նախագիծը. «Կիլիկիան Կիլիկեցիներուն» տեղական-վարչական ինքնավարութիւն, բուրքերու եւ հայերու համահաւասար գործակցութեամբ, Սուլթանին *անուանական* գերիշխանութեան տակ, հովանաւորութեամբ Ազգերու Լիկայի»: Ճեւալ պէյ այդ ծրագրին շուրջ ընդարձակ բացատրական նամակ մըն ալ գրեց ներքին գործոց նախարար Նազրմ փաշայի, եւ մասնաւոր յանձնարարականով մը խնդրեց նախարարէն, որ այս խնդրոյ շուրջ տեսակցի ինծի հետ, երբ Պոլիս հասնիմ, եզրակացութեան մը գալու համար:

Աւելորդ է ըսել, թէ այդ տեսակցութիւնը շուրջի ունենալ Նազրմ փաշայի հետ, ո՛չ միայն անոր համար, որ Պոլիս հասնելուս Պատրիարքարանէն ինծի հաղորդուեցաւ, թէ Փարիզի Ազգ. Պատուիրակութիւնը ջանքեր կը քափէ Կիլիկիան միացնելու Հայաստանի, այլ եւ անոր համար, որ Պոլիս հասնելէս քիչ յետոյ տեղի ունեցան Մարաշի ջարդերը, որոնք անգամ մըն ալ ցոյց տուին թէ Թուրքիան հետագործակցութիւն մը, նոյնիսկ «ինքնավար Կիլիկիոյ» մէջ, ցրնորք մըն էր, որչափ ասեմ բուրքը կը մնար անուղղայ եւ անսրբագրելի ջարդարար:

պաշտօնային կարող ե դառնալ միայն Տանկասանը»։
Իսկ Ս. Վրացեան նոյն պաշտօնաթերթի 20րդ թիւին մէջ
կը գրէր։

«Հայ ժողովուրդը այս անգամ չպէտք է գործի 1914ի
եւ 1918ի ճակատագրական սխալը, եւ պէտք է իր բախտը
կապի ո՛չ թէ Ռուսաստանի, այլ իր հարեւան ազգերի, այ-
սինքն Թուրքերի եւ Վրացիների հետ։ Իսկ Թուրքերի եւ
Վրացիների հետ լինելով հայ ժողովուրդը կը լինի նաեւ
Տանկաստանի հետ»։

«1914ի ճակատագրական սխալ» ըսելով Ս. Վրաց-
եան կը հասկնայ Կարնոյ մէջ 1914ին գումարուած Դաշ-
նակցութեան Ը. Պատգամ. ժողովի մերժումը Պէհաէտ-
տին Շաքիրի պահանջին։ Այս պահանջը մերժողներէն
մէկն էր ինքը Ս. Վրացեան։

Իսկ 1918ի սխալ ըսելով կը հասկնայ Սէյմի հետ
համագործակցութեան յանձնառութեան այն պայմանը,
որով Հայաստան կը պահանջէր, որ Կովկաս կապուած
մնար Ռուսաստանի, դաշնակցային կապերով։

1921 Ապրիլին տեղի կ'ունենայ Դաշնակցութեան
Պատգամաւորական ժողովը Պուքրէշի մէջ, Այս ժողովը
կը զբաղի երկու կարեւոր հարցերով. թողունք որ այս
ժողովի մասին արտայայտուի Շահան.

«Դաշնակցութիւնը պարտուած էր Հայաստանի
սահմաններէն ներս։ Բիւրօ կառավարութիւնը իր դիր-
քերը յանձնած էր Սովետական Իշխանութեան։ Մէկ մա-
սը Պոլիս, միւս մասը Թավրիզ ապաստանած էր դէպ-
քերու հարուածին տակ գլուխը կորսնցուցած։

«Դաշնակցութիւնը զարնուած էր իր գլուխէն եւ
պէտք էր փրկել զայն։ Արտասահմանին վիճակուած էր
ընել այդ։ Սողոմոնի գնդակը Պերլինի մէջ տեղաւորուած
Թալեաթի գանկին մէջ, կը ներարկէր առաջին փրկարար շի-
ճուկը, տալով մէկտեղ ազդարար նշանը - դարձ դէպի անսուս
սրբութիւնները։ Թրքահայ հոգին կը ցնցուէր արտասահ-
մանի մէջ, իսկ Հայաստանի սահմաններէն ներս հայու-
թեան փիզիքական հոգը կը մնար Ռուսի ձեռքերուն մէջ։

«Պէտք էր, սակայն, գլուխ մը տալ Դաշնակցութեան

որ թուրքի տապարին տակ ո՛չ միայն ճեղքուած էր երկուքի, այլեւ հոգեպէս բաժնուած էր Վրացեանական ռատիոյի եւ Սողոմոնեան գնդակի ձեւերով:

«1921 Ապրիլի Պուրբէշի խորհրդաժողովը այդ նպատակով գումարուած էր» (Բ. հատ., էջ 180):

Դաշնակցութեան ռուսահայ հատուածը, կամ գէթ անոր կարեւոր մէկ մասը, Սելանիկի մէջ Օսմ. Բօմիթէի մէջ ձուլուած եւ թլփատուած Դաշնակցութեան ուղիով կը քալէր դէպի տաճկական օրիանքացիա:

Այնպէս որ երբ 1919ին Երեւանի մէջ գումարուեցաւ Դաշնակցութեան Թ. Պատգամաւորական ժողովը, հոն տեսնուեցաւ այն ակնբախ տարամիտութիւնը որ գոյութիւն ունէր տաճկահայ եւ ռուսահայ պատգամաւորներուն միջեւ: Թրքական օրիանքացիայի հակառակորդ տաճկահայ տարրը կատաղի ըմբոստացում մը ունեցաւ Ս. Վրացեանի եւ Ռ. Տէր Մինասեանի դէմ, որոնք «մեկ միլիոն քրքահայ նահապետներու պատասխանատու Թայեաքներու ներել կը քարոզէին»: Այդ երկուքը «իրենց յատուկ խարդախ եւ Ազէֆեան ձեւով կը լռէին, երբ նահատակներու հարազատներուն բերանը դժոխք կը դառնար իրենց դէմ պոռալով. «ով որ զոն չունի, իրաւունք չունի այդ հարցի մասին կարծիք յայտնելու»: Կը լռէին յետոյ միայն երեւան ելնելու համար. թէ այդ լռութիւնն ալ նենգ խաղ մըն է եղեր միայն, թրքահայ վրիժապահանջ հոգիին դէմ» (էջ 179—180):

Հոս աւելորդ չենք համարեր ըսելու. թէ երբ Պուրբէշի ժողովին կողմէ ընտրուած առժամեայ եւ պատասխանատու մարմինը շարունակեց վրիժառութեան գործը, եւ կազմակերպեց Պէհաէտտին Շաքիրի եւ ձկմալ Ազմիի մահփորձը, Ս. Վրացեան եւ Ռուբէն, իրր թէ թէրբօրիստներուն օգնելու համար, բայց իսկականին մէջ անոնց ձեռնարկը վիժեցնելու համար, մէկը ղրկեցին Պերլին: Բարեբախտաբար գործին ՀՍԿՈՂ աչքը շուտ տեսաւ այդ ղրկուած մարդուն դաւադրական նպատակը, զանի հեռացուց Պերլինէն, վրէժխնդրական նպատակին գործադրութենէն առաջ:

Վրացեան եւ Ռուբէն այնքան տարուած էին թրքա-
մոլութեան յիմարութենէն որ չէին ուզեր, վրէժխնդրա-
կան ոգիով, վշտացնել թուրքերը, որոնց հետ դաւադրա-
կան կապերով կապուած էին ապահովաբար, օր մը ի-
րենց կորսնցուցած աթոռներուն տիրանալու յոյսով, ինչ-
պէս ցոյց պիտի տան հետագայ դէպքերը :

Պուրբէշի խորհրդաժողովին ներկայ էին Պոլիս ա-
պաստանած Պիւրօի հինգ անդամները, Ա. Կիւլխանդան-
եան, Ս. Արարատեան, Սր. Ջամալեան, Վ. Նաւասարդ-
եան, Գ. Ղազարեան, ինչպէս նաեւ Արմէն Կարօ: Ներ-
կայ էին Թիֆլիզը 4 պատգամաւորներով, նաեւ արտա-
սահմանեան շրջանները մինչեւ Ամերիկա: Այս ժողովէն
կը բացակայէին Հայաստանէն պատգամաւորները, ինչ-
պէս նաեւ Պիւրօի մնացորդ երեք անդամները, Հ. Օհան-
ջանեան, Ս. Վրացեան եւ Ռուբէն, որոնք Թաւրիզ կը
գտնուէին, վերջին երկուքը Փետր. 18ի ապստամբու-
թենէն վերջ փախած. եւ վերադարձող Պոլշեվիք կառավա-
րութեան կողմէ «օրէնք դուրս» յայտարարուած:

Պուրբէշի Ընդհ. Ժողովը կ'ընտրէ երեք հոգիէ բաղ-
կացեալ «Պատասխանատու Մարմին» մը, որուն պիտի
գործակցէին, ըստ Շահանի, Էֆս Օֆիցիօ Պիւրօի անդամ-
ները, եւ այդ մարմինը պիտի վարէր Դաշնակցութեան
գործերը մինչեւ Ընդհ. Ժողով:

Պուրբէշի Ժողովը կը դատապարտէ Վրացեան-Դար-
բինեան-Ռուբէնի թրքական օրիանթացիան, կ'որոշէ հաս-
կացողութեան լեզու գտնել Պոլշեվիկ կառավարութեան
հետ. կ'ընտրէ երկու պատգամաւորներ, Վ. Նաւա-
սարդեան եւ Ա. Ջամալեան, որոնք Ռիկայի մէջ հանդի-
պում մը կ'ունենան Լիթվիներով եւ Ս. Տէր Դաբրիէլեանի
հետ:

Պուրբէշի պատգամաւորներուն առաջարկներն են.
1. Պահպանութիւն Հայաստանի անկախութեան. 2. Ընդլայ-
նում Հայաստանի սահմաններուն. 3. սկսում ներգաղթի:
Ս.յս առաջարկներուն փոխարէն Դաշնակցութիւնը
հետեւեալ յանձնառութիւնները կ'ընէր.

1. Լուծել Դաշնակցութիւնը Հայաստանի մէջ, 2.

օգնել ներգաղթին եւ վերաշինութեան. 3. Բացի Գումիւ-
նիստ բրօքականոէ արտասահմանի մէջ աջակցիլ Հայաս-
տանի Խորհրդային կառավարութեան, եւայլն, (էջ 147—
148):

Համաձայնութիւնը կատարեալ է Ռիկայի մէջ: Եւ
երկու կողմի պատուիրակները փրօրոճով մըն ալ կը ստո-
րագրեն:

1920 Դեկտ. 1ին Վրացեան խմբակը պայմանագրու-
թիւն մը կը ստորագրէ Լը Գրանի հետ, այդ պայմա-
նագրութիւնը աւելի նպաստաւոր էր Հայաստանի հողա-
յին եւ ընկերական տեսակէտով: Եւ այդ նոյն խմբակը,
փոխանակ անսալու Լը Գրանի թելադրութեան, որ էր
ետ կանչել Աղեքսանդրապոլի հաշտութեան պատուիրա-
կութիւնը, եւ այդպէսով արժեցնելու Դեկտ 1ի կնքուած
դաշինքը: Դեկտ. 2ին կը ստորագրէ Աղեքսանդրապոլի
աղտոտ դաշնագիրը. Խորհողի մը համար չափազանց
ծանրակշիռ է այս պարագան: Ան իրաւունք կուտայ մե-
զի ենթադրելու, թէ հրաժարեալ հանրապետութեան նա-
խարարապետն ու արբանեակները չափազանց կարեւո-
րութիւն կ'ընծայէին Աղեքսանդրապոլի դաշնագրութեան,
եւ կը գիջին ապօրին կերպով ստորագրել զայն, վաղուան
դաւադրական գործի մը իբր յենարան...:

Պուքրէշի խորհրդաժողովը իր որոշումով խելացի
եւ քանաւոր կարգադրութիւն մը ըրաւ: Այդ կարգա-
դրութիւնը կը ձգտէր Հայաստանի ժողովուրդին ֆիզի-
քական պահպանումին, ինչպէս նաեւ ներգաղթով երկրին
գործող նոր ուժեր տրամադրելու, արտասահմանի մէջ
ցրուած հայութիւնը օտարացումի վտանգէն փրկելու, եւ
հայրենիքին վերելքը փութացնելու: Մէկ խօսքով Պուք
րէշ կեանքի կը կոչէր Երեւանի մէջ 1920 Դեկտ. 1ին Լը
Գրանի հետ ստորագրուած պայմանագրութիւնը, ընդդէմ
Դեկտ 2ին ստորագրուած Աղեքսանդրապոլի դաշինքին:

Բայց երբ Թաւրիզ ապաստանած Պիւրօի երեք ան-
դամները Հ. Օհանջանեան, Ս. Վրացեան եւ Ռուբէն տե-
ղեկացան Պուքրէշի ձեռնարկներուն, մերժեցին ցանչնալ
Պուքրէշի ժողովին որոշումներն ու կազմուած պատաս-

խանատու Մարմինին վերին հեղինակութիւնը: Այդ մեր-
ժումը անոր համար, որ Վրացեան խմբակը նոր դաւա-
դրական գործի ձեռնարկած էր Սուլթանովներու հետ,
եւ մութին մէջ իշու մակարդով շունի կաթէն մածուն
շինելու ձեռնարկած էր: Եւ այդ դաւադրական ձեռնար-
կին լծելու համար շարքայիները; Վրացեան սկսաւ
գրել իր «Խարխալումները», Դարբինեան՝ իր «Հայ Բա-
նական մտքի դեգերումները» եւ Ռուբէն Տ. Մինասեան՝ իր
Հայ Թրակական կենիւր»:

Պարբէշի ժողովին բռնած ուղղութիւնը երկու հա-
կառակ գործունէութեան ծնունդ տուաւ:

Պատասխանատու Մարմինը իր գոյութեան երկու
տարիներու ընթացքին ո՛չ միայն ջանք թափեց միտքե-
րը մօտեցնել Խորհրդային Հայաստանի, եւ անոր որ-
դեգրած ռուսական օրիանթացիան, այլեւ միեւնոյն ժա-
մանակ գոհացում պատճառեց տանկահայ նահատակնե-
րու զաւակներուն հոգեկան-վրէժխնդրական պահանջին,
կարելի եղած չափով»: Շահան կը շարունակէ:

«Պատասխանատու Մարմնի երկու տարուան կեան-
քը Թալէաթով սկսուած գործին շարունայութիւնը եղաւ,
որոշ չափով Սայիտ Հալիմ, Ջիւանշիր, Պէհաէտտին Շա-
քիր. Ճէմալ Ազմի իրարու ետեւէ կ'իյնային թրքահայ
նահատակութեան ուխտին առջեւ» (հատոր Բ. էջ 182):

Երկրորդ գործունէութիւնը Թալէաթէն սկսաւ: Անոր
ժազումը պէտք է փնտռել Վրացեան խմբակին դաւադ-
րական եւ դաւաճանական ձգտումներուն մէջ: Վրացեան
չզգաստացած 1921 Փետր 18ի արիւնոտ եւ աղիտաւոր
ձախողանքէն փախստական Թալէաթ հասնելուն պէս կը
գտնէ իրեն պէս նախարարական աթոռներ կորսնցուցած
Սուլթանովներ, անոնց հետ կը համաձայնի հակապոլշե-
ւիկ նոր ապստամբութիւններ ստեղծելու հայրենադաւ
ժրագրի մը շուրջ (*):

(*) Այն ատեն, երբ Վրացեան եւ Ռուբէն զազնի համա-
ձայնութիւններ կը կնքէին, Թալէաթի մեջ, Սուլթանովներու
հետ, իրենց դաւանած քրեական օրիանթացիաի ուղիով, եւ

Այս աթոռազուրկ Ատրպէճանցի, Վրացի, Տաղըստանցի եւ հայ նախարարները մէկ նպատակ միայն կը

կը ծրագրէին պատգամաւորներ ղրկել Էնկիւրի, բարեկամութիւն եւ գործակցութիւն ստեղծելու համար Բեմալականներու հետ, սեւ գիծ մը քաշելով հայկական եղեռնին վրայ, «Բանակցութիւններ» վերնագրով յօդուած մը կը հրատարակէի (Արեւելեան Մամուլ, 12 Յունիս 1921) ուր ի միջի այլոց կը գրէի. «... Ապահովաբար մենք հակառակը պիտի չպնդենք բարի դրացնութեան մը սկզբունքին դէմ, բայց ամեն բարի դրացնութիւն կրնայ ստեղծուիլ այն ասեմ, երբ ազգի մը վրայ եղեռնագործուած ոնիրը կը քաւուի. երբ ոնրագործները կը պատուհասուին, երբ անիրաւուածներուն բաւարար հասուցում կ'ըլլայ, երբ անիրաւուած ազգին քաղաքական իրաւունքները կը նանչցուին իր բռնագրաւուած հայրենիքի հողամասերուն վրայ, երբ Հայաստանը կը ստեղծուի ինքնավար եւ անկախ...: Այս կերպով միայն կարելի պիտի ըլլայ սեւ գիծ մը քաշել քրեական խնդիրեանց արիւնոսէջներուն վրայ, Առանց այդ սրբագրութիւններուն... քաւուած գիծ մը, վաղուան կախաղաններուն իբրեւ սիւն միայն կրնայ ծառայել, բայց ոչ իբր միութեան գիծ երկու ազգերու միջեւ: ... Էնկիւրի արդէն յայտնած է իր կամքը. վաւերացուցած է երեկի ոնիրը: Ռուպիսի զոյաւմասութիւն պիտի ըլլար բանակցիլ մարդերու հետ, որոնք Երեւանէն դուրս հայութիւն եւ Հայաստան նանչնալու յոյսերով չունին:

«Այսոյք է մենք խաղաղութեան եւ ապահովութեան պէտք ունինք, եւ սակայն ոնրագործներու կողմէ տուելիք ապահովութիւնը ո՛չ գոհացուցիչ կրնայ ըլլալ. եւ ո՛չ տեսական: Մեր փնտրած խաղաղութիւնը եւ ապահովութիւնը չենք կրնար գտնել ոնրագործներու արողներուն վրայ. անոնց կախաղանին թակ կամ անոնց գերեզմաններուն մէջ միայն կարելի է գտնել տառապոյ եւ ջարդուած ժողովուրդներու խաղաղութիւնն ու ապահովութիւնը:

«Ահա քե ինչո՞ւ համար ազգը դաւանանութիւն միայն կը տեսնէ այդպիսի կողմնակի, հաստատական եւ կարեւորիք քաղաքականութեան («քրեական օրինաբացի») մը մէջ»:

հետապնդեն, սիրանալ իրենց կորսուած արուներուն: Եւ հոն մուծին մէջ կը կազմեն Պրոմէթէական խմբակը: Այս բոլոր մուծի մէջ գործուած դաւադրութիւնները շարքայիններուն համար երեւան կ'ելլեն հազիւ 1926ին, երբ Սուլթանով Պոլսոյ մէջ «Կովկասեան Համադաշնակ-ցութիւն»-ը վերջնապէս կողմակերպելէ յետոյ Բէմալի հո-վանաւորութեան տակ, 1926 Նոյեմբերին Փարիզի մէջ կը պարզէ Վրացեան խմբակին հետ 1921էն ի վեր կազ-մուած համագործակցութեան փուլերը, եւ կը պահանջէ, որ Կովկասեան Համադաշնակցութեան Պոլսոյ Կեդր. Բո-միթէի մէջ հայերուն համար բաց թողուած երկու ա-թոռները գրաւեն Ս. Վրացեան եւ Ռուբէն Փաշա: Եւ կը յաւելու «Երեւոյ երկուք շրջան, այն ատեն հայերու մասնակցութեան վստահելիութիւնը կը խախտի» (հատոր Բ., էջ 83):

Այլեւս դիմակները ինկած են Վրացեան-Դարբինեան խմբակին երեսէն: Այլ այսուհետեւ ճակատաբաց Վրացեան-Դարբինեան կրնան յայտարարել իրենց դաւանանքը. «Կովկասի ժողովուրդների պատգամն կարող է լինել Տանկասանը...»: Ուրբեմն եկած է ժամանակը, քայքայել Պուրբէշի մէջ յայտնաբերուած միացեալ ճակատը. պառակտում յառաջ բերել ընկերներու միջեւ, ստուերացընելու համար իրենց թրքական օրիանթացիայի հետեւող շարքերը, ի հարկին կախակայելով այրի զարնող ընկերներ, երբեմն սպառնալով, եւ երբեմն նոյնիսկ սպաննելով հակաթուրք ընկերներ, օրինակ Սարգիս Գըյրճեան մը, որուն համար Շահան կ'ըսէ թէ. «սպաննուեցաւ որպէս հակապրոմէթէական»: Զէ՞ մի որ Ալեքսանդրապոլի դաշնագրին 11րդ յօդուածը կ'ըսէր. թէ Հայաստանի Հանրապետութիւնը, այսինքն Դաշնակցութիւնը, «Թուրքիոյ հետ դրացիական իրաւունքները յարգելու իր անկեղծ փափաքին իրրեւ փաստ, յանձն կ'առնէ կառավարութեանէն հեռու պահել կայսերապաշտ նպատակներ, հետապնդելով երկու ազգերու անդորրութիւնը խանգարող կռուասէր մարդիկը»: Հիմա որ կառավարութիւն ունենալէ զրկուած էր Դաշնակցութիւնը, այդ յօդուածին հա-

մածայն պարտաւոր կը զգար ինքզինքը իր շորքերը մաքրագործել հակաթուրք տարրերէ...:

Ը .

Շահան շատ իրաւամբ Դաշնակցութեան եւ Գարապէքիբի միջեւ կանխամտածուած դաւադրական հասկացողութիւն մը կ'ենթադրէ Պոլշեւիկ Ռուսիոյ դէմ, հիմնուելով Ալեքսանդրապոլի դաշնագրին եւ Փետր. 18ի ապստամբութեան իրարու հետ ունեցած աղերսին վրայ: Թող ներուի ինծի ենթադրելու. թէ այդ երկու գործառնութիւնները պարզապէս շարունակութիւններ են 1918 Մայիս 28—30ի անկախութեան յայտարարութեան, եւ երեքը միասին — 1918 Մայիս 28, 1920 Դեկտ. 2 եւ 1921 Փետր. 18 — դաւադրական կապերով կապուած իրարու հետ կը կազմեն Դաշնակցութեան եւ թուրքերու գաղտնի հասկացողութեան շղթային երեք օղակները:

Ակսինք իրարու յաջորդող պատմական դէպքերու վերլուծումին:

Սիմոն Վրացեան Հայրենիք Ամսագրի 1923 Նոյեմբերի թիւով կը հաղորդէ թէ Նոյ. 30ին (1920) հանրապետական կառավարութիւնը քննելով Լրգրանի առաջարկները սա եզրակացութեան եկաւ.

«Հայաստանի խորհրդայնացումը անխուսափելի է. եւ երկրի ու ժողովրդին կենսական շահերը պահանջում են այդ ակտը կատարել առանց ցնցումների եւ արիւնահեղութեան»:

Նոյ. 30 — Դեկտ. 1ի գիշերը Դաշնակցութեան Պիւրոյի Հայաստանի Կեդր, Կոմիտէի, խորհրդակցական հատուածի, կառավարութեան անդամներու եւ պատասխանատու ընկերներու համագումար նիստը կը վաւերացնէ կառավարութեան որոշումը, որ էր խաղաղ կերպով եւ առանց արիւնայեղութեան ղեկը յանձնել Հայաստանի խորհրդային հաաուածին:

Սոյն ժողովին մէջ Հ. Օհանջանեան, Ս. Վրացեան, Ս. Արարատեան, Ա. Յովհաննէսեան, Ա. Զիլինկիրեան (Ռ.

Դարրինեան), Վ. Նաւաւարդեան կ'առաջարկեն «անմիջապէս զէնքի դիմել երկիրը բոլջէվիկեան նուաճումից պաշտպանելու համար»։ Ի պատիւ Դրոյի պէտք է ըսել թէ այդ ժողովին մէջ Դրո կառավարութեան որոշումին գործադրութեան վրայ կը պնդէ, ըսելով «հայ զօրք ուսի դեմ չի կռուի, եւ չպէ՛սք է կռուի, որովհետեւ իմ կարծիքով հայ ժողովրդի փրկութիւնը կախուած է Ռուսաստանից, ինչ գոյն եւ ռեժիմ ունենայ վերջինս»։

Պէտք է միտք պահել խորհրդային վարչութիւնը զէնքով դիմաւորելու առաջարկ բերող անհատներուն վերոյիշեալ անունները, որովհետեւ անոնք են որ հետագայ դաւադրական ձեռնարկները պիտի կազմակերպեն ի վնաս մեր հայրենիքին եւ արիւնաբամ ժողովուրդին, եւ յօգուտ յաղթական թուրքերուն։

Հակառակ Լրգրանի որոշումներուն, թէ Ալեքսանտրրապոլէն ետ կանչել հաշտութեան պատուիրակութիւնը, եւ ո՛րեւէ հաշտութիւն չկնքել թուրքերուն հետ, հանրապետական կառավարութիւնը ետ չկանչեց Սատիսեանը, ընդհակառակը Դեկտ. 2ի գիշերը հրաժարեալ նախարարապետ Ս. Վրացեան, հրահանգ կու տայ Ա. Սատիսեանի, ստորագրել Ալեքսանդրապոլի դաշնագիրը։ Այս խնդրոյ մէջ չափազանց յատկանշական է, ինչպէս տեսանք, Դրոյի երկրորդ պատասխանը Ա. Սատիսեանի։ Դրո փոխանակ այո՛, կամ ո՛չ, պատասխանելու, բան մը որ պահանջն էր ուղղամտութեան, կը պատասխանէ. «գործեցեք համաձայն ձեր հասկացողութեան»։

Այս կասկածելի հրահանգէն կարելի է երկու եզրակացութեան յանգիլ, կամ ըսել կ'ուզէ Սատիսեանի, թէ գործեցէք համաձայն ձեր դատողութեան ու խղճին, կամ ըսել կ'ուզէ «գործեցեք համաձայն ա՛յն հասկացողութեան, որ եղած է ձեր եւ Ս. Վրացեանի միջեւ»։

Բնականաբար այսպիսի գաղտնի հասկացողութիւն մը միակողմանի չէր կրնար եղած ըլլալ, հասկացողութիւն մը պէտք էր տեղի ունեցած ըլլար նաեւ Ս. Վրացեանի, Ա. Սատիսեանի եւ Դարապէքիրի միջեւ։ Մեր այս վերջին ենթադրութիւնը աւելի կը հիմնաւորուի այն

իրողութեամբ, որուն համեմատ դաշնագրին ստորագրու-
թենէն քանի մը ժամ վերջ Ա. Խատիսեանի հետ, միեւ-
նոյն շոգեկառքով Երեւան կու գայ Գարապէքիբի խոր-
հրդականը, ուրիշ Պէհաէտտին Շաքիր մը, գիտնալով
հանդերձ Հայաստանի խորհրդայնացումը, եւ յարաբե-
րութեան մէջ կը մտնէ Ս. Վրացեանի հետ, որ ազատ
կեանք կ'ապրէր Երեւանի մէջ, եւ ուրիշներու հետ պաշ-
տօնի կը կոչուէր Խորհրդային կառավարութեան կողմէ:
Շահան կը գրէ.

«Կասկածէ դուրս է որ Պէհաէտտին Բէյը գիտէր —
այդ իր առաքելութիւնն իսկ էր — որ Ալեքսանդրապոլի
դաշնագիրը միջազգայնօրէն զեղծանուած թուղթ մըն էր,
եւ անոր ճակատագիրը տխուր կրնար ըլլալ առանց ար-
տակարգ դէպքի մը» (հատոր Բ., էջ 46): Եւ Պէհաէտտին
Շաքիր, Գարապէքիբի կողմէ Երեւան կու գար փութա-
ցընելու այդ արձակուրդ դեպքը, օգտագործելով կարգ մը
աթոռամբոյ դաշնակցականներու հակառուս տրամադրու-
թիւնները: Պէտք էր փութացնել այդ արտակարգ դէպ-
քին գործադրութիւնը, ո՛չ միայն օրինականացնել կարե-
նալու համար Ալեքսանդրապոլի դաշնագիրը, այլ եւ ար-
գիլելու համար մօտ առենէն Լոնտոնի եւ Մոսկուայի
մէջ գումարուելիք ժողովներուն միջոցին թրքական խըն-
դիրներու ուրիշներու հաւանական միջամտութիւնները:
Այդ երկու ժողովներէն Մոսկուայինը պիտի գումարուէր
1921 Փետր. 26ին, եւ պիտի վերջանար Մարտ 16ին. իսկ
Լոնտոնինը 1921 Փետր. 21էն մինչեւ Մարտ 2:

Այդ երկու ժողովներն ալ նուիրուած պիտի ըլլային
թուրքիոյ հետ կապուած խնդիրներու լուծման. Երկու
ժողովներուն ալ օրակարգին մէջն էր Հայաստանի եւ
հայ ժողովուրդի իրաւական վիճակի, եւ Հայաստանի
սահմաններուն խնդիրը: Այդ ժողովներուն ներկայ պիտի
գտնուէին թուրք պատուիրակներ, իսկ հայերու կողմէ
Լոնտոնի ժողովին պիտի ներկայանային Պօղոս Փաշա
Նուպար, պահանջելու համար Սէփրի դաշնագրին գոր-
ծադրութիւնը, եւ Աւետիս Ահարոնեան՝ Ալեքսանդրա-
պոլի դաշնագրին ջնջումը: Իսկ Մոսկուայի ժողովին

պիտի ներկայանար Խորհրդային Հայաստանի պատուիրակ Ալեքսանդր Բէկզատեան, Ալեքսանդրապոլի դաշնագրին դէմ իր առարկութիւնները ներկայացնելու, եւ պահանջելու անոր հիմնական փոփոխութիւնը: Որովհետեւ ինչպէս կը պատմէ Ա. Կատիսեան, Կասեան մտերմաբար յայտնած էր իրեն թէ «մեր նպատակն է չճանաչել այդ դաժնագիրը, եւ կազմել նոր համաձայնութիւն»:

Շահանի կողմէ ակնարկուած «արտակարգ դէպքը» ծրագրուած եւ կանխամտածուած ապստամբութիւնն էր. որուն պատրաստութեան կը ձեռնարկուի Դեկտեմբերի սկիզբին: Դաւադրութիւնը կը պատրաստուի Երեւանի մէջ Մ. Վրացեանի գլխաւորութեամբ, եւ Պէհաէտտին Շաքիրի գիտակցութեամբ: Ծրագրուած ապստամբութեան պարագլուխներն էին Ս. Վրացեան, Ռ. Տէր Մինասեան, Լեռնահայաստանէն Նժդեհ եւ Բակոբ Տէր Յակոբեան, երէկի փարլամէնտի աւագ քարտուղար, որ 1931էն սկսեալ այդ ապստամբութեան մասին իր յուշերը հրատակակեց «Հայրենիք»ի մէջ. Իրազեկ ծածկանունով:

Դաշնակցական գրողներ 1921 Փետր. 18ի ապստամբութիւնը կը ներկայացնեն, իբր ժողովրդական տարերային ըմբոստացում մը, արդիւնք Հայաստանի Խորհրդրդային կառավարութեան կողմէ կատարուած խժոժութիւններուն: Եւ Ռ. Դարբինեան 1923 Հոկտեմբերի «Հայրենիք» ամսագրի մէջ այդ առթիւ կը գրէ. «Ատիկա իսկապէս ժողովրդական ըմբոստացում մըն էր Ռուսիոյ, եւ ռուսական օրիանթացիային դէմ», թէ «Երկրի մեր զանգուածը... տարերային մղումով զէնք էր բարձրացուցեր Խորհրդային Ռուսիոյ դէմ»: Կը խորհիմ թէ Դարբինեանի կողմէ ներկայացուած շարժումին այս կերպ ներկարագրութիւնն ալ պատմութեան խեղաթիւրումի ձեւ մըն է: Այս պարագան կը լուսարանէ Իրազեկ, իր յուշերուն հրատարակումով, որուն մէջ կ'ըսէ թէ «Հայ ժողովրդի մեկ: աննճան հասուածը» կը մասնակցի ապստամբութեան, թէ այդ ապստամբութիւնը կազմակերպուած էր 1920 Դեկտ. 1—20ի շրջանին, «դաշնակցականապէս» դաշնակ պետերու կողմէ: Ուրեմն սխալ է ըսել, թէ ա-

նիկա «Ժողովրդական ըմբոստացում» մըն էր ռուսական օրիանթացիայի դէմ:

Այդ դաւադրական ապստամբութեան կազմակերպիչներուն նպատակը որոշ է: Վրացեան եւ խմբակը, եթէ չյաջողեցան պետութեան դեկը փոխանցել Պելլէվիք կուսակցութեան, պատերազմով եւ արիւնահեղութեամբ, ուզեցին արիւնով եւ պատերազմով վերատիրանալ իշխանութեան, յագեցնելու համար իրենց արիւնի եւ աթոռապաշտութեան ախորժակը: Եւ ապստամբութեան ծրագիրը մշակուեցաւ Գարապէքիի եւ Պէհաէտտին Շաքիի համախոհ գործակցութեամբ: Այս կանխամտածուած ծրագրին յաջողութեան համար էր, որ Դաշնակցութեան խնդրանօք Ալեքսանդրապոլի դաշնագրին մէջ դրուեցաւ ճորդ յօդուածը, որով Թուրքիա կը խոստանայ իր գինուորական օգնութիւնը «Ներքին եւ արտաքին վստելի ասեմ, երբ Հայաստանի հանրապետութիւնը խնդրէ այդ օգնութիւնը»: Եւ ահա թէ ինչո՞ւ համար Վրացեաններ, յամառեցան ետ չկանչել հաշտութեան բանագնացները, եւ ապօրէն կերպով ստորագրեցին Ալեքսանդրապոլի դաշնագիրը:

Դեկտեմբերի առաջին օրերուն իսկ կը կազմուի «ՀԱՅՐԵՆԻՔԻ ՓՐԿՈՒԹԵԱՆ, ԿՈՄԻՏԷՆ»: Իրագեկ կը հահորդէ թէ Դեկտ 20ի մօտերը արդէն կազմակերպուած էր Դաշնակցութիւնը, թէ «անհրաժեշտ էր սանձել բոլշէվիկներին: Իսկ դա կը լինէր միայն կազմակերպուելով, այն էլ միայն դաժնակցակաճօրէն կազմակերպուելով: Մանաւանդ, որ Պատ. Մարմինը գիտէր, որ նրանք թոյլ են Հայաստանում, եւ ուրիմն հեշտ է հետերնին հաշիւը փակել»:

Ի՞նչե՞նչ թերեւս անգիտակցաբար մեզք եւ վաղուան պատմաբաններուն մեծ ծառայութիւն մը կը մատուցանէ, միեւնոյն ժամանակ հաղորդելով, թէ Հայաստանի Բոլշեւիկ կառավարութիւնը կանխօրօք տեղեկացած էր, իր գաղտնի գործակալներուն միջոցով, Յունուարին վերջերը տեղի ունենալիք ապստամբական ծրագրի մանրամասնութիւններուն, եւ ըստ այնմ հրահանգներ տուած էր իր սակաւութիւն բանակին: Եւ Վրացեան ալ կ'ընդունի

Թէ «Բոլշէվիկները համոզուած էին, թէ դաշնակները հանգիստ չեն նստած»:

Ըսինք թէ դաշնակցական գրողներ արդարացնելու համար 1921 Փետր. 18ի դաւադրական ապստամբութիւնը անոր ծագման իբր պատճառ ցոյց կուտան Հայաստանի մէջ Պոլշէվիկ կառավարութեան ձեռք առած անտանելի խժդժութիւնները, եւ դրժումը Լըզրանի հետ երեւանի մէջ ստորագրուած պայմաններու գործադրութեան. Այս պատրուակը ՊՈԶՍ.ԻՈՐ ԽՈՒՏ մըն է, դարբնուած Վրացեան-Դարբինեան սալին վրայ: Որովհետեւ Ա. Սատիսեանի, Կ. Սասունիի, Բաշխի Իշխանեանի, ԻԲԱ-Զեկի, եւ նոյնիսկ Ս. Վրացեանի վկայութիւնները, ցոյց կուտան, թէ 1921 Դեկտ. 1—20, Հայաստանի մէջ ակտիւ խոսուքիւն գոյութիւն չէ ունեցած քնաւ, թէ խորհրդային կառավարութիւնը յարգած է իր անյիշաչար ըլլալու խոստումները թէ մէկ առժամեայ բանտարկեալ կայ (Բ. Իշխանեան). եւ ծպտումի տակ փախստական ձերբակալուած քանի մը դաշնակցական պատանիներ:

Հայաստանի խորհրդային կառավարութիւնը առանց իսկ կարեւորութիւն տալու Լեռնահայաստանի մէջ Նրժդեհի ապստամբական շարժումներուն, երէկի դաշնակցական նախարարներ պաշտօնի կը հրաւիրէ: Ս. Վրացեան իր «Յուշեր մօտիկ անցեալից» գրութեան մէջ ակնարկելով իրենց տրուած աթոռներուն, կ'ըսէ. «Բոլորն էլ երկրորդական եւ չորրորդական պաշտօններ, որով բոլշէվիկները կարծես ուզում էին ծաղրել եւ վիրաւորել մեզ»:

Ուրեմն, երբ բոլոր դաշնակցական վկայութիւններու հաւաստումով Պոլշէվիկ կառավարութիւնը լուայեալ եւ խաղաղասիրական նպատակ կը հետապնդէ Հայաստանի մէջ, եւ միայն 1920 Դեկտ. 20էն վերջն է, որ զսպողական միջոցներու կը դիմէ, այս կը նշանակէ, թէ այդ միջոցներուն կը դիմէ Դաշնակցութեան կողմէն դաւադրաբար ապստամբութիւն մը պայթեցնելու ծրագրին մանրամասնութիւնները ձեռք բերելէ ետք միայն: Հետեւաբար, որոշ կը տեսնուի, թէ կառավարութեան զսպողա-

կան միջոցները հետեւեանքն են եղած մութի մէջ պատ-
րաստուած դաշնակցական դաւադրութեան, եւ չէին
կրնար պատճառ եղած ըլլալ ապստամբութեան: Դաշ-
նակցական գրողներ որքան ալ ճարտարօրէն խեղաթիւ-
րեն դէպքերն ու իրողութիւնները. զանոնք ետեւառա-
ջելով, եւ արդիւնքը՝ պատճառ եւ պատճառը՝ արդիւնք
ներկայացնելով, անոնք պիտի չհասնին իրենց կանխա-
մըտածուած նպատակին, քանի որ իրենց բոլոր խեղա-
թիւրումներուն ընթացքին, պիտի չկրնան կատարուած
իրողութիւններու թուականները խեղաթիւրել:

Որպէսզի ստորեւ դրուելիք թուականներուն, կա-
տարուած դէպքերուն տարողութիւնը կարելի ըլլայ ըմ-
բռնել, հոս ըսենք, թէ կազմակերպուած ապստամբու-
թեան գործին մէջ գործնական եւ կարեւոր բաժինը արը-
ուած է հայ սպաներուն, անշուշտ Դաշնակցական, որոնք
առաջին ազդանշանին գործի պիտի սկսէին:

Խօսքը տանք Ս. Վրացեանի.

«Դեկտ. 6ին Երեւան եկաւ Յեղկոմբ, Հայաստանում
հաստատուեց բռնութեան, թալանի. կամայականութեան
եւ ահաբեկումի ռէժիմ: Հայկական բանակը կազմալուծ-
ուեց. սպաները 1500 հոգի, զօր. նազարբեկեանի, Հահ-
վէրտեանի, Սիլիկեանի գլխաւորութեամբ ծին ծմեռին
ոտքով քշուեցին Ռուսաստան: «քսորուեց եւ Դրօն իր
սպաներով» (Հայ Հանրապետութիւնը, էջ 440):

Սիմոն Վրացեանի այս տողերը կարգացող ունէ
մարդ, ստիպուած պիտի ըլլայ խորհելու, թէ այդ բոլ-
շէվիկեան ահաբեկումի ռէժիմը կը սկսի Դեկտ. 6ին Ե-
րեւան հասնող Յեղկոմին հետ: Այդ տպաւորութիւնը տա-
լու համար է, որ արդէն վերոյիշեալ տողերը գրուած են
նենգամտարար, կանխամտածուած ծրագրով մը:

Ս. Վրացեանի կողմէն դաւեակցակառուցեց գործա-
դրուած այդ պատմական նենգամտութիւնը քողագեր-
ծելու համար պարտաւորուած ենք դիմել ժամանակա-
գրութեան, որ միակ անխարդախ եւ ճշգրտապատում
վկան է պատմական ստուգութիւններու:

Արդ, ըստ ժամանակագրութեան տուած վկայութիւններուն.

1. Հայ Պոլշէվիկ հանրապետութեան կառավարական կազմը Երեւան կը հասնի 1920 Դեկտ. 6ին:

2. Կառավարութիւնը բանակի սպաներուն տպագրուած հարցարան-պաշտօնագրեր կը ցրուէ, զանոնք լեցնելով, դարձնելու համար կառավարութեան: Այս ձեւակերպութիւնը տեղի կ'ունենար 1920 Դեկտ. 20ին:

Դեկտ. 20ը ըստ ԻՐԱԶԵԿԻ այն թուականն է, երբ արդէն «Փրկութեան կոմիտէն» կազմուած էր Ս. Վրացեանի գլխաւորութեամբ, եւ կազմակերպուած էր «դաշնակցականօրէն»:

Եւ կառավարութիւնը այդ թուականին է որ կը սկսի իր ուշադրութեան առարկայ դարձնել մութին մէջ կազմակերպուած դաւադրութիւնը, եւ կ'ուզէ զայն վիժեցնել խաղաղ միջոցներով, առանց արիւնահեղութեան: Այս պատճառով.

3. Դրօ եւ իր 12 սպաները, կը հեռացուին Երեւանէն, իրեն եղած պաշտօնական հրաւերի մը պատրուակին տակ:

Այդ թուականին Հայաստանի մայրաքաղաքը Երեւան խաղաղ է դեռ, հակառակ, որ դաւադրական ապրատամբութեան գործը կ'ընդլայնուէր, եւ հակառակ որ Պոլշէվիկ կառավարութիւնը ձեռք անցուցած էր այդ դաւադրութեան ծրագրին բոլոր մանրամասնութիւնները:

Հոս կարեւոր է աչքի առջեւ ունենալ Բաշխի Իշխանեանի ականատեսի հետեւեալ վկայութիւնը.

«Երեւանում Յունվարի սկիզբներից սկսած կառավարական խտութիւնները քանի գնում ա՛յնքան աւելի ահռելի չափերի էր հասցնում բոլշէվիկեան ռէժիմի գործադրութիւնը». (Երկու ամիս բոլշեվիկեան բանում, էջ 119):

Ականատեսի այս վկայութիւնը ինքնաբերաբար ցոյց կուտայ, թէ խտութիւնները կը սկսին, ո՛չ թէ Դեկտ. 6ին Յեղկոմի ժամանումին հետ, այլ «Յունվարի սկիզբներից», եւ այն համեմատութեամբ ինչ համեմատու-

թեամբ որ ապստամբութեան ծրագիրը կը ծաւալի, պայ-
թելու համար Յունվարին վերջերը, եւ այդ ապստամբու-
թիւնը խաղաղութեամբ վիժեցնելու համար կառավարու-
թիւնը.

3— 1921 Յունվ. 24ին կը հաւաքէ եւ հսկողութեան
տակ կ'առնու երեւան գտնուող սպաները, եւ անոնցմէ
1500ը, իրենց զօրավարներուն հետ դուրս կը հանէ Հա-
յաստանի սահմաններէն:

Եւ ալ զարմանալի պատահար մը պէտք չէ նկատել
կառավարութեան կողմէն «Յունվարի սկիզբներին» սկը-
սած խստութիւններուն սաստկացումը: Արեւէ կառավա-
րութիւն միեւնոյնը պիտի ընէր նոյնանման պարագայի
մը մէջ: Ինքնապաշտպանութեան բնագոյր, կարգ կանոնի
պահպանութեան օրէնքը, հասարակաց ապահովութիւնը
այդ կը պահանջեն: Եւ երբ գործին մէջ դաւադրու-
թեան խնդիր կայ, հակամարդկային արարքներն անգամ
երբեմն օրէնքի կարգ կ'անցնին. դժբախտաբար պետու-
թիւններու համար: Եւ միթէ այդպէս չվարուեցա՞ւ Դաշ-
նակցական հանրապետութիւնը Պոլշէվիկ հատուածին
դէմ, անոնց սարքած մայիսեան ցոյցերու միջոցին:

Մեզի համար, հոս, այս խնդիրներու լուսարանու-
թեան մէջ ժամանակագրութեան մեզի բերած վկայու-
թիւնն է, այսինքն, սա թէ խստութիւնները սկսած են
1921 Յունվարի սկիզբին (եւ ոչ 1920 Դեկտ. 6ին), երբ
1920 Դեկտ. 20ին դաշնակցականօրէն կը կազմակերպուէր
դաւադրական ապստամբութիւնը: Եւ ժամանակագրու-
թիւնը ցոյց կուտայ, թէ կ'առավարութեան ձեռք առած
խստութիւնները ապստամբութեան մը պատճառ չկրնալ
ըլլալէ զատ, անոր անընդմիջական հետեւանք են եղած:

Եւ 1921 Յունվարին վերջերը կատարուելիք բայց
հայ սպաներու զանգուածային ձերբակալութեան եւ տա-
րագրութեան հետեւանքով յապաղած, եւ Փետր. 18ին
պայթած ապստամբութեան ներկայ է Պէհաէտտին Շա-
քիր, որ Փետր 18—24 Ս. Վրացեանի այցելութիւնը կ'ըն-
դունի: Բնականաբար այդ այցելութեան միջոցին Ս. Վրաց-
եան պարծանքով, եկած էր յայտարարելու, թէ գլուխ

հանուած էր ծրագրուած Ա.Ն.Ա.Կ.Ն.Կ.Ա.Լ. Դ.Է.Պ.Բ.Ը. ապստամբութիւնը, եւ այդպէսսով ինք յարգած էր իր խոստումը, եւ իրաւունք ունէր սպասելու, որ Թուրքիա ալ յարգէ Ալեքսանտրապոլի դաշնագրին ճորդ յօդուածով իր յանձնառութիւնը:

Պէհաէտտին կը վստահեցնէ Վրացեանը, թէ «իր կառավարութիւնը համակրանօք հետեւում է այդ հերոսամարտին», ցաւ կը յայտնէ, որ «հայ ազգային բանակը» գլխատուեր է շնորհիւ սպայակոյտի աքսորին, թէ «իր կառավարութիւնը Հայաստանի Փրկութեան Կոմիտէն կը ծանչնայ իբր օրինաւոր եւ միակ կառավարութիւն»։ Թէ հետեւաբար «Անգարան չպիտի վարանի ռազմական օգնութեան գալ Փրկութեան Կոմիտէին»:

1921 Փետր 18ի ապստամբութեան օրերուն Պէհաէտտին Շաքիրի ներկայութիւնը Երեւանի մէջ եւ շարունակական տեսակցութիւնները Ս. Վրացեանի հետ, ապացոյց մըն են, թէ Ալեքսանդրապոլի դաշնագիրը եւ Փետր. 18ի ապստամբութիւնը կանխամտածուած շարունակութիւնն են մէկը միւսին եւ իրարու շարկապուած ներքնապէս. Ասոր ապացոյցը կրնայ նկատուիլ Վրացեանի սա հեռագիրը, զոր տուաւ Մարտ 15ին Թուրքիոյ «Ազգ. Մեծ Ժողովի արտաքին գործերի կոմիսարին»:

«Ազատուելով բոլշէվիզմի անունով Հայաստան մտած օտար լծից, Հայաստանի ժողովուրդը լիքն է կտրուկ վճռականութեամբ ապրելու ազատ եւ անկախ, եւ ամենամօտիկ բարեկամական յարաբերութիւններ ստեղծելու իր հարեւանների, առաջին հերթին տաճիկ ժողովրդի հետ, իմ կառավարութիւնը Տաճկաստանի եւ Հայաստանի ազգային նորմալ եւ բարեկամական յարաբերութիւններ սկսելու բազա է համարում այն պայմանները, որոնք ձեւակերպուած են անցեալ տարուայ Դեկտ. 2ի Ալեքսանսքրօպոլում կնքուած հայ-տաճկական դաշնագրի մէջ, եւ յետագային ստեղծուած իրական պայմանները» (Պետական Արխիւ, թիւ 89):

Կարապէքիր եւ Պէհաէտտին Շաքիր այդ դաւադրական ապստամբութեամբ հասած էին իրենց նպատակներուն մէկ մասին: Այդ նպատակներէն մէկն էր իրենց

աչքին առջեւ եւ թուրք բանակի ներկայութեանը Ալեքսանդրապոլ, հայր ջարդել հայուն ձեռքով, եւ այսպէս շարունակած ըլլալ 1915ին սկսուած հայկական ընազրնջումի ծրագրուած եղեռնը, կը մնար մեծ նպատակին իրագործումը. որ էր նոր կազմուած կառավարութեան ձեռքով վաւերականութեան դրոշմ մը տալ Ալեքսանդրապոլի անվաւեր դաշնագրին, եւ միջազգային հանգամանք տալ անոր, եւ երկրորդ արգիլել Լոնտոնի եւ Մոսկուայի ժողովներուն միջոցին հայերու եւ օտարներու ո՛րեւէ միջամտութիւն, հայկական հարցի, հողային սահմանագծումի պահանջներով, եւ ապստամբական այս ողբերգակատակերգութեան երկրորդ արարուածը կը սկսի Պէհաէտտին Շաքիրի սադրանքներով:

Պէհաէտտին Շաքիր թէպէտ իր կառավարութեան անունով կը յայտարարէ, թէ ինք իբր միակ օրինաւոր կառավարութիւն, կը ճանչնայ Հայաստանի Փրկութեան Կոմիտէն, որուն պետին — Ս. Վրացեան — հրամանով ստորագրած է Ալեքսանդրապոլի դաշնագիրը, եւ հիմա վաւերացուած Հայաստանի Փրկութեան Կոմիտէի կազմած կառավարութեան ձեռքով, բայց այդ չի նշանակեր թէ հայերը կատարած կ'ըլլան ամբողջովին, այդ դաշինքով իրենց ստանձնած յանձնառութիւնները, Հայաստան այդ դաշինքով վասալ երկիր մը եղած էր Թուրքիոյ հովանաւորութեան տակ, Թուրքիոյ զինուորական օժանդակութեան արժանանալու համար պէտք էր նախ ստանձնուած պարտականութիւնները կատարել ամբողջովին, եւ Պէհաէտտին Շաքիր աղուէսի խորամանկութեամբ բաղձանքի քողով շղարշուած իր ԿԱՄԳԸ կը պարտադրէ Վրացեանի նոր կառավարութեան, միանգամ ընդմիջտ ազատուելու համար բոլշէփիկ կառավարութեան ուրիշ միջամտութենէն Հայաստանի սահմանային խնդիրներու եւ Ալեքսանդրապոլի դաշնագրին վերաքննութեան մասին, 1921 Մարտ 12ին Վրացեանը կը ստիպէ սա հեռագիրը քաշել Զիչէրինին:

1. — «Մոսկուայի քոնֆէրանսը իրաւասու չէ քննութեան առնելու Հայաստանի խնդիրները»:

2. — «Հայաստանի Յեղափոխական Կոմիտէի ներ-

կայացուցիչը եւ Սորհրդային Հայաստանի արտաքին գործերի ժողովրդական կոմիսարը իրաւունք չունին մասնակցելու Կոնֆէրանսին, քանի որ տապալուած է արդէն խորհրդային իշխանութիւնը»։ (Պետական արխիւ թիւ 89)։

Եւ ահա այս պատճառով է, որ Ա. Պէկզատեանի առաքելութիւնը դժուարութեան կը մատնուի, եւ չի կրնար մասնակցիլ Մոսկուայի խորհրդաժողովին։

Եւ ահա այս պատճառով է որ վիժեցաւ Կասեանի կողմէ մտերմաբար յայտնուած նպատակին գործադրութիւնը, որ էր չճանչնալ Ալեքսանդրապոլի դաշնագիրը. եւ կազմել նոր համաձայնութիւն, նոր դաշնագիր։

Այս հեռագրին կը յաջորդէ, երեք օր յետոյ, Մարտ 15ին Վրացեանի հեռագիրը Թուրքիոյ արտաքին գործոց նախարարութեան, զոր մէջ բերինք քիչ առաջ։

Աւ դեռ կը շարունակուի հայրենադաւ ողբերգութիւնը, միշտ Պէհաէտտին Շաքիրի համագործակցութեամբ եւ պնդումով։

1921 Մարտ 26ին Վրացեան կը հեռագրէ Անգլիոյ արտաքին գործոց նախարարութեան.

«Սնդրում եմ յայտնել Լոնտոնի Կոնֆէրանսին հետեւեալը.

«Հայաստան ուզում է ապրել հաշտ եւ բարեկամաբար հարեւան Թուրքիայի հետ, ուստի ցանկանում է, որ Լոնտոնի Կոնֆէրանսի որոշումները առիթ չտան փոխադարձ անվստահութեան կամ դժգոհութիւնների Թուրքիայի եւ Հայաստանի միջեւ»։

Եւ երբ Պօղոս Նուպար Փաշա եւ Ա. Ահարոնեան կը ներկայանան Լոնտոնի Կոնֆէրանսին, մէկը պնդելու. որ Սէվրի դաշնագիրը գործադրութեան դրուի. եւ միւսը (Ա. Ահարոնեան) որպէսզի Ալեքսանդրապոլի դաշնագիրը չեղեալ նկատուի իբր ապօրինի գործ. Լոնտոնի Սորհրդաժողովը, փոխանակ անոնց պահանջները նկատի առնելու, կը բաւականանայ ցոյց տալով Հայաստանի նոր կառավարութեան Մարտ 25ի հեռագիրը եւ քաղաքավարօրէն երկու հայ պատուիրակները կ'արտաքսէ ժողովէն։

Ահա թէ քաղաքական-դիւանագիտական գետնի վրայ ո՛րքան չարիք հասցուց Հայաստանի եւ հայ ժողո՛-

աչքին առջեւ եւ թուրք բանակի ներկայութեանը Ալեքսանդրապոլ, հայը ջարդելի հայուն ձեռքով, եւ այսպէս շարունակած ըլլալ 1915ին սկսուած հայկական բնաջրնջումի ծրագրուած եղեւնի, կը մնար մեծ նպատակին իրագործումը. որ էր նոր կազմուած կառավարութեան ձեռքով վաւերականութեան դրոշմ մը տալ Ալեքսանդրապոլի անվաւեր դաշնագրին, եւ միջազգային հանգամանք տալ անոր, եւ երկրորդ արգիլել Լոնտոնի եւ Մոսկուայի ժողովներուն միջոցին հայերու եւ օտարներու ո՛րեւէ միջամտութիւն, հայկական հարցի, հողային սահմանագծումի պահանջներով. եւ ապստամբական այս ողբերգակատակերգութեան երկրորդ արարուածը կը սկսի Պէհաէտտին Շաքիրի սագրանքներով:

Պէհաէտտին Շաքիր թէպէտ իր կառավարութեան անունով կը յայտարարէ, թէ ինք իբր միակ օրինաւոր կառավարութիւն, կը ճանչնայ Հայաստանի Փրկութեան Կոմիտէն. որուն պետին — Ս. Վրացեան — հրամանով ստորագրած է Ալեքսանդրապոլի դաշնագիրը, եւ հիմա վաւերացուած Հայաստանի Փրկութեան Կոմիտէի կազմած կառավարութեան ձեռքով, բայց այդ չի նշանակեր թէ հայերը կատարած կ'ըլլան ամբողջովին, այդ դաշինքով իրենց ստանձնած յանձնառութիւնները, Հայաստան այդ դաշինքով վասալ երկիր մը եղած էր Թուրքիոյ հովանաւորութեան տակ: Թուրքիոյ զինուորական օժանդակութեան արժանանալու համար պէտք էր նախ ստանձնուած պարտականութիւնները կատարել ամբողջովին. եւ Պէհաէտտին Շաքիր աղուէսի խորամանկութեամբ բաղձանքի քողով շղարշուած իր Կ.Ա.Մ.Բ. կը պարտադրէ Վրացեանի նոր կառավարութեան, միանգամ ընդմիջտ ազատուելու համար բոլշէվիկ կառավարութեան ռեւէ միջամտութենէն Հայաստանի սահմանային խնդիրներու եւ Ալեքսանդրապոլի դաշնագրին վերաքննութեան մասին, 1921 Մարտ 12ին Վրացեանը կը ստիպէ սա հեռագիրը քաշել Չիչէրինին:

1. — «Մոսկուայի քոնֆէրանսը իրաւասու չէ քննութեան առնելու Հայաստանի խնդիրները»:

2. — «Հայաստանի Յեղափոխական Կոմիտէի ներ-

կայացուցիչը եւ Խորհրդային Հայաստանի արտաքին գործերի ժողովրդական կոմիսարը իրաւունք չունին մասնակցելու Կոնֆէրանսին, քանի որ տապալուած է արդէն խորհրդային իշխանութիւնը»։ (Պետական արխիւ թիւ 89)։

Եւ ահա այս պատճառով է, որ Ա. Պէկատեանի առաքելութիւնը դժուարութեան կը մատնուի, եւ չի կրնար մասնակցիլ Մոսկուայի խորհրդաժողովին։

Եւ ահա այս պատճառով է որ վիժեցաւ Կասեանի կողմէ մտերմաբար յայտնուած նպատակին գործադրութիւնը, որ էր չճանչնալ Ալեքսանդրապոլի դաշնագիրը, եւ կազմել նոր համաձայնութիւն, նոր դաշնագիր։

Այս հեռագրին կը յաջորդէ, երեք օր յետոյ, Մարտ 15ին Վրացեանի հեռագիրը Թուրքիոյ արտաքին գործոց նախարարութեան, զոր մէջ բերինք քիչ առաջ։

Ու դեռ կը շարունակուի հայրենադաւ ողբերգութիւնը, միշտ Պէհաէտտին Շաքիրի համագործակցութեամբ եւ պնդումով։

1921 Մարտ 26ին Վրացեան կը հեռագրէ Անգղիոյ արտաքին գործոց նախարարութեան.

«Խնդրում եմ յայտնել Լոնտոնի Կոնֆէրանսին հետեւեալը.

«Հայաստան ուզում է ապրել հաշտ եւ բարեկամաբար հարեւան Թուրքիայի հետ, ուստի ցանկանում է, որ Լոնտոնի Կոնֆէրանսի որոշումները առիթ չտան փոխադարձ անվստահութեան կամ դժգոհութիւնների Թուրքիայի եւ Հայաստանի միջեւ»։

Եւ երբ Պօղոս Նուպար Փաշա եւ Ա. Ա.հարոնեան կը ներկայանան Լոնտոնի Կոնֆէրանսին, մէկը պնդելու, որ Սէվրի դաշնագիրը գործադրութեան դրուի. եւ միւսը (Ա. Ա.հարոնեան) որպէսզի Ալեքսանդրապոլի դաշնագիրը չեղեալ նկատուի իբր ապօրինի գործ, Լոնտոնի Խորհրդաժողովը, փոխանակ անոնց պահանջները նկատի առնելու, կը բաւականանայ ցոյց տալով Հայաստանի նոր կառավարութեան Մարտ 26ի հեռագիրը եւ քաղաքավարօրէն երկու հայ պատուիրակները կ'արտաքսէ ժողովէն։

Ահա թէ քաղաքական-դիւանագիտական գետնի վրայ ո՛րքան չարիք հասցուց Հայաստանի եւ հայ ժողո-

վուրդին Փետր. 18ին Վրացեանի դաւաճանական մերե-
նայութիւններով կազմակերպուած յիմար ապստամբու-
թիւնը, եւ անոր ձեռքով կաղմուած քառասնօրեայ նոր
կառավարութիւնը:

Թ.

Շահան Փետր. 18ի դաւադրական ապստամբութիւնը
կը նկատէ քանի մը արոտապատ դաշնակցականներու յի-
մար գործը, եւ կը մերժէ բուն Դաշնակցութեան պա-
տասխանատուութիւնը այդ ձեռնարկին մէջ:

Միւս կողմէն Ռ. Դարբինեան 1930 Փետր. 18ի Հայ-
րենիքին մէջ կը գրէ «Եթէ փետրուարեան ապստամբու-
թեան նախօրեակին Հ. Յ. Դաշնակցութեան Բիւրօն հնա-
րաւորութիւն ունենար հաւաքելու եւ դիրք ճշդելու, վրձ-
ռականօրէն պիտի ընդդիմանար ապստամբութեան ձեռ-
նարկին»: Եւ կը յաւելու «Միջազգային քաղաքական պայ-
մանները այդ պահուն ծայր աստիճան աննպաստ էին
Հայաստանի համար, եւ որ ապստամբութեան յաջողու-
թեան իսկ պարագային ո՛չ միայն չէր կրնար տեւական
ազատութիւն եւ անկախութիւն ապահովել, այլ նոյնիսկ
կրնար վտանգել հայ ժողովուրդի փիզիքական գոյութիւնը»:

Կը խորհիմ, թէ Դարբինեանի այս հաւաստումը կը
հակասէ ճշմարտութեան: Ըստ իս. այդ ապստամբու-
թեան ծրագիրը յղացուած եւ ծրագրուած է կա՛մ Նոյ.
28 — Դեկտ. 1ին եւ կամ Դեկտ. 1—2ին, եւ յղացուած է
թուրքերու գիտութեամբ եւ համագործակցութեամբ: Ո-
րովհետեւ այդ ապստամբութենէն միակ օգտուողը Գա-
րապէքիրը պիտի ըլլար, քանի որ այդ ապստամբութեան
հետեւանքով կազմուելիք առժամեայ կառավարութեան
ձեռքով պիտի կրնար օրինականացնել Դեկտ. 2ին ապօ-
րէն կերպով ստորագրուած Ալեքսանդրապոլի դաշնագի-
րը, եւ այդ առժամեայ կառավարութեան քաջած հե-
ռագիրները լոնտոն եւ Մոսկուայ, Թուրքիոյ սրտին վրա-
յէն պիտի վերցնէին այդ ժողովներուն մէջ Հայկական
Խնդրին առթիւ օտար միջամտութիւններէ զգացած մղ-
ձաւանջը:

Երբ իրողութիւնները դիտենք այս անկիւնէն, պիտի համոզուինք, թէ Բիւրօի անդամներէն շատեր, եթէ ոչ ամբողջութիւնը դեռ կը գտնուէին Երեւան: Եւ չեմ խորհիր թէ Վրացեան խորհրդակցութիւններ չունեցաւ անոնց հետ, մանաւանդ անոնց հետ. որոնք իրեն պէս հակառակ էին անանց պատերազմելու Հայաստանի կառավարութիւնը յանձնելու ըղշէվիկներուն: Ամէն պարագայի, եթէ նոյնիսկ պահ մը ընդունինք, թէ այդ ոճրագործ ձեռնարկին միակ պատասխանատուն է Վրացեան եւ խմբակը, այդ չի նշանակեր, թէ ամբողջ Գաշնակցութիւնը պատասխանատու չէ, քանի որ Գաշնակցութիւնը յետոյ իւրացուց այդ կատարուած չարաշուք իրողութիւնը, իրեն կուսակցական գլխուն, պսակ մը հիւսելու համար այդ ապտամբութեան զոհուած 20,000 հայերու արիւնէն բուսած դափնիներով:

Վրացեան, ապտամբական գործին ձեռնարկելէ առաջ, համոզուած էր, թէ անկարելի պիտի ըլլար ներքին ուժերով տեւական յաջողութիւն մը ձեռք բերել: Ան հոգիով կը հաւատար, թէ Ալեքսանդրապօլի գաշնագրին Ծրդ յօդուածով խոստացուած թրքական զինուորական օգնութիւնը պիտի հասնէր շուտով. եւ այդ ուժին յենելով միայն գործի կը ձեռնարկէր: Իր յոյսերը ի դերեւ կ'ելլեն: 1921 Մարտ 14ին Հայաստանի կառավարութեան նախագահ Ս. Վրացեան, Գարապէքիւրին դիմում կը կատարէ պաշտօնապէս եւ կ'ըսէ.

«Հաղորդել մեզ, թէ արդեօք Ա.գգ. Մեծ Ժողովի կառավարութիւնը հնարաւոր է գտնում հասցնել Հայաստանին զինուորական օժանդակութիւն, եւ եթէ կարող է ի՞նչ չափով եւ եղանակով. եւ ի՞նչ ժամանակամիջոցում»:

Այս պաշտօնական դիմումնագրին մէջ նորէն կը շեշտուի հետեւեալ պարագան.

«Ոոյն դիմումը անելով Հայաստանի կառավարութիւնը հիմնուում է այն բարեկամական յարաբերութիւնների վրայ, որոնք հիմք են դրուած Ալեքսանդրապօլի գաշնագրից սկսած»:

Աւելորդ է ըսել, թէ Վրացեանի եւ իր ժամանակաւոր կառավարութեան այս դիմումները ապարդիւն կ'անցնին: Թուրքը իր նպատակին հասած էր: Ի՞նչ փոյթ իրեն այլեւս, թէ հայերը զիրար կը ջարդեն կուսակցամոլ կատաղութեամբ...:

Եւ Վրացեան այս ռերագործ արկածախնդրութեան կը դիմէր, գիտնալով եւ խոստովանելով հանդերձ, թէ «Թուրք գործիչները կ'ուզենային հայկական հարցը դարձնել հայ-թրքական անմիջական յարաբերութիւնների առարկայ, վստահ, որ երէ իրենց հայերու հետ մնան երես առ երեսի, միշտ էլ միջոց կը գտնին իրենց ուզածը ընդունիլ տալու»:

Շահան, հիմնուելով Վրացեանի այս խոստովանութեան, եւ ապստամբութեան պարագաներուն վրայ, իր «Ալեքսանդրապոլի դաշնագրէն 1930ի կովկասեան ապստամբութիւնները» հատորներուն Ա.ին երրորդ գլուխը կը վերջացնէ սա տողերով.

«Փետրուարեան ապստամբութիւն» ու «Փրկութեան կոմիտէն» փաստօրէն կարծէք մտածուած առաքելութիւն մը ունենային — ծնիլ եւ ապրիլ հայ արիւնի մէջ ա'յնքան ատեն միայն, որ խորհրդաժողովները (Մոսկուայի եւ Լոնտոնի) բացուին ու գոցուին, մինչեւ որ թուրքերը փրկեն Ալեքսանդրապոլի դաշնագիրը:

»Ու փրկուեցաւ Ալեքսանդրապոլի դաշնագիրը, հայու մը ձեռքով, փրկուեցաւ հայութեան գերութիւնը յաւերժացնող այդ դատավճիռը, որ մեր նորագոյն պատմութեան մէջ զոյգը պիտի կազմէ Կարսի անկման անջընջելի ամօթին:

«Եթէ Վրացեան գիտէր եւ կը խոստովանի, թէ «Թուրք գործիչները կ'ուզենային հայկական հարցը դարձնել հայ-թրքական անմիջական յարաբերութիւնների առարկայ, վստահ որ երէ իրենց մնան հայերի հետ երես առ երեսի, միշտ էլ միջոց կը գտնին իրենց ուզածը ընդունիլ տալու»:

«Պարտաւոր է կրել նաեւ «երեսառերեսութեան» պատասխանատուութիւնը: Որովհետեւ իր ձեռքերուն

կը վերաբերի այն դաշոյնը, որ խրեցաւ հայութեան եւ Հայաստանի սրտին, եւ որ «Ալեքսանդրապօլի Դաշնագիր» անունն ունի:

«Եւ այդ դաշոյնը խրեցաւ հայութեան սրտին, ջրը-դեղուելով հայու ձեռքով թափուած հայու արեան մէջ»:

1921 Փետր. 18ի ապստամբութեան պարագլուխ Ս. Վրացեան իր ծրագրին հիմերը դրած էր աւագուտ հողի վրայ, եւ անոր հետեւութիւնները հաշուած էր տղայամբրտօրէն, եւ հեռատեսութեան կարողութենէն զուրկ դիւանագէտի մը կողմնակի եւ շիւ նայուածքով դիտած էր վաղուան գալիք պատահականութիւնները, Թողունք որ Ս. Վրացեան ինքն արտայայտուի իր գրչով:

«Քաղաքականութիւնը հաշիւ է, Հաշուենք եւ տեսնենք ի՞նչն է աւելի շահաւոր մեր ժողովուրդին համար. Ասենք, թէ նաեւ մեր «դաւաճանութեամբ» ռուսը հեռացաւ Կովկասից, եւ յետոյ նորէն եկաւ: Ի՞նչ կարող է լինել հետեւանքը, Հաւանաբար մի քանի տասնեակ կամ մի քանի հարիւր «դաւաճան» ղեկավարներ կախազան պիտի բարձրանան, հրացանի պիտի բռնուին կամ Սիպիր պիտի քսորուին, ժողովուրդը կը մնայ անձեռնմխելի. . . գոնէ մինչեւ այժմ այսպէս է վարուեր ռուսը»: (Ս. Վրացեան՝ Խարխափումներ, էջ 144):

Այս արկածախնդրութեան մէջ Ս. Վրացեանի սպասումներն ու ենթադրութիւնները չիրականացան: Եւ տեղի ունեցաւ հակառակը:

Թուրքերը իրենց տեղէն չշարժեցան գալ օգնելու համար աթոռամոլներու կատարած դաւաճանական ձեռնարկին, ընդհակառակն, Ալեքսանդրապօլի դաշնագրին միջազգային օրինականութիւնը ձեռք բերելէ վերջ, անոնք յարեցան բոլշէփիկներուն:

Ռուսերը ժամանակ չունեցան, համաձայն իրենց սովորական վաղընջուց վարուելակերպին «մի քանի տասնեակ կամ մի քանի հարիւր դաւաճան ղեկավարներ կախազան հանելու, հրացանի բռնելու կամ Սիպիր քսորելու», որովհետեւ երբ 1921 Ապրիլ 2ին բոլշէփիկները վերատիրացան Հայաստանի, բոլոր ղեկավար դաւաճան-

ները՝ Ս. Վրացեանէն սկսեալ, վատաբար փախած էին դէպի Պարսկաստան. եւ հակառակ Ս. Վրացեանի հաշուազիտական քաղաքականութեան, այդ արկածախնդրական դաւաճանութեան պատիժը կրեց «անծեռնմխելի» նկատուած արիւնքամ ժողովուրդը, զո՞հ տալով իր 20,000 զաւակները «դաւաճանութեամբ» պատրաստուած, ըստ Վրացեանի ասութեան, այդ ոճրագործ ծեռնարկին:

Վրացեան իր փախուստի միջոցին, իր ետեւէն քաշած տարած էր խուճապահար ժողովուրդէն տասնեակ հազարաւորներ, զորս թողուց Արագի ափը, դառն թըշուառութեան մէջ: Ահա ինչ որ այս մասին կը պատմէ ՀԱՅԿՈ (Արգար Կարապետեան), ուրիշ դաջնակցական մը.

«Փրկութեան Կոմիտէի նախագահ Վրացեան գացած էր արդէն [Պարսկաստան]. իբր թէ կարգադրութիւններ ընելու համար: Ան ապահով է այլեւս պարսկական հողի վրայ, Շարաթներ կ'անցնին, ժողովուրդը կը սպասէր Արագի ափին, օրական 10—15 զո՞հ տալով:

«Ռուբէն Փաշան, նստած Մեղրի, կահաւորուած սենեակին մէջ, օրական մի քիչ գարի բաժնելու արտօնութիւն տալով կը գոհանար, իր կեանքն ու ուտելիքը ապահոված: Իսկ Մեղրիէն կուգային մէկ մէկ հացի փոխարէն ժողովուրդին վերջին ունեցածն ալ առնելու...»

«Իսկ Վրացեան, նախագահավայել կեանքով օր մը ձգեց բոլոր անոնք, որ իր ետեւէն քաշեր բերեր էր, ու իշխանի պէս փառաւոր ճամբորդութիւններով անցաւ արտասահման, իր փոխ-նախագահին, Յակոբ Տէր Յակոբեանի ձգելով բախտը հազարներուն» (Ս. հատոր, էջ 193—194):

Հերոսային չէ՞ք գտներ Ս. Վրացեանի այս դասալըքութիւնը եւ խուճապարար փախուստը:

Միայն չմոռնանք, թէ Ս. Վրացեան արտասահման անցնելէ առաջ, Պարսկաստանի մէջ գաղտնի համաձայնութեան եկած էր Սուլթանովի եւ իր աթոռագուրկ ընկերներուն հետ բրֆական օրլանքասիօնի նոր ուղիով մը: Զէ՞ մի որ «Բաղաբականութիւնը հաշիւ է» իրեն համար: Հաշուական տեսակէտով շատ վճարողին է իրաւունքը:

եւ Դաշնակցութիւնը իբր կուսակցութիւն իր Վրացեաններով, Դարբինեաններով, իր Ռուբէն փաշաներով, հայկական խնդիրը աճուրդի դրած էր քաղաքական-ընկերական հրապարակին վրայ. իրեն վերապահելով վաճառողի մենատիրութիւնը:

Ինչպէս տեսանք, Ս. Վրացեանի կողմէն կազմակերպուած եւ քրեական օրինակացիայի յաղթանակին եւ Թուրքիոյ շահերուն ծառայելու կոչուած Փետր. 18ի ապրստամբութենէն վերջ, անոր կողմէ Թավրիզի մէջ կայացուած դաւադրական համաձայնութիւնը աթոռագորկ Սուլթանովներու հետ, իր հակահարուածը եղաւ Պուրբէշի Դաշնակցական Ընդհ. Ժողովի որոշումներուն դէմ: Պուրբէշի ժողովը վերադարձ մը ըրած էր դէպի ռուսական օրինակացիա, եւ իր պատգամաւորները Ռիկայի մէջ երկու կողմերու հասկացողութեան հիմերու վրայ փրոթոֆոլ մըն ալ ստորագրած էին: Դժբախտաբար այդ հասկացողութիւնը անհետեւանք մնաց, Ինչո՞ւ: Այս ինչուն կարենալ բացատրելու համար պէտք է փնտռել թողուած Եան գլուխը:

1921 Յունուարի սկիզբէն սկսեալ Հայաստանի Խորհրդային իշխանութեան բռնած ահաբեկչական վարմունքը, ինչպէս տեսանք, արդիւնք էր խմորուելու վրայ եղող դաւաճանական ապստամբութեան, որուն բոլոր ներքին ծալքերուն տեղեկացած էր կառավարութիւնը, իր լրտեսներու ցանցով: Ու գիտենք, թէ ինչ եղաւ արդիւնքը: Այս անգամ ալ, երբ Լիթվինովի եւ Ս. Տէր Դարբիէլեան Ռիկայէն կը վերադառնան Մոսկուա, իրենց հետ բերելով Դաշնակցութեան հետ համերաշխութեան եւ համագործակցութեան ձիթենիի ճիւղը, իրենց սեղանին վրայ կը գտնեն Պարսկաստանի իրենց գաղտնի ոստիկաններու մէկ տեղեկագիրը, որով մանրամասն տեղեկութիւններ կը տրուէին դաւադրական այն գաղտնի խորհրդակցութիւններու մասին, զոր Ս. Վրացեան եւ Ռուբէն կ'ունենային Սուլթանովներու հետ, պատրաստելու համար հակառուս ապստամբութեան նոր ծրագիրներ, Կովկասեան երկիրներու մէջ:

Ինչ պիտի կրնար ընել Մոսկուա կամ Հայաստան, երբ Լիթվինօֆ եւ Ս. Տէր Դարբիէլեան, ձեռքերնին բռնած Դաշնակցութեան երկարած ձիթենին, յանկարծ կը տեսնեն, թէ այդ նոյն Դաշնակցութիւնը դաւաճանութեամբ դանակ կը սրէ անով դաշունելու համար գիրենք իրենց կռնակէն: Եւ Ռիկայի Պոլշէվիկ պատգամաւորները ստիպուեցան մէկ կողմ նետել ձիթենիի ճիւղը: Արդեօք ուղղամիտ Դաշնակցութիւնը տարբեր ընթացք պիտի ունենա՞ր այսպիսի պարագայի մը առջեւ:

Եւ պատահեցաւ, ինչ որ պիտի պատահէր, Պուրբէշի Ընդհ. Ժողովին ծրագրած բաղձանքները, եւ Ռուս օրհանրացիայի որոշումը ջուրն ինկաւ, շնորհիւ Վրացեաններու, Ռուբէններու, Դարբինեաններու դաւադրական գործակցութեանը Սուլթանովներու, Ալի Մարտան Թօփճիպաշիններու, Սուլթան Շաքմաներու, Իպրահիմ Չուլիքներու, Ճորտանիաներու, Չխենկելիներու նման աթոռագուրկ նախարարներու հետ, որոնք իրենց կորսուած աթոռներուն տիրանալ կարենալու միակ միջոցը Թուրքիոյ հետ համագործակցութիւնը ընդունած էին, եւ այդ դաւադրական դաւաճանութեան երեսէն ի զօրու մնաց Ալեքսանդրապօլի դաշինքը, որով շատ աժան գնով ու միայն ապագայի մեծ յոյսերով Թուրքիոյ ծախուեցաւ Հայաստան, թէպէտ անկախ? բայց բանակ ունենալու իրաւունքէն զրկուած, թէպէտ անկախ? բայց թուրք դեսպանին անմիջական հսկողութեան տակ (յօդ. 7), թէպէտ անկախ? բայց Սէվրի դաշնագիրն ուրանալու հարկադրուած (յօդ. 11), թէպէտ անկախ? բայց դատապարտուած հրաժարելու Թրքահայաստանի հողամասերու պահանջէն (յօդ. 3), թէպէտ անկախ? բայց դատապարտուած թոյլատրելու, որ թուրք կառավարութիւնը իրաւունք ունենայ ի հարկին «գինուորակտն արգելիչ միջոցներ ձեռք առնելու» Հայաստանի մէջ (յօդ. 14):

Եթէ այս է Դաշնակցութեան կողմէ բռնի ուժերու հարկադրանքի տակ կատարած անկախութեան արտը, եւ անոր հետեւանքները, եթէ այս է այս անկախութեան արտին երկրորդ օղակը կազմող Ալեքսանդրապօլի դաշ-

նագրին ձեռքով պահպանուելու կոչուած անկախութիւնը, ես կը թքնեմ այդ անկախութեան եւ զայն պահպանող ձեռքին վրայ:

Ժ.

Սուլթանովի բերնով 1926ին կատարուած յայտարարութենէն վերջ ալ դիմակները պատռուած են, եւ դերերը ճշդուած, երկնզած Դաշնակցութեան մէկ մասը, արեւմտահայը, կը քալէ ռուսական օրիանքացիայի ուղղութեամբ, եւ միւս մասը, արեւելահայ Պիւրօի անդամներ, թուրքական օրիանքացիայի ճամբով:

Դաշնակցութեան Ժ. Ընդհանուր Ժողովը որոշած էր երկու տարի յետոյ գումարել Ժ.Ա. Ժողովը, ուր պիտի վճռէր այդ երկու ուղղութիւններէն մէկին կամ միւսին վաւերացումը: 1926 Դեկտ. 29ին, Պիւրօն, առժամեայ ըլլալու պայմանով, կ'որոշէ, որ Ս. Վրացեան եւ Ռուբէն Տէր Մինասեան մասնակցին Կովկասեան Համադաշնակցութեան Պոլսոյ Կոմիտէի խորհրդակցութիւններուն, եւ որպէսզի Պիւրօի այս առժամեայ կարգադրութիւնը կարենայ արմատ բռնել, եւ Վրացեաններ, Ռուբէններ եւ Դարբինեաններ ժամանակ ունենան իրենց որդեգրած ուղղութեան նպաստաւոր գետին պատրաստել շարքայիններուն մէջ, թունաւորելով անոնց ուղեղները, եւ զանոնք դնելով կատարուած իրողութեան առջեւ, 1927ին գումարուելիք Ժ.Ա. Պատգամաւորական Ժողովը կը յետաձրգեն, զանազան պատրուակներով մինչեւ, 1929 թուականը:

Այս արողամով դաշնակցական ղեկավարները 1921ին Թավրիզի մէջ Կովկասեան Համադաշնակցութեան ծրագրին շուրջ գաղտնօրէն համաձայնութիւն գոյացնելէ վերջ այլեւս կ'աշխատին անոր հիմերը ամրացնել, Կարգախօսը նոյնն է Ս. Վրացեանի, ինչպէս Սուլթանովի համար, Դարբինեանի, ինչպէս Ալի Թօփեհպաշիի համար, Ռուբէնի, ինչպէս Սուլթան Շաքմանի համար: Անոնք զիրար կը հետապնդեն մոլի թրքասիրութեան ուղիով. իրենց քնարը մէկ թելով նոյն դաւանանքը կը հնչեցնէ,

կոչու Ռուսիոյ դեմ, քրեական բանակի օժանդակութեամբ: Կովկասեան Համադաշնակցութեան վարիչ-անդամներու կողմէ այս ուղղութեամբ կատարուած հրատարակութիւններէն քանի մը մէջըբերումներ:

«Բոլշէվիզմի դէմ կռուելու համար մենք մեծապէս պէտք ունինք հարեւան Թուրքիայի բարեկամութեանը, նոյնիսկ աչակցութեանը»:

ԴԱՐԲԻՆԵԱՆ, Հ. Ամսազիր

«Մենք պէտք է անկէղծութեամբ փնտռենք Թուրքիոյ հետ հաշտութեան ճամբան, որ անխուսափելիօրէն պիտի դառնայ համագործակցութեան ճամբայ»:

Ռ. ԴԱՐԲԻՆԵԱՆ, Դեգերումներ

«Թուրքիոյ շահերու տեսակէտէն Կովկասեան Համադաշնակցութիւնը, այնքան հզօր պիտի ըլլայ, որ կարողանայ թումբ հանդիսանալ Ռուսաստանի դէմ: Անհրանցես է բոլոր միջոցները սպառել, որպէսզի Թուրքիա վերադառնայ իր 1918ի վարած քաղաքականութեան»:

Ա. ԽԱՏԻՍԵԱՆ, Պասլերնիսա Նովոսի 15 Փետր. 1933

«Կովկասեան Համադաշնակցութիւնը կրնայ ըլլալ անփոխարինելի օժանդակ մը թրքական ծրագիրները յաջողցնելու համար»:

ՌԱՌԻՂ ԶԱՏԷ, Եեցի Կալկազ» 26 Սեպտ. 1923

«Թուրքիա միշտ պատրաստ է իր բանակները շարժելու դէպի Կովկաս, Ռուսերը քշելու համար, Կովկասեան ազգերու հետ միասին»:

Ռ. ԴԱՐԲԻՆԵԱՆ, Հայրենիք, 21 Սեպտ. 1924

«Բոլշէվիզմի դէմ կռուելու եւ մեր երկրում խաղաղ կեանք վերսկսելու համար մենք մեծապէս պէտք ունինք հարեւան Թուրքիայի բարեկամութեանը: Ուրիշ ելք չկայ: Հակաբոլշէվիկեան հայութիւնը հանդիսանում է

բուրժեւի բնական դաճակիցներէից մեկը: Այս հողի վրայ մենք հետեւեալեամբ կարող ենք համաձայնութեան գալ բուրժեւի հետ՝ նրանց եւ մեր օգտի համար: Ուրիշ ճանապարհ այսօր չկայ»:

Ս. ՎՐԱՅԵԱՆ, Խարխափումներ

Դաշնակցութեան մամուլն ու բեմը յատկացուած են այլեւս այս ցաւագար գաղափարաբանութեան բրօքականտին: Բայց 1926ին Պիւրօի կողմէ տրուած «առժամեայ» որոշումին տալ «տեւական» հանգամանք, այդ կը վերաբերէր գումարուելիք Ժ.Ա. Պատգամաւորական Ժոժովին: Հողը պատրաստ էր մասամբ, եւ բաւական միամիտներ շահուած իրենց գաղափարը իւրացնելու տրամադիր: Եւ ժողովը կը հրաւիրուի 1929ին, Թրքական գաղափարաբանութեան հեղինակներուն կը մնար այս ժողովէն հեռու պահել ընտրուած պատգամաւորներէն անոնք, որոնք իբր ուխտեալ Թրքատեացներ, պիտի ծառանային անգամ մըն ալ, եւ Վրացեաններուն, Դարբինեաններուն, Ռուբէն Փաշաներու երեսին պիտի պոռային. «անոնք որ զոն չուցին, իրաւունք չուցին այս մասին կարծիք յայտնելու»: Թրքամուլ խճրակը իր ձեռքն ունենայով Ալեքսանդրապօլի դաշնագրին 11րդ յօդուածը, որ զիրենք կը պարտաւորեցնէր կառավարութենէն (եւ ի հարկին ժողովներէն) հեռու պահել «երկու ազգերու անդորուրիւնը խանգարող ռուսասեր մարդիկը», Յունաստանի Շրջանային ժողովէն ընտրուած երկու յայտնի հակաթուրք պատգամաւորները, Գնթունի եւ Բագրեւանդեան, կ'արտաքսեն ժողովէն եւ ամէն միջոցի կը դիմեն զանոնք զրկելու համար իրենց պատգամաւորի իրաւունքէն: Եւ այս ժողովն էր՝ որ 1926ի Դեկտեմբերին, Պիւրօի կողմէ տրուած առժամեայ որոշումը կը հաստատէ, եւ կը տեւականացնէ կովկասեան Համադաշնակցութեան հետ իր գործակցութիւնը, սա հիման վրայ, թէ «մեր առաջին քսնամին Ռուսն է»:

Այս ամէնը տեսնելէ վերջ Շահան ալ կը ստիպուի վերջապէս գալ այն համոզումին, զոր մենք ունեցած

էինք Դաշնակցութեան մասին 1909ի Սելանիկի ժողովէն վերջ: Եւ կը յայտարարէ.

«Այս այն Դաշնակցութիւնը չէ այլեւս, որ թրքահայու թափած արիւնէն ծնաւ, ընդհակառակն այնպիսի Դաշնակցութիւն մը, որ այդ արիւնին հետ ունէ հարազատութիւն չունեցող, անոր մէջ կաթիլ մը արիւն չխառնած ճարպիկ մարդերէ կազմուած, կը թքնէր թափուած արիւններուն վրայ, Բէմալի դռները կը բախէր, ի խընդէր կորսուած աթոռներու» (Բ., էջ 168):

Բայց ժ.Ա. Պատգամաւորական ժողովին նպատակը չէր միայն վաւերացնել Պիւրօի կողմէն տրուած «առժամեայ որոշումը» կովկասեան Համադաշնակցութեան գործունէութեան մասնակցելու մասին: Ժ.Ա. Պատգամաւորական ժողովը կոչուած էր նաեւ արդարացնելու համար ժ. Պատգամաւորական ժողովին կողմէն տրուած «միայն թուրքին դէմ եւ ո՛չ Ռուսին» որոշումին դէմ վատաբար դաւաճանողները: Եւ արդարացուցին...

Եւ Սելանիկի մէջ Դաշնակցութեան վրայ Թալէաթի ձեռքով կատարուած քլիպսոսքիւնը իր հանդիսաւոր վաւերացումը գտաւ 1929ին Վիեննայի մէջ գումարուած ժ.Ա. Պատգամաւորական ժողովին կողմէ, որոշ մասնաճիւղերու կողմէ ընտրուած եւ փառանքու կողմէ կաշառուած եւ կամ անաբեկուած պատգամաւորներու որոշումով, եւ պարտադրուեցաւ քաղաքական հասունութենէ զուրկ, եւ տրամաբանելու կարողութեան անընգունակ շարքայիններու, որոնք ոչխարամտօրէն հետեւեցան իրենց նուիրումին ու նպատակին տրամագծապէս հակառակ ազգադաւ ուղղութեան, յանուն կուսակցամով կարգապահութեան:

Եւ ոչ որ համարձակութիւնը ունեցաւ պատուելու վարագոյրը — բացի Շահանէ եւ ուրիշ բանի մը գիտակից ընկերներէ, որոնք չկրնալով հանդուրժել Դաշնակցութեան ծագման պատճառին եւ նպատակին դէմ եղեւնագործուած այս դաւաճանութեան, հրաժարելով քաշուեցան կազմակերպութենէն — եւ սկսան դիմակազեր-

ծել Ս. Վրացեանը, իր Խարխափումներով ցուցադրած հակասութիւններուն մէջ:

Ոեւէ ուղղամիտ եւ պարկեշտ կազմակերութիւն, որ նուիրուած է ժողովուրդի եւ հայրենիքի շահերուն, պէտք է նախ մտահոգուած ըլլայ ժողովուրդի փիլիքրական գոյութեան պահպանութեամբ, դեռ անոր ազատութեան գաղափարին իրականացման չձեռնարկած: Որովհետեւ անիմաստ պիտի ըլլար ժողովուրդ մը ջարդել տալէ վերջ գերեզմաններու մէջ փնտռել անոր հետապնդած ազատութիւնը: Անհատներու եւ ժողովուրդներու, ինչպէս նաեւ անասուններու ինքնապաշտպանութեան բնազդը այս պատճառով միայն ինքդինքը կը ցուցադրէ, եւ գործքի կը վերածուի: Հաւանաբար Ս. Վրացեան այս մտածելակերպէն տարուած 1923 - 25ի իր Խարխափումներուն մէջ կը յայտարարէ թէ «Ինքնապաշտպանութեան բնազդը հայ ժողովուրդին պէտք է թելադրէ բարեկամանալ ամենավսանգաւոր բեմամու հետ» (էջ 144):

Արդ, կ'արժէ որ պահ մը կանգ առնունք այս քաղաքական դաւանանքին առջեւ, եւ վերլուծումի մաղէ անցնենք, տեսնելու համար, թէ ինչ կորկոտ դուրս պիտի գայ անկէ:

1917էն ի վեր — այս թուականը կ'առնենք միմիայն մեր պետականութեան գաղափարին սկզբնաւորութենէն սկսելու համար — հարց մը դրուած էր մէջտեղ. ո՞րը պէտք էր ընտրել, Պոլշէվիք Ռուսիա՞ն, թէ իթթիհատական կամ Բէմալական Թուրքիան: Եւ հայութեան ամենաջախջախիչ մեծամասնութիւնը այդ երկընտրանքէն դուրս ելած էր վճռականօրէն, «Ռուսերուն հետ» իր որոշումովը:

1. — Երբ Սէյմը կը կազմուի 1917ին, Սէյմին անդամակցող Դաշնակցականներէն Յ. Քաջազունի, երբ կը բանածեւէ հայ ժողովուրդին եւ Դաշնակցութեան դիրքը, օրուան հրատապ խնդիրներուն հանդէպ, կը յայտարարէ բեմէն.

«Անդրկովկասի Սէյմը կոչուած է, մի կողմից վերականգնել երկրի կարգն ու անդորրութիւնը... միւս կող-

միջ՝ յենարան տալ Ռուսաստանի հանրապետութեան՝ զոբի մէջ Անդրկովկասը, իբրեւ մասնիկ հզօր ամբողջութեան, պէտք է գտնէ արժէքաւոր տեղի» :

2. — Երբ 1918ի Մայիսին երեւանի իշխանաւորները թուրքի ետքալանին տակ «անկախութիւն» յայտարարելու հարեկման ենթարկուած էին, հայ ժողովուրդը ՄԻԱՀԱՄՈՒՄԻ ծառայաւ այդ ստիպումին դէմ, եւ պահանջեց չքաժնուիլ Ռուսիայէն, ուր միայն կը տեսնէր իր այսօրուան փրկութիւնը, եւ վաղուան ապահովութիւնը, եւ այսպէս կը յայտարարուէր. «Ռուսին հետ եւ թուրքին դէմ» իր քաղաքական եւ ազգային դաւանանքը :

3. — 1920 Նոյեմբերի վերջը, երբ հայկական հանրապետութիւնը, զոհ՝ թրքական ճնշումի տակ իր յայտարարած անգոյ անկախութեան հետեւանք մեկուսացումին, ինքզինքը կը գտնէր նոր երկրնտրանքի մը առջեւ — կամ պատերազմ Բոլշէվիկ Ռուսիոյ դէմ, կամ խաղաղ ճամբով իշխանութեան յանձնում բոլշէվիկներուն — ազգին բոլոր ներկայացուցիչները, դաշնակցականներն ալ միասին, — բացի քանի մը դաւաճաններէ — կը նախընտրէին խաղաղօրէն յանձնուիլ Ռուսիոյ, չոս ալ նոյն քաղաքական-ազգային դաւանանքը. «Ռուսին հետ» :

4. — Ալեքսանդրապօլի դաւաճանական դաշինքի ստորագրութենէն վերջ, եւ Փետր. 18ին ապստամբութեան օրերուն Պուրէշի մէջ գումարուած Դաշնակցական ժողովը կ'որոշէ ըլլալ «Ռուսին հետ եւ թուրքին դէմ» եւ մինչեւ Ռիկա պատուիրակներ կը դրկէ հասկացողութեան լեզու գտնելու համար բոլշէվիկ ներկայացուցիչներու հետ: Ու հակառակ այս ընդհանուր եւ ազգային միահամուռ բաղձանքին, միայն Վրացեան-Ռուրէն-Դարբինեան խմբակն են, որ 1921 Ապրիլին, այսինքն Պուրէշի ժողովին գումարման օրերուն, դաւադրաբար Սուլթանովներու հետ համախորհուրդ, «թուրքին հետ եւ Ռուսին դէմ» դաւանանքը կը կաղապարեն, օր մըն ալ, 1929ին Դաշնակցութեան ԺԱ. Պատգամաւորական ժողովին մէջ յայտարարելու համար թէ՛

Եւ կը կառչին կովկասեան Համադաշնակցութեան ուխտի դաւաանանքին .

«Թուրքից ապաւինելով զեցեի ուժով կռուիլ Ռուսից դէմ»:

Ողջմութիւնն ու տարրական տրամաբանութիւնը մեզի կը թելադրեն սա դիտողութիւնները .

«Նշատելով իրարմէ ազգերն ու անոնց պետութիւնները, որովհետեւ ազգ եւ պետութիւն նոյն բաները չեն, ըսինք, թէ ինքզինքնիս կը գտնենք երկու պետութիւններու առջեւ, ռուսական եւ թրքական, եւ պահ մը ընդունինք, թէ այս երկուքն ալ ոխերիմ թշնամիներ են մեզի հանդէպ. Արդ, անոնցմէ ո՞ր մէկն է մեր «ԱՌԱՋԻՆ» եւ «ԱՄԵՆԱՎՏԱՆԳՈՒՒՈՐ» թշնամին .

Դարերէ ի վեր մեր «առաջից» եւ «ամենավսանգաւոր» թշնամին թուրք կառավարութիւնն էր . Ասի ոչ ոք կրնայ ուրանալ . Հինգ դարերէ ի վեր անոր արիւնարբու լուծին տակ . տառապեցանք, կողոպտուեցանք, ստրուկներ, ռայաներ դարձանք, անոնք մեր աղջիկներով իրենց հարէմները զարդարեցին, եւ մենէ իբր Տուրք յափշտակուած տղաքներով ստուարացուցին Ենիշէրիներու բանակները, անոնք մեր արիւն քրտինքովը ապրեցան, նոյնիսկ մեր հացին վերջին պատառը խլելով մեր բերնէն . եւ ի լրումն այս ամէնուն, 1915ի զանգուածային տեղափոխութիւններով եւ ջարդերով անապատի վերածեցին բռնազրաւուած Հայաստանը, եւ զանի ամայութեան մատնեցին, խորհելով, թէ հայերը բնաջնջելով ջնջած կ'ըլլան նաեւ հայկական հարցին իրաւական հանգամանքը . Թուրքը մեր երէկի «ԱՌԱՋԻՆ» եւ «ԱՄԵՆԱՎՏԱՆԳՈՒՒՈՐ» թշնամին էր . Բայց 1918էն ի վեր այլեւս դադրած էր «ամենավտանգաւորը» ըլլալէ, քանի որ այսօրուան Թուրքիոյ մէջ, եւ նոյնիսկ Հայաստանի բռնազրաւուած հողամասերուն վրայ զանցառելի թիւով հայեր միայն կ'ապրին . Անիկա այլեւս իր «ամենավտանգաւոր»ութեան հան-

գամանքը կորսնցուցած էր, ջարդուելիք հայերու պակասին հետեւանքով, եւ մենք հարազատ եւ զտարիւն հայերս, երէկի մեր այդ «ամենավտանգաւոր» թշնամիին դէմ վրէժխնդրական զգացումներ միայն ունինք, յարգած ըլլալու համար մեր միլիոնաւոր նահատակներուն սրբազան յիշատակը, եւ մենք այդ զգացումը կ'ապրեցնենք մեր մէջ, «ոչ թէ (մեր) ուղեղը պահել(ով) մեր սրտում, ինչպէս կը գրէր Վ. Նաւասարդեան. Ռուբէն Տէր Ա'ինասեանի հրատարակած «Հայ-թրքական կնճիռը» գրքին յառաջաբանին մէջ. այլ «մեր սիրտը տեղափոխել(ով) (մեր) ուղեղին մէջ»:

Երբ թուրքիոյ վերաբերմամբ մեր բռնած ուղղութիւնը կը վերլուծենք, եւ խնդիրը կը դիտենք այս անկիւնէն, ուրեմն, Ա. Վրացեանի համար գոնէ, մեր այսօրուան ու վաղուան «առաջին» եւ «ամենավտանգաւոր» թշնամին կը մնայ ռուսը, եւ այդ թշնամին կրնայ վնասակար ըլլալ մեզի այսօր ալ, վաղն ալ, քանի որ մնացորդ հայութեան մեծագոյն զանգուածը կեդրոնացած է կովկասեան Հայաստանի սահմաններուն մէջ, Ուրեմն իր այդ համոզումով, իբր պարկեշտ գործիչ, որ ժողովուրդին պահպանութեան կենսական հոգեբովը մտահոգուած է, պէտք էր ինքզինքը պարտաւոր զգար, հայ ժողովուրդին «ինքնապաշտպանութեան բնագոյն»էն տարուած, բարեկամանալ ոչ թէ թուրքին, որ մեր առաջին թշնամին էր երէկ, այլ ռուսին, այդ «ամենավտանգաւոր» եւ ամէնէն զօրաւոր ռուսին, որ կրնար այսօր ալ, վաղն ալ վնասել մեր ժողովուրդի ֆիզիքական գոյութեան: Չէ՞ մի որ, ըստ իր դաւանանքին, «ինքնապաշտպանութեան բնագոյնը հայ ժողովուրդին պէտք է թելադրէ բարեկամանալ ամենավտանգաւոր թշնամու հետ»:

Ինչո՞ւ ուրեմն այս հակասութիւնը հաւատամքի եւ գործքի միջեւ: Ինչո՞ւ կը թողու «ամենավտանգաւոր թշնամիին» բարեկամութիւնը, երթալ սեղմելու համար երէկ ազգին համար վտանգաւոր, բայց այսօր ակոսները փառուած տկար թշնամիին հետ: Այդ ինչուին բացատրու-

Թիւնը պէտք է փնտռել Ս. Վրացեանի եւ իր խմբակին արուսպագոսութեան հիւանդութեան մէջ:

Իթթիհատի հետ համագործակցութեան օրերուն, Դաշնակցութիւնը ուրացաւ ազգ եւ հայրենիք, եւ ամէն սրբութիւն որ կապուած էին այդ երկուքին հետ. վարակուած տիրելու, միահեծան իշխելու, ազգին մէջ առանձին եւ անջատ ազգ մը ըլլալու, եւ քանի մը երեսփոխանական աթոռներ ունենալու հիւանդութենէն:

Ս. Վրացեան եւ խմբակ չեն ուզեր բարեկամանաձ «ամենավտանգաւոր» թշնամիին հետ, որովհետեւ 1921 Դեկտ. 2ի համաձայնութենէն վերջ Խորհրդային Հայաստանի կողմէն իրենց տրամադրուած աթոռները «երկրորդական ու չորրորդական» էին եւ ոչ թէ նախագահական եւ նախարարապետական թիկնաթոռներ: Ահա այս պատճառով է, եւ միայն այս պատճառով, որ դաւադիր խմբակը իր բարեկամական ծեռքը կ'երկնցնէ ամէնատրկար թշնամիին, անոր օգնութեամբ եւ դինուորական օժանդակութեամբ կռուելու համար «ամենավտանգաւոր» եւ ամենագօր թշնամիին, ռուսին դէմ, զանի Կովկասէն դուրս քշելով, նորէն տիրանալու համար կորսուած բիկնարուներուն, զոր թուրքերը միայն կրնային տրամադրել իրենց, պայմանաւ որ երապրուած յաղթանակով Հայաստան բերուած Թուրքիան, Ա. Խատիսեանի բաղձանքին համաձայն, «վերադառնայ իր 1918ի վարած բաղաբականութեան»: այսինքն բռնադատումով նորէն անկախութեան ահս յայտարարել տայ իրենց, որովհետեւ այդպիսի արտով մը միայն կրնան վերատիրանալ իրենց կորուսած աթոռներուն:

Այսպիսի ըմբռնումներու մէջ, այլեւս գոյութիւն չեն կրնար ունենալ «ինքնապաշտպանութեան բնագոյ»ի նման թելադրանքներ: Անոնց նպատակը արտ ճանիլ է՝ անոնք զիտեն, թէ թուրքերուն Հայաստան մտնելը կը նշանակէ բնաջնջումը միացորդ հայութեան: Ի՞նչ փոյթ իրենց, Անոնք աթոռներ կ'ուզեն ունենալ, հոգ չէ թէ աւերակ Հայաստանի մը մէջ, եւ ջարդուած Ժողովուրդի մը դիակներուն վրայ. . .

Շահանի հատորներուն մէջ յատկանշական իրողութիւն մը մը կայ, որ կուգայ հաստատել տարիներէ ի վեր յայտնաբերուած իմ սա համոզումս, թէ Դաշնակցութիւնը 1907ի Իթթիհատի հետ իր կազմած համաձայնութենէն եւ 1909ին Սելանիկի մէջ Թալէաթի ձեռքով թլփատուելէն ի վեր ուրացած է, 1890ին իր ծնունդին պատճառ տուող շարժառիթները — «բօքսփիլ քրական խայսառակ լուծը» — եւ կուսակցութիւնը վերածած խանութպանութեան:

Այդ իրողութիւնը մեզի կը պատմէ 1927ի Յունվարին Փարիզի մէջ գումարուած դաշնակցական ժողովի մը մասնակցող դաշնակցական մը:

Օ Բլեք սը Լիւն սրճարանի վերնայարկը գումարուած այդ ժողովին նախագահն է Ա. Վրացեան, զեկուցանողը Վահագն Բրմոյեան, իսկ նիւթը «Կովկասեան ժողովուրդներու եւ մեր հարեւաններուն հետ լեզու կարելի՞ է գտնել թէ ոչ»:

Այդ ժողովին ներկայ են Պիւրօի անդամներ, որոնց շարքին եւ Շահան:

Զեկուցումը ըլլալէ վերջ ընկերները կը հրաւիրուին իրենց կարծիքները յայտնելու վիճարանութեան առարկայ խնդրոյ մասին:

Շահան ոտքի կ'ելլէ. եւ կը սկսի խօսիլ.

«Վերցուցէք Կովկասեան ժողովուրդները» կամ «հարեւաններ» մակագրութիւնները այս հարցին վրայէն, որ բերեր էք մոլորցնելու բարեմիտ շարքերը, Այսօրուան հարցը թուրքին հետ լեզու գտնելու եւ գործակցելու հարցն է, Ըսէք ընկերներուն այն ինչ որ է, գոնէ անգամ մը անկեղծ եւ պարկեշտ եղած ըլլալու համար անոնց հանդէպ, Ժ.րդ Ընդհ. ժողովը իր խօսքը շատ պարզ եւ աներկղիմի բառերով ըսած է թո՛ւրքին եւ Թուրքիոյ մասին: Ոչ որ իրաւունք ունի Ընդհ. ժողովի որոշումը արհամարհելու, եւ ինչ որ վատագոյնն է, անոր բացարձակապէս հակառակը գործելու — ինչ որ կը փորձուի այս-

տեղ, այս երեկոյ, խարդախ բանածեւերու տակ, միշտ բարեմիտ բայց միշտ անտեղեակ պահուած շարքերուն համամտութիւնը կորզելու քայլի մը համար, որուն միայն դէմ պիտի ըլլային անոնք: Ընկերներ, խօսեցէք — ո՛վ որ պիտի ուզէ արտայայտուիլ — թուրքին հետ գործակցելու կամ չգործակցելու, թուրքին հովանիին տակ ըողջէվիկներուն դէմ զէնքով կռուելու կամ չկռուելու մասին: Այդ է հարցը»:

Կ'երեւի, թէ կ'ըսէ «Կր Յիւլեմ-ի հեղինակը, Շահանի սոյն մերձացումին դէմ փորձուելիք պաշտպանողականին մէջ կանխաւ «շրափնէլի դերը» յանձնուած էր Ռուբէն Տէր Մինասեանի, որ բեմ կ'ելլէ «սպառնալից դէմքով», ու ստիպուած այլեւս դիմակը մէկ կողմ նետել, կը խօսի, կը խօսի ժամ մը, բառեր, անիմաստ բացատրութիւններ, անկապակից դատողութիւններ...: Եւ այս ամենուն մէջ մէկ հասկնալի պարբերութիւն, երբ Ռուբէն կը յայտարարէ.

«ԱՒԵԼԻ ԿԸ ՆԱԽԸՆՏՐԵՄ ԱՆՊԷՏԻԻ ԿԵԱՆՔԸ, ԲԱՆ ՊԱՏՈՒԱՒՈՐ ՄԱՀԸ»:

Ներկան իր խօսքը շարունակելով, կը գրէ.

«Ըսուած էր շատ դառն եւ մահացու ճշմարտութիւն մը: Նոպաներն իրենց տազնապնէրով անոր համար պիտանի են միայն, որ թագնուած ճշմարտութիւնները դուրս գան:

«Շատ ուշ էր եւ անկարելի այլեւս սեւէ կարկտան, ծածկելու ճշմարտութիւնն այդ բառերուն սեւ ճիւղողութիւնը, ինչ որ ի գուր փորձեց ընել Արշակ Զամալեան, հին հնակարկատի մը վարպետութեամբ» (Բ., էջ 228):

Սահմակեցուցիչ է եւ ահաւոր հրապարակով, ու բեմէն կատարուած այս խոստովանութիւնը. « աւելի կը նախընտրեմ անպատիւ կեանք, քան պատուաւոր մահը»... (?):

Եւ «Կր Յիւլեմ»ի հեղինակը կը շարունակէ իր նկարագրութիւնը.

«Կը յիշեմ դարձեալ շաքաթ մը յետոյ, նոյն սրահին մէջ Շահանին պատասխանը Ռուբէնին «անպատիւ կեանք»ի դաւանանքին: Կրակէ անէծք մը խլուած՝ յա-

նուն պատուաւոր մահուան նահատակուող Մշեցիութեան բերաններէն, կախուած՝ երբեմն յանուն «պատուաւոր մահ»ի զիրենք ծեծող, ոչխարն ու եզը ծախել ու զէնք գնել տուող Ռուբէնի զլուխին:

«Նայեցէք անոր ու ճանչցէք, եթէ կրնաք, անոր որ տարիներով Մուշ մնաց. խարազանը հայ գիւղացիի գլխին, անոր ծախել տալով լծկանը, որպէսզի պատուով մեռնի փոխանակ անպատիւ ապրելու: Այն Մշեցիին, որ դարերով գիտցած էր ապրիլ, առանց հանդուրժելու Ռուբէնի այս օրուան հռչակած անպատիւ կեանքի գոյնին ու կշիռին: Վկայ... բոլոր Գէորգ Չավուշները, որոնք Ռուբէնի սպասած չէին լեռներն իյնալու:

«Ըսէ, Ռուբէն, ինչո՞ւ գացիր Մուշ: Անո՞ր համար որ երբ Մուշն ու Մշեցին նահատակ ձգած ետեւէդ, օր մը հասնիս Փարիզ եւ «անպատիւ կեանքը նախընտրես պատուաւոր մահէն»:

«Ասկէ աւելի ինչ ուրացում եւ նախատինք բոլոր անոնց հասցէին, որ անպատիւ չապրելու համար պատուաւոր մեռան:

«Ձէ՞ որ այն օրերուն, երբ իրր «պատուաւոր մահ»ի խարազանաւոր առաքեալ կը պտտէիր, Մշեցին, եթէ կը հանդուրժէր ո՛րեւէ անպատուութեան, զէթ զայն կըրնար արդարացնել հազար հազարներով հայ բազմութիւններու գոյութիւնը պահպանելու պատճառարանութիւններով ու փաստով:

«Ըսէ. Ռուբէն, ո՞րն է եւ ո՞ւր է քու արդարացումն այսօր, երբ թուրքի եսթաղանին տակ ոչ Մուշ մնաց, ոչ Մշեցի»:

Այդ իրիկուն Ռուբէն Տէր Մինասեան կը յայտարարէր իր դաւանանքը.

«Աւելի կը նախընտրեմ անպատիւ կեանք, քան պատուաւոր մահը»:

Այդ իրիկուն Ռուբէն իր մէջ կը մարմնացնէր Օսմ. Դօմէթի Դաշնակցութիւնը: Այդ իրիկուն Դաշնակցութիւնն էր որ կը խօսէր Ռուբէնի բերնով...:

«ԱՒԵԼԻ ԿԸ ՆԱԸՆՏՐԵՄ ԱՆՊԱՏԻԻ ԿԵԱՆՔԸ ՔԱՆ ՊԱՏՈՒՒՈՐ ՄԱՀԸ»:

Դաշնակցութեան կուսակցական պատմութենէն դուրս մնացած այս անպատիւ եւ սահմակեցուցիչ դրուագը պէտք եղածէն աւելի նիւթ կը պարունակէ իր մէջ, հաստատող թէ՛

1. — Հայ Բեղափոխութեան մէջ ռուսահայ ինտելիգենտ տարրին մուտքով արուեստականացած յեղափոխութեան նպատակն է եղած, ինչպէս շատ տարիներ առաջ գրած ենք ապրեցնել կարգ մը պորտաբոյժ եւ թափառաշրջիկ լիսրներ, որոնց համար ազգ եւ հայրենիք գոնութիւն ունին միմիայն իբր շահագործումի հում նիւթեր:

2. — Թէ անոնք տրամադիր եղած են շարունակ հայկական դատ եւ հայկական իրաւունք ծախել Լիթթի-հատին, քանի մը երեսփոխանական աթոռներու համար:

3. — Թէ անոնք պատրաստ գտնուած են ամէն անգամ ներկայացող առիթը շահագործելու, եւ ի հարկին Հայաստանը վասալ դարձնելու կամ ծախելու Գարապէքիներու, այդպէս կարենալ ծախու առնելու համար իրենց ուզած աթոռները:

4 — Թէ Դաշնակցութիւնը իր Սելանիկեան շրջափոխութենէն վերջ չէ՛ խղճահարած 1921 Փետր. 18ի դաւենակցականապէս կազմակերպուած ապստամբութեան տուած 20.000 հայ զոհերու արիւնէն, եւ ընդհակառակը, դեռ մինչեւ այսօր այդ արիւնը իբր հերոսութեան (!) ապացոյց, շահագործումի իբր աղբիւր կը գործածէ: Չի խղճահարիր Թաւրիզէն 1921ին Հայաստան զրկուած «Պանգուխտ խումբի» ջարդ ու փշուր կոտորուելէն, ու այդ առթիւ կարգ մը հայ գիւղերու սովահար կոտորակու մէն, եւ հազարներով կասկածելիներու արքայանքէն ու քանտարկութենէն:

5 — Թէ անոնք, Դաշնակցութեան այն ղեկավարները, որոնք իրենց կազմակերպութեան ծնունդ տուող պատճառն ու նպատակը ուրացած, 1930ին, թուրքերուն հետ եւ անոնց աջակցութեամբ, կազմակերպած ապստամբութեան հետեւանքով, առանց խղճահարութեան պատճառ դարձան հազարաւորներու դժբախտութեան, մահուան եւ արքայանքի: Ոչ ով հետեւ այդ ամէնուն, արիւ-

նին, արցունքին եւ անէծքին մէջ իրենց փնտռածը քիկ-
նարուներ էին, եւ ո՛չ թէ ժողովուրդին գոյութիւնը:

Եւ անոնք մեր ժամանակակից պատմութիւնն ալ
խարդախեցին, իրենց ուզածն ու յարմար տեսածը մի-
այն հրամանելով բարեխօս ! շարքայիններու եւ ՍՍԲՈՒԵ-
ԼԷ ՉՅՈՒՆՈՂ ժողովուրդին:

Եւ խարդախեցին Հայաստանի եւ Հայկական Հար-
ցին վերաբերեալ դաշնագրերը, եւ Գ. Լազեան իր «Հա-
յաստան եւ Հայ Դատը ըստ Դաշնագրերու» հատորին
մէջ դիտարկեալ մոռացութեամբ, տեղ չտուաւ Սեյանիկի
մէջ Իթթիհատի եւ Դաշնակցութեան միջեւ կնքուած դաշ-
նագրին, իսկ Ալեքսանդրապօլի դաշնագիրը դրաւ խե-
ղաթիւրուած վիճակով, կարենալ անկէ ծագած գայթակ-
ղութիւնն ու ամօթը ծածկելու համար շարքայիններէն
ու ժողովուրդէն:

Եւ այս կուսակցական անպատիւ խարդախութիւն-
ներն ու գրական անպարարութիւնները տեղի կ'ունենա-
յին Վրացեանի այն հրապարակային յայտարարութենէն
վերջ, թէ «աւելի լաւ է զիսկնալ դառն եւսմանս իրենք բան
օրօրուիլ լաղցր ստեղծ», (Հայրենիք, 1932 Յունվար 1):

Ոչ, պ. Ս. Վրացեան եւ խմբակ, դուք յանուն ձեր
կուսակցական շահերուն, յանուն թլփատուած Դաշնակ-
ցութեան կուսակցական տիրապետական հակամտերուն
անպատկառօրէն խաբեցիք շարքայիններն ու հայ ժողո-
վուրդը, ձեր շարքայինները օրօրեցիք «բաղցր ստերով»
եւ դաւաճանեցիք Հայ Դատին եւ արիւնին, Սեյանիկի
մէջ Իթթիհատին ծախելով 1909ի Կիլիկեան ջարդերու
գոհ 30,000 նահատակներու արիւնը, եւ 1921 Գեկա 2ին
Ալեքսանդրապօլի մէջ Դարապէքիքին ծախելով Սէվըր,
Թուրքիոյ կողմէ բռնագրաւուած մեր հայկական հողա-
մասերուն տիրութեան իրաւունքը, եւ գերիի դիրքին
մէջ դրիք Հայաստանը, որուն բարեբախտաբար կառա-
ւարութիւնը օր մը առաջ յանձնուած ըլլալով բոլշէվիկ
իշխանութեան, Դարապէքիք չկրցաւ ձեր վիզին անցընե-
լիք ժանգոտած շղթան անցընել խորհրդայնացած Հայաս-
տանի վիզին:

Դուք դաւաճանեցիք հայ ժողովուրդին, իրարու յա-

ջորդող դաւադրական ապստամբութիւններով, պատճառ դարձաք շատ շատերու արիւնին, կեանքի կորուստին. նկատողութեան շաւիք անոնց «ինքնապաշտպանութեան բնազդը», անոնց ինքնապահպանութեան կամքը. եւ զանոնք արուեստական յեղափոխութեամբ դէպի մահ առաջնորդեցիք, այսպէս զրկելով հայրենիքը աշխատող եւ շինարար ձեռքերէ:

Դուք դաւաճանեցիք հայ ժողովուրդին, համոզել ճարտարւորելով թէ ռուսն է մեր «ամենավտանգաւոր» թշնամին, եւ փոխանակ համաձայն ձեր դիւստապիսական(?) համոզումներուն, ջանք թափելու «բարեկամանայ» այդ թշնամիին հետ, ձեր թրքական օրիանթացիայի դիտումնաւոր մոլորանքէն տարուած, Տօն Քիշօթեան հերոսութեամբ պատերազմի հրաւէր կարդացիք Հիւսիսի Հսկային, եւ դուք ստեցիք շարունակ, եւ ձեր սուտերով օրօրեցիք ու թունաւորեցիք շարքայիններու մաքուր հոգիները, որոնք դեռ մինչեւ այսօր անգէտ կը մնան ձեր դիմակաւոր խաղերու ամբողջութեան: Դուք ձեր սուտերը իբր ոսկեգօծ դեղահատներ կլլել տուիք անոնց եւ ժողովուրդին մէկ մասին, անոնց դրամները քաշելու իբր միջոց, եւ այդպէս դաւաճանած եղաք Հայ Յեղափոխականութեան կոչումին եւ ոգիին դէմ:

Դուք դաւաճանեցիք ազգին եւ հայրենիքին դէմ, ձեր ազգադաւ գործութէութեամբ, ձեր կուսակցական գործելակերպով եւ 1907էն ի վեր բան մը չփոխեցիք ձեր բարիքէն, որ եղաւ պայքար մը ազգին դէմ, պատրիարքութեան դէմ, կաթողիկոսութեան եւ առաջնորդներու դէմ, թաղականութեան եւ հոգաբարձութիւններու դէմ, Հայրենիքին եւ անոր խորհրդային իշխանութեան դէմ: Եւ այդ պայքարներուն մէջ ձեր հետապնդած նպատակները եղան ազգ մը ըլլալ ազգին մէջ. աթոռներ եւ թիկնաթոռներ գրաւել: Եւ այս նպատակներուն հասնելու համար գործածեցիք միեւնոյն միջոցները, ահաբեկումները, եւ տնտեսական ձեռնարկի ճամբով, ազգային սրբութիւններուն, ազգային իտէալի ուրացում եւ վաճառում դուրսի շուկաներու վրայ: Չէ՞ մի որ քաղաքա-

կանութիւնը հաշիւ է ձեզի համար: Եւ ինքզինքնիդ տրամադրեցիր շատ վճարողին:

Դուք դաւաճանեցիր Հ. Յ. Դաշնակցութեան 1890—1906 թուականներուն ապրած յեղափոխական ոգիին եւ կեանքին դէմ, երբ անիկա, այսինքն Հ. Յ. Դաշնակցութիւնը, մտահոգուած ժողովուրդին տառապանքով զէնքը ձեռքին պատուաւոր մահը կը քարոզէր գերադասել անպատիւ կեանքէն: Դուք Իթթիհատի հետ ձեր գործակցութենէն եւ Սեյանիկի մէջ Հ. Յ. Դաշնակցութիւնը թըլփատելէ վերջ անպատիւ կեանքը նախընտրեցիր պատուաւոր մահէն, թքնելով Հ. Յ. Դաշնակցութեան անցեալին, եւ պատուաւոր մահով մեռնող հերոսներու արիւնին վրայ:

Եւ այս ամէնը ըրիր աթոռ ու թիկնաթոռ զրաւելու հիւանդութենէն տարուած:

Եւ մէկ դարման կայ այդ հիւանդութեան համար:

Որպէսզի Դաշնակցութիւնը կարենայ վերադառնալ 1890—1906ի Հ. Յ. Դաշնակցութեան ապրած նպատակին եւ կոչումին, տեղին է կրկնել հոս Ատնան Մէնտէրէսի խօսքը, ուղղուած Հալք կուսակցութեան եւ ըսել, թէ Դաշնակցութիւնն ալ «պէտք է նետէ իր գլխէն «ԻՇԽԱՆՆՈՒԹԵԱՆ ԼԻԻԱՆԴՆԵՐԷ», այսինքն զանոնք, որոնք իրենց կորուսած թիկնաթոռներուն վերադառնալու համար կը շահագործեն շարքայիններու միամիտ դիւրահաւանութիւնը, եւ ազգասէրի վստահութիւնը, զանոնք մոլորցնելով:

Ժամանակին ճոն Հէյ կը գրէր.

«Կուրուսթեան կրնանք ներել, բայց պէտք է հարուածենք ստորնութիւնը»:

Հեղինակին այդ ընկերական դաւանանքը մեզի իբր ուղեցոյց ծառայելու կոչումն ունի, երբ նկատի կ'առնուի խաբուած շարքայիններու կուրութիւնը եւ վրացեաններու ահբոյս սվարի ստորնութիւնները:

Այլեւս Պոլսոյ եւ Սփիւռքի հայութիւնը կրցեր էր բաւական որոշ տեղեկութիւններ ծեռք բերել այն մեծ ողբերգութեան շուրջ, որ երկու տարիներէ ի վեր (1918—1920) տեղի կ'ունենար Երեւանի մէջ եւ շրջակայքը, ուր գաղթահայութիւնը ենթարկուած էր նօթի ու քաղցի, ջարդի. թալանի եւ համաճարակի. շնորհիւ Դաշնակցութեան մենատիրական բռնապետութեան, անոր արկածախնդիր քաղաքականութեան, անոր աններելի սխալներուն եւ մոլորանքին, Այդ ողբերգութեան վերջին արարուածը խաղցուած էր Ալեքսանդրպօլի դաշնագրին ստորագրութեամբ եւ Երեւանի կառավարութեան ղեկը յանձնուելով հայ բոլշէվիկ հատուածին:

Այդ օրերուն, ամէն կողմ, զգուանքի ու արհամարհանքի պոռթկում մը սկսած էր ժայթքել Դաշնակցութեան շուրջ. եւ հայ ժողովուրդի կատաղութեան ալիքը կը բարձրանար Դաշնակցական գործիչներու դէմ:

Ահա այդ օրերուն էր. որ Դաշնակցութեան Պոլսոյ պաշտօնական օրկանը ձակասամարտ, իր շուրջ գոռացող փոթորիկէն ազդուած, իր 1920 Դեկտ 26ի խմբագրականով կ'ըսէր.

«Այն ժողովուրդը, որ ծնունդ տուաւ Հ. Յ. Դաշնակցութեան, եթէ ուզէ իսկ զայն ուրանալ, կրնայ ըստեղծել աւելի ահարկու կազմակերպութիւն մը. բոլոր բախտախնդիրները, այլասերածները եւ ցնորամիտ նորընձաները խելքի մերելու համար»:

Մենք այդ օրերուն շատ լաւ կը հասկնայինք այդ սպառնական տողերուն տակ թաքնուած միտք բանին. բայց ուզելով այդ հատուածը գործածել ի նպաստ մեր ազգայնական դատին՝ ընդդէմ ապագայնացած Դաշնակցութեան, հետեւեալ կերպով կ'արտայայտուէի Արեւիեան Մամուլի Փետր. 23ի թիւով:

«Կեանքիս ընթացքին առաջին անգամն է, որ Դաշնակցական թերթի մը մէջ կը հանդիպիմ ա՛յնքան լուրջ, ազգայնապէս ա՛յնքան նպատակայարմար ողջմտութեան մը, Բայց այդ տողերուն մէջ ազգին կողմէ

Դաշնակցութեան ուրացումը, պէտք է մերկացնել իր թէ-
Ա.Կ.Ն.ՈՒԹԵՆԷՆԷՆ, Որովհետեւ մանաւանդ տասներկու տա-
րիներէ ի վեր Դաշնակցութեան ունեցած ազգադաւ գոր-
ծունէութիւնը տեսնելէ եւ անոր աղիտաբեր ու կործա-
նարար հետեւանքները մեր մորթին վրայ եւ մեր հոգի-
ներուն մէջ կրելէ վերջ, Դաշնակցութեան գոյութիւնը
չուրանալ, եւ զայն դատապարտութեան աթոռին վրայ
չհրաւիրելը պիտի ըլլար այս ազգին համար ՅԻՄԱՐՈՒ-
ԹԵԱՆ ԳԵՐԱԴՐԱԿԱՆԸ:

«Բայց այդ ուրացումէն վերջ, ծանօթ բախտախնդիր-
ները, այլատեսները եւ ցնորամիտ բոլոր նորնծաները խել-
քի բերելու համար» աւելի ահարկու կազմակերպութիւն
մը պէտք չկայ ընաւ: Այդ ակնկալուած կազմակերպու-
թիւնը ազգն է, եւ պէտք է ազգը ըլլայ միայն...»:

Կը խորհիմ, թէ մանաւանդ այսօր, այլեւս Դաշնակ-
ցութիւնը ազգին եւ զինքը ծնցնող ժողովուրդին անունով
խօսելու իրաւունքը չունի: Որովհետեւ ան նախ զինքը
ծնող ժողովուրդը, իր մայրը ուրացաւ, ուրացած ըլլալով
իրեն ծնունդին հայրութիւնը, այսինքն զինքը ծնցնող
պատճառը եւ նպատակը: Այդ նպատակն էր ազատել հայը
քրեական լուծէն: Սելանիկի եւ Ալեքսանդրապօլի մէջ իր
ինքնութիւնն ու նպատակը ուրացող, եւ իր իսկական ա-
նունէն հրաժարող «Օսմ. Քօմիթէի Դաւեակցութիւնը», իր-
րեւ անհարազատ զաւակը այս ազգին, կը մեղանչէ երբ
հայ ժողովուրդին անունով կ'ուզէ խօսիլ, զանի առաջ-
նորդելու համար դէպի քրեական օրիակնապաշտ, որ գծուած
է Սուլթանովներու կողմէն, ի վնաս հայ ժողովուրդի
ազգային շահերուն եւ աւանդութիւններուն: Այսպէս,
Դաշնակցութիւնը փոխանակ հայը ազատելու թրքական
լուծէն, այդ լուծէն ազատուած հայութեան վզին թրքա-
կան գերութեան շղթան կը բերէր:


Իմ ազգային, քաղաքական եւ յեղափոխական գոր-
ծունէութիւնս 1888էն ի վեր ձեւակերպուած է դաւա-
նանքի մը վրայ, որ պատմականօրէն ազգիս ապրած դա-
ւանանքն է եղած: Իմ ազգայնականութիւնս (nationa-
lisme) երբեք չեմ շփոթած ազգայնամոլութեան (chovi-
nisme) հետ, հաւատացած եմ եւ կը հաւատամ, թէ ազ-


գայնականութիւնը կը խրտչի քաղաքական մարդուն կուսակցական ներմտութիւններէն եւ շահախնդրութիւններէն. եւ անվերապահօրէն կը հետապնդէ հայրենիքին եւ ազգին շահերը, նոյնիսկ ի վնաս իր անձնական շահերուն: Ահա այս ոգիէն առաջնորդուած պատնէշին վրայ ելայ ազգային գաղափարի դրօշը վեր բռնած: Եւ ճամբաս շարունակեցի ազգայնական յեղափոխականի մը վայել հպարտութեամբ: Ես երբ եկեղեցականութենէ կը հրաժարէի, հրաժարականս սա տողերով կը վերջացնէի. «կը մնամ այդ ուխտիս հաւատարիմ, նուիրուած ազգային ծառայութեան, ազգային ազատագրութեան դատին, ու հայրենիքիս փրկութեան ուխտաւոր գինուորի մը պէս»:

Հայրենիքի ու ժողովուրդի կարելի է ծառայել մի միայն մարքուր եւ անպղտոր ազգայնականութեամբ: Ի զուր չէր, որ ժամանակին Բրոնի. Բարնէլիւթթի գրեց. «Ազգայնականութիւնը վարդապետութիւնն է ազգային համերաշխութեան, ինչպէս Ընկերավարութիւնը կամ գ.նէ Սէնտիքալիզմը վարդապետութիւնն է փրօձեխիոնեյ համերաշխութեան»: Ազգայնական գետնի վրայ այդ համերաշխութեան հակառակորդները մերօրեայ Ազգայններ են, Արամեանները, կամ Եասեանները, որոնք թուրք անունով ծպտուած ծուռնալներով մատնութիւններու զիջան, դաւաճանեցին ազգային դատին եւ անոր ուխտաւոր գործիչներու դէմ, իրենց անձնական շահուն համար: Խնդիրը կը տարբերի այսօր, երբ զործ կ'ունենանք կուսակցութեան մը հետ, որ հայ անունի տակ, եւ հայու դիմակով կը դաւաճանէ մեր հայրենիքին եւ անոր վերելքին, ինքզինքը ի սպաս ղնելով թրքական օրիանթացիաի վարպետներուն, միմիայն կորսնցուցած աթոռներ ձեռք բերելու մտահոգութենէն տարուած:

Այս կէտին վրայ կը հրաւիրենք հայ ժողովուրդին ուշագրութիւնը, քանի տակաւին ուշ չէ:


Ահա թէ ինչու մենք իրարմէ կը զանազանենք 1890ի ծնունդն եղող Հ. Յ. Դաշնակցութիւնը, 1907ի-«Օսմ. Բօմիթէի Դաշնակցութենէն». Հ. Յ. Դաշնակցութեան վերապահելով մեր յարգանքն ու համակրանքը. եւ այսօր-





ԳԻՆ 50 ԱԷՆԹ

Un.



A ii
79838